

ԴԻԴԱՆԱՅԻՆ ԱՂԲԻԻՐՆԵՐ
FONTI ARCHIVISTICHE

ՆԱՄԱԿՆԵՐ ԵՒ ՈՒՂԵՐՁՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԲԵՐ ԴԻՒԱՆՆԵՐԷ

Բազմավէպի մեր յարգարժան ընթերցողներուն կը ներկայացնենք նամակներու չափազանց արժէքաւոր փունջ մը՝ գրուած Մխիթարեան Ուխտի Վենետիկի եւ Վիեննայի զոյգ ճիւղերու միաբաններու կողմէ, 1836-1989 երկարող տարիներու ընթացքին: Այս ժողովածոն քաղուած է Հայաստանի ազգային արխիւներու եւ ԳԱԹ Եղիշէ Չարենցի Անուան Գրականութեան եւ Արուեստի Թանգարանի մօտ պահուող դիւաններէն:

Վենետիկի միաբան նամակագիրներու շարքէն կարող ենք յիշել հետեւեալները. Հայր Միքայէլ Չամչեան, Հայր Իգնատիոս Կիւրեղեան Աբբաճայր, Հայր Մինաս Նուրիխան, Հայր Աթանաս Տիրոյեան, Հայր Գաբրիէլ Նահապետեան, Հայր Ստեփանոս Սարեան, Հայր Սարգիս Յովսէփեան, Հայր Քերոբէ Չրաքեան, Հայր Կարապետ Տէր-Սահակեան, Հայր Ղեւոնդ Տայեան, Սրապիոն Վրդ. Ուլուհոճեան Աբբաճայր, Հայր Եղիա Փէչիկեան, Հայր Գրիգոր Սարգսեան, Հայր Մեսրոպ Ճանաչեան, Հայր Ներսէս Տէր-Ներսէսեան, Հայր Պօղոս Անանեան, Հայր Սահակ Ճեմճեմեան, Հայր Լեւոն Զէքիեան: Այս հաւաքածոյին մաս կը կազմեն նաեւ Վենետիկի միաբանութեան շարքերէն հեռացած երեք կարկառուն դէմքեր. Հայր Սիմոն Երեմեան, Հայր Սուքիաս Էփրիկեան, Հայր Մկրտիչ Պոտուրեան:

Վիեննայի ճիւղի միաբաններէն նշելի են՝ Գերպ. Արսէն Վրդ. Այտընեան Աբբաճայրը, Հայր Գրիգորիս Գալէմքեարեան, Հայր Յակոբոս Տաշեան, Հայր Վարդան Մելքիսեղեկեան, Հայր Ներսէս Ակինեան, Գերպ. Մեսրոպ Արք. Հապոգեան Աբբաճայրը:

Ոչ Մխիթարեան նամակագիրներէն կ'առանձնանան. Արսէն Վարդապետ Խօրասանճեան եւ Գարեգին Սրուանճտեան:

Մխիթարեան Հայրերու կողմէ գրուած նամակները ուղղուած են Արամ Ազնաւուրեանին, Արարատ Ղարիբեանին, Արշակ

Զօպանեանին, Արսէն Վարդապետ Պէրպէրեանին, Արփիար Արփիարեանին, Աւետիք Իսահակեանին, Ահարոն Տատուրեանին, Գարեգին Լեւոնեանին, Գարեգին Եպս. Սրուանձտեանին, Ամենայն Հայոց Կաթողիկոսներ՝ Մատթէոս Բ Իգմիրլեանին, Գէորգ Ե Սուրէնեանցին, Խորէն Մուրադրեկեանին, Գէորգ Զ Զօրէքճեանին, Վազգէն Ա. Պալճեանին, Գիւտ Քահանայ Աղանեանին, Գրիգոր Խալաթեանին, Գրիգոր Զալսուղեանին, Դանիէլ Վարուժանին, Զապէլ Եսայեանին, Թորոս Ազատեանին, Լէոնին, Կ. Կոստանեանին, Համբարձում Առաքելեանին, Հայկ Պէրպէրեանին, Հայր Ղեւոնդ Ալիշանին, Հրաչ Երուանդին, Մ. Բարխուդարեանին, Մառի Աթմաճեանին, Միհրդատ Թիրաքեանին, Յ. Ս. Պալիօգեանին, Յակոբ Անասեանին, Յակոբ Ասատուրեանին, Ռաֆայէլ Իշխանեանին, Ռուբէն Սեւակին, Սարգիս Վարդապետ Աբրահամեանին, Սարգիս Քիւրքճեանին, Սուրէն Շտիկեանին, Սուրէն Քոլանճեանին, Վահան Մալգեանին, Վահէ Հայկին, Տիրատուր Տիկիճեանին, Ֆիլիպ Արփիարեանին:

Նամակները կ'անդրադառնան այլազան հարցերու. Հայր Միքայէլ Զամչեանի Վահան Հաւատոյ ուղղափառութեան Հայոց աշխատութեան նպատակի մասին: Մխիթարեան միաբաններ Հ. Գրիգոր Ալէքսոն եւ Հ. Ներսէս Սարգսեանի Հայաստան կատարելիք այցելութեան: Խոստովներ Հ. Ալիշանին յիշատակարաններ ունեցող ձեռագիրներ ընդօրինակելու, որոնք Սանահին, Հաղպատ եւ Լօռի Գաւառի գիւղերուն մէջ կը գտնուին:

Տարբեր խմբադրապետներու հետ նամակագրութիւններ: Փարիզի մէջ հրաւէր խորհրդակցական հանդիպման:

Խնդրանքներ Մխիթարեան Մատենադարանէն հատուածներ արտագրելու: Զմամուռ վանքին մէջ Դանիէլ ասորի վարդապետի Սղմոսաց Մեկնութեան հայերէն ձեռագրի յայտնաբերման մասին: Կ'ակնարկուի Վենետիկի մատենադարանի մէջ եւս պակսող Նոր Զուղայի մէջ 1650ին կատարուած Աստուածաշունչի թերակատար հրատարակութեան:

Հայկական Բարեգործական Ընդհ. Միութեան Կրթական Յանձնախումբի յօժարութիւնը, հանգուցեալ Խորէն Վրդ. Լազարեանի հիմնադրամով հրատարակելու Միջնադարեան հեղինակի անտիպ մէկ գործը:

Հայր Տաշեան գանգատ կը յայտնէ որ ո'չ Տրապիզոն ու Կարին հայրենիքը կրցած է ոտք կոխել եւ կը խորհրդածէ ըսելով

բայց կ'երեւայ գիտութեամբ զբաղիլը մեծ ոճիր մըն է եղեր ժԹ. դարուն վերջերը, որով մեծապէս վտանգաւոր՝ նաեւ հայրենիքն այցելել իբր 20 տարի բացակայ գտնուելէն ետքն ալ:

Առաջարկ Զապէլ Եսայեանին՝ *Խարախանեանի մասին «Il Popolo d'Italia»* օրագրի յօդուածը թարգմանելու եւ հրատարակելու: Ակնարկներ Հայր Սիմոն Երեմեանի գործակցութեան «-Պայքար»ի խմբագրութեան հետ, եւ համապատասխան վարձատրութեան գրութիւններու համար: Անդրադարձ Հայր Սիմոն Երեմեանի Լէօի մասին 70 էջնոց երկար ուսումնասիրութեան մը, ուղարկուած Արփիարեանի Յուսաբեր թերթին, որ չի հրատարակուիր Արփիարի մահուան պատճառով: Հայր Երեմեան կը գնահատէ Գրիգոր Զալխուշեանի ճիգն ու վաստակը որով կ'ուզէ Գամառ Քաթիպան անմահացնել, ջանալով տարածել անոր համբաւը:

Հայր Սահակ Ճեմճեմեան Արարատ Ս. Ղարիբեանին գրելով կը խնդրէ ցանկը Հայաստանի մէջ գտնուած հնատիպ գիրքերու երկրորդ օրինակներուն, որպէսզի համեմատելով Ս. Ղազարի երկրորդ օրինակներուն հետ, փոխանակութեամբ ամբողջացուի թէ Մայր Հայաստանի եւ թէ Ս. Ղազարի գրադարանի հաւաքածոները: Առաջարկ Արարատ Ս. Ղարիբեանին որ նուիրէ Ս. Ղազարի ճեմարանին Աճառեանի Արմատական բառգիրքը, որովհետեւ վանքի եղած օրինակը չափազանց մաշած է եւ գրեթէ անգործելի:

Հայր Եղիա Փէչիկեան դիմելով Լոնտոնի Հայ գաղութի վարչութեան Ատենապետ Պրն. Ս. Քիւրքճեանին կը խնդրէ, որ նպաստէ Մուրատ Ռափայէլեան վարժարանին տարեկան 1200 տոլարի գումարով մը, հնարաւորութիւնը ընձեռելով 3 ձրիավարժ սան որդեգրելու միջին արեւելքէն:

Հայր Մկրտիչ Պոտուրեան շնորհակալութիւն կը յայտնէ Ամենայն Հայոց Մատթէոս Բ Իգմիրլեան Կաթողիկոսին որ իր կոչով եւ լուսանկարով Կիլիկեան որբուկներու նուիրուած գեղեցկագոյն էջերը կազմեցին Գեղունիին մէջ:

Հայր Ներսէս Ակինեան շնորհակալական խօսքեր կ'ուղղէ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե Կաթողիկոսին, եռամեայ հիւրընկալ ասպնջականութեան համար, որուն շնորհիւ կը յաջողի նախնեաց բազմաթիւ Զեռագիրներ ժողովել ի բարգաւաճումն տոհմային գրականութեան, ինչպէս նաեւ իր երախտագիտութիւնը կը յայտնէ էջմիածնի մէջ վայելած սիրոյ եւ մեծարանքին համար իր պանդխտութեան ամբողջ ընթացքին: Հանդէս Ամսօրեայի խմբագրապետ Հայր Ներսէս Ակինեան կը տեղեկացնէ Ամենայն Հայոց

Կաթողիկոս Խորեն Մուրադբեկեանին որ «Հանդէս Ամսօրեայ» հայագիտական ուսումնաթերթը պիտի տօնէ 50-ամեայ յորելեանը, եւ կը դիմէ Վեհափառութեան եւ կը խնդրէ անոր օրհնութիւնն ու գնահատական խօսքերը, որոնք քաջալերանք պիտի ըլլան ուսումնաթերթի աշխատակիցներուն եւ ընթերցող-բաժանորդներուն: Հայր Ակինեան Հայկ Պէրպէրեանին ուղղած գիրին մէջ անդրադառնալով Հ. Յակոբոս Տաշեանին՝ կ'ըսէ թէ ունի միշտ կորով գրելու. բայց միականի է այժմ. ունի սեղանին վրայ մեծ աշխատութիւն մը – Տայք – Բարձր Հայք – Սեբաստիա, գրեթէ վերջացած, կարօտ միայն մանր յաւելումներու: Փափագս է որ օր յառաջ ի գլուխ հանէ այդ աշխատութիւնը եւ տայ տպագրութեան:

Հայր Գրիգոր Սարգսեան Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհուրդին դիմելով Ս. Ղազար մայրավանքի գրադարանին համար կը խնդրէ «Ձայնագրեալ Շարական, ի ձեռն Նիկողայոսի Թաշճեան, ի Հայրապետութեան Տ. Տ. Գէորգայ Դ Կաթողիկոսի ամենայն Հայոց, տպ. Էջմիածին, յամին 1877» գիրքը:

Մխիթարեան Միաբանութեան Աբբայ Սրապիոն Վարդապետ Ուլուհոճեան կը տեղակացնէ Ամենայն Հայոց Խորեն Ա. Կաթողիկոսին Մուրատ Ռափայէլեան Վարժարանի Հարիւրամեակը հանդիսաւոր տօնախմբութեամբ նշելու մասին, խնդրելով ներկայացուցիչ մը նշանակել Վեհափառութեան անունով:

Հայր Մեսրոպ Ճանաչեան կը դիմէ Թորոս Ազատեանին խնդրելով յօդուած մը Կոմիտաս Վրդ. ի մասին ԳԵՂՈՒՆԻԻ համար, պայմանով որ նորութիւններ ըլլան, քաղելով Պոլսոյ դիւաններէն, մասնաւորապէս անոր կեանքէն, ինչ ինչ գրուագներ որոնք անծանօթ են:

Հ. Սահակ Ճեմճեմեան գրելով Սուրեն Քոլանճեանին՝ նկատմամբ Դրանսիականիոյ պատմութեան խնդրած դիւանական նիւթերուն, կը հաղորդէ որ եթէ կը կարօտի որոշ թուական ունեցող նամակի մը, ինք կը ջանայ հանել դիւանէն ու օրինակել իրեն զրկելու համար: Կ'աւելցնէ թէ Դրանսիականիոյ ու Պաշտօնի վերաբերեալ շատ ու շատ նամակներ կան, մեծ մասամբ Միաբանական խնդիրներ են, պէտք է զանոնք կարդալ ու քաղել զուտ հայկական բնոյթ ունեցող հատուածները, ինչ որ երկար աշխատանքի կը կարօտի: Յաջորդաբար դիւանի մէջ փոքրիկ յիշատակութիւններու հանդիպելով, օրինակած կը ներփակէ: Կը

փոխանցէ նաեւ հունգարացի գիտաշխատողի մը անունը եւ հասցէն որ Դրանսիականիոյ գանազան դիւանները այցելած եւ անսպառ նիւթ հաւաքած է Հայոց մասին:

Անդրադարձներ կը գտնենք Ձեռագրաց յիշատակարաններու, հրատարակուած Տաղերու, Մխիթարեան տպարանի մէջ տպագրուելիք գիրքերու սակագիներուն, գիրքերու սրբագրութեան դժուարութեան, «Աստղիկ» գրական եւ գեղագիտական հանդէսի խմբագրի իսկական անուան, շնորհակալական եւ ցաւակցական գիրքերու, եպիսկոպոսական ընտրութեան առիթով շնորհաւորութիւններու, գնահատականներու «Շարական Հայաստանեայց եկեղեցւոյ» աշխատանքի մասին, Խարբերդի աշխարհագրական ու ազգագրական պատմութեան պատրաստութեան, Բազմալէպի խմբագրութեան կողմէ խնդրանք քերթուածներու՝ նուիրուած Դանիէլ Վարուժանին, Տանթէին տարբեր ամեակներու առիթով, նոյնպէս ԳԵՂՈՒՆԻ-ի Խմբագրութեան որոշումին նոր թիւ մը հրատարակելու, նուիրուած Մխիթար Աբբահօր յիշատակին եւն.:

Այս նամակներու լոյս ընծայումով մենք աւելի մօտէն կը ծանօթանանք Մխիթարեան անխոնջ մշակներու ծաւալած ազգային ու մշակութային գործունէութեան, ստեղծած հոգեւոր արժէքներուն, նորովի արժեւորելով ու աւելի եւս գնահատելով անոնց թողած հարուստ ժառանգութիւնը:

Շնորհիւ այս ժողովածոյին ընթերցողը նոր տեղեկութիւններ ձեռք կը բերէ անոնց կենսագրութեան, գիտական կեանքին, ինչպէս նաեւ պատմական կարեւոր իրադարձութիւններու:

Հոգեւոր հայրերու գրած ու ստացած նամակներն ու պաշտօնական գրութիւնները վաւերագիրներ են, որոնք լոյս կը սփռեն ոչ միայն իրենց ապրած ժամանակաշրջանի մասին, այլ կ'ամբողջացնեն իրենց կերպարը:

Մասնայատուկ կերպով շնորհակալութեան խօսք ունինք Տիկին Սիլվա Սուքիասեանին, որ հայրենի դիւաններէն բազմաշխատ պրպտումներով քաղած նիւթերը՝ սիրայօժարօրէն տրամադրեց մեզի, հնարաւոր դարձնելով այս հաւաքածոյի հրատարակութիւնը:

Հ. ՎԱՀԱՆ ՕՀԱՆԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐԳԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՆԵՐ
Հ. ԳՐԻԳՈՐ ԱԼԵՓՍՈՍԻ ԵՒ Հ. ՆԵՐՍԷՍ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՑԵԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1844 Մարտի 16

ի Պատրիարքարանի ամենայն հայոց Կոստանդնուպոլսոյ

Գերագահ Սրբոյ Աթոռոյն էջմիածնի Գերապատիւ սրբազան եղբարց Սիւնհոդականաց ողջունիւ սիրոյ յայտ լիցի

Արժանապատիւ Մատթէոս Արքեպիսկոպոս զԶմիւռնոյ ի գրութեան առ մեզ ի մարտի 7 ի յօդուած բ. ազգ առնէ «եթէ ամիսք երեք անցին ընդ մէջ, որ պատահեցան աստ ի քաղաքիս երկու կրօնաւոր անձինք ի միաբանութունէ Մխիթարեանց Հ. Գրիգոր Ալէփսոն անուն եւ Հ. Ներսէս Սարգսեան եւ հրատարակեն յօրէ անտի գալստեան իւրեանց, եթէ ի կողմանս Հայաստանու ունին դիմել մինչեւ ցմայր Աթոռն մեր Սուրբ էջմիածին ցամաքային ուղեգնացութեամբ եւ զայս ունին ի բանս եւ ի խօսս իւրեանց, թէ հայ եմք եւ հայրենասէր, վասն որոյ զՀայրենիս մեր զՀայաստան փափաքիմք տեսանել, բայց յի՞նչ միտս լինել սոցին չգիտեմք «այսչափ ինչ գնոցունց ի գրութենէ Զմիւռնոյ Արքեպիսկոպոսին առեալ մեր, ո՛չ անդէպ վարկաք կանխագեկոյց գրութեամբ մերով յայտնել Ձեզ սրբազան եղբարցդ զի գուցէ ըստ բանից իւրեանց խոյս տուեալ ի կողմանս, դիմեսցեն անձանօթ անձինքս ի կողմանս ալոր, եւ յայլ տարազ զբանս իւրեանց շրջեցուցեն եւ կամ յայտնեսցեն զանձինս իւրեանց առ Ձեզ, կամ ոչ կասկածեալ մեր, այսչափ ինչ տեղեկութիւն տամք գնոցունց բարձր Արժանապատուութեանց ձերոց կանխաւ յաւել քան զայս մնամ վասն պայծառութեան ցանկալի կենաց ձերոց:

Միշտ աղօթարար
Աստուածատուր Արքեպիսկոպոս եւ
Պատրիարք Կոստանդնու Պօլսոյս

ՊԱՏՄԱՐԱՆ ՀԱՅՐ ՄԻՔԱՅԷԼ ՉԱՄՉԵԱՆԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ՄԿՐՏԻՉ
ԵՒ ԻԳՆԱՏԻՈՍ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐՈՒՆ՝
ԻՐ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԻ ՄԱՍԻՆ

15 Սեպտեմբեր 1856

Ի Չամչեան Հայր Միքայելէ

Վերապատուելի Տեառն Տեառն Հայր Մկրտիչ վարդապետի
եւ Հայր Իգնատիոս Վարդապետի, ի Տէր Խնդալ.

Զգիր վերապատուելեաց Ձերոց գրեալ ի Հոսմայ ի 10 դեկ-
տեմբերի, 1815 ամի, ընկալայ ի 16 փետրուարի 1816 ամի. ըն-
թերցայ առաջի մերայնոց զամենայն զբանսդ, ընդ որ ո՛չ սակաւ
ուրախ լեալ նոցա՝ փառս մատուցին Տեառն. իսկ ես յառաւելն
բերիմ լսել, եւ ակն ունիմ թէ լուայց, եթէ չկայցէ թշնամի ըն-
տանի: Բայց արդ՝ բացից առակաւ զբերան իմ, լուարո՛ւք զոր
ասեմս եւ զոր գիտեմ: Ի հոգալ իմում զվահան զրոց՝ լուայ զձայն
խորտակման աղեղանց, զարմացայ եւ զարմանամ, զի իմ էր զրո-
ւածն միայնոյ ուրուք, զաղտ ի բնաւից եւս եւ ի մեծաւորէ իմմէ
եւ ի միաբանիցս եւ որո՞վ իրաւամբ անկաւ բանն զհասարակու-
թեամբ համայն:

Եթէ դատապարտելի ինչ կայր ի նմա, իմ էր դատապար-
տութիւնն, եւ արդարն զի՞ արար: Ես զայն գիր յանձն էի արարեալ
դատաստանի՝ ոչ այսր եւ ո՛չ այնր՝ այլ սրբոյ Եկեղեցւոյ, զի դա-
տեսցէ որպէս եւ ախորժէ. իսկ դոքա զիս թողեալ, արկին զբանն
զհասարակութեամբ մերով: Այն իմ գիրք՝ զոր զողացան դոքա, ի
ձեռս իւրեանց էր. ես ինքն աստ էի. աստ եւ ոսոխք իմ ութսնիւ
չափ առաւելեալք. եւ Աստուածաբանք վերաձայնեալք՝ զարմանք
են, զի ո՛չ ոք ի նոցանէ իշխեաց ելանել ցայժմ ախոյեան ընդ դէմ
իմ, յետ բազում անգամ թախանձելոյ իմ զնոսա, այլ փախուստ
տուեալ տազնապեցան, եւ իբրեւ մեղուք բորբոքեալ զհասարա-
կութեամբ մերով՝ դիմեցին անպատկառ յայն ատեան, յոր եսն եմ
ապաւինեալ:

Զի՞ կայ քո եւ սոյնպիսեացդ Հայր Միքայել, բազում ինչ-
ամենայն իրօք հայեցեալ իմ յազգ Հայոց, գտի զնոսա աւելի քան

գքսան միլիոն, ա՛հ կալաւ զիս, թէ զիա՞րդ ազգ այսպիսի կորիցէ, կրկին հայեցայ եւ տեսի զազգն իբրեւ զոսկի, բայց զտի ի նմա խառնուող ինչ պղնձոյ եւ կապարի, եւ յառաւելն յուշաբերիլ զի սուրբ Եկեղեցին չէ՛ ընկեցեալ ի ծով զայն խառն զանգուած: Յայս ակն եղեալ իմ յօրինեցի զառաջինն՝ զչորս հատոր գիրս, անուանեալ (Վահան Հաւատոյ ուղղափառութեան Հայոց) ի վանել եւ ի գտել զպղինձսն եւ զկապարս, հայեցեալ եւ յոսկին կանգնեցի ընդդէմ նետաձիգ եղելոցն՝ զվահանն: Բայց քանզի ուրուական իմն էր այն, ո՛չ երբէք հանի ի վեր, եւ սակայն պատրաստեալ էի ուղղադրել եւ կատարելագործել գնոյնն. զի թէ երբէ՛ք պիտոյ ինչ լինիցի՝ առաջի ընծայեսցի սրբոյ գահին, իբր բողոք ի բերանոյ Եկեղեցւոյն Հայոց, ըստ որում է Եկեղեցի: Եւ մինչդեռ ես յայս խորհրդեան էի, գողք հանին զայն ի վեր, եւ սկսան անձրեւել նետս՝ ո՛չ յիմ վերայ, այլ ի վերայ հասարակութեան մերոյ: Զի՞ կայ ձեր ո՛վ դուք, եւ հասարակութեան մերոյ, յիս ձգեսձիք գնետս ձեր, կա՛մ ես ահաւասիկ առաջի ձեր, մխեսցին նետք ձեր յաչս իմ, եւ ո՛չ յաչս այլոց «նետք տղայոց եղեն վէրք նոցա: Եթէ սուրբ ժողովն յիմ կոյս է, ո՛վ իցէ իմ հակառակ, եթէ յիմ կոյս եւս չիցէ, ո՛չ երկնչիմ, զի ես նորա եմ որդի, եւ նա իմ մայր եւ պաշտպան, եթէ կամիցի, եւ եթէ ո՛չ, չա՛տ է ինձ այս, զի նա ի մայրենի իրաւանց, իմ տէ՛ր է, յորմէ ո՛չ դադարիմ խնդրել, ո՛չ զթշնամեաց վրէժս, այլ զդատաստան արդար, մինչեւ հանցէ զիրաւունս ի լոյս, ի հաւասարել զլիշիւ ճշմարտութեան: Ափսո՛ս եղեւ քեզ Հայր Միքայէլ, զի ի ծերութեանդ հասակի պաշարեցար, յորոց պաշարեցարն: Պաշարեցայ այո՛, բայց ի պաշարմանս վստա՛հ կամ: Պատմեցից ձեզ ինչ մի հարեւանցի, յաւուրս Թերեզեայ թագուհւոյն՝ եկն դեսպան յՕսմանեանց, ի Բէջ քաղաքն. ի նստիլ տասնապետի միոյ ծերոյ ի պանդոկի, եկին անդ եւ ոմանք յՕսմանեանց անտի, յըմբել նոցա եւ յարբենալ, մին յՕսմանեանց քար արձակեաց եանուն Թագուհւոյն, բողոք կալաւ յայնժամ տասնապետն առ դեսպանն եւ առ սպարապետն իւր. եւ ե՛լ հրաման մենամարտելոյ նոցա առ ի մահ. նահատակեալ յայնժամ ծերոյն՝ ել ընդդէմ եւ կործանեաց զախոյեանն: Ահաւասիկ եւ ես պատրաստեալ եմ նահատակիլ. ո՛վ է ոսոխն իմ, ելցէ ընդդէմ: Բայց քանզի իսպառ տկարացեալ եմ առաւել քան զոր կարծէք, եւ անկեալ ի յիշողութենէ, եւ յօրէ յօր նուագիմ, ստիպիմ զձեզ կանգնել եւ կանգնիմ. իսկ այսօր իմ փոխանակ Հայր Մկրտիչդ եւ Հայր Իգնատիոսդ խօսեսձիք զճշմարտութիւն եւ մի՛ երկնչիք ի թշնամեաց իմոց. ես եւս եթէ մարթացայ՝ յուսամ թէ ժամանեցից եւ զձեզ անվաստակս

կացուցից՝ անզգամութեամբ ասեմ, չա՛տ են ոսկերք իմ առ շաղ-
փաղփ բանս Աստուածաբան կարծելոցն: Իսկենդէր Պէյն յետ բա-
զում աշխատ առնելոյ զՕսմանեանս՝ հիւանդացաւ, լուեալ Օսմա-
նեանց զհիւանդութիւն նորա, ահաւասիկ օր ասելով, արձակեցին
ընդ դէմ նորա գայս եօթանասուն հազար (70.000) գայն տեսեալ
Իսկենդէրայ՝ նստաւ ի պատգարակ եւ ել ընդդէմ նոցա. իբրեւ
լուան նոքա՝ թէ Իսկենդէր ինքնին գայ պատգարակաւ, ի փա-
խուստ փութացան եւ ցիրուցան եղեն: Գամ եւ ես պատգարակաւ
ծերութեան, մի՛ ինչ զարհուրիք, վստա՛հ եմ, թէ զարհուրեցուցից
եւ վանեցից զթշնամիս իմ. եթէ արդարութիւնն չիցէ մեռեալ,
գործեցից գործ մեծ, ի գառամութեանս իմում. իսկ եթէ արդա-
րութիւնն կենդանի գոյով՝ ո՛չ կամիցի առնել, գոր արժա՛նն է,
բազուկն արդարութեան ժողովուրդք Աստուծոյ, չեն խորտակեալ.
գիտասջիք, զի ազգն համօրէն յոտին է, ո՛չ կարգաւորք միայն,
այլ եւ Հայ բազմութիւնք՝ սկսեալ ի ծագաց աշխարհի. ո՛չ դառ-
նութեամբ սրտի որպէս յոտինն նշմարի, այլ պահանջամբ արդա-
րութեան, բողոքելով առ ամենայն Տէրութիւնս, եւ ո՛չ իսկ դա-
դարէ, մինչեւ ո՛չ տեսցի զիրաւունս, ո՛չ լսէ՝ որպէս կարծի, այլ
գօտեւորեալ զինուորի, ո՛չ ասելով ըստ թշնամեացն «ոչ կերիցուք
եւ ո՛չ արբցուք մինչեւ ջնջեսցուք զԱբբաեանսն, այլ թէ՛ ոչ ննջես-
ցուք, մինչեւ ո՛չ տեսցուք զխաղաղութիւնն սրբոյ Եկեղեցւոյ եւ
զառաջին վիճակ անդորրութեան Մխիթարեան միաբանութեան
սրբոյն Ղազարու»:

Մի՛ կարծէ՛ք թէ՛ ջախջախ բանիւք ոմանց, յԱռաքելոյն սրբոյ
անմիտ անուանելոց, խափանեալ դադարեսցէ գործարանն տպագ-
րութեան հարիւրամեայ ժամանակաց, եւ այն առանց քննութեան.
Եկեղեցին Քրիստոսի յայսպիսի բերս ո՛չ սաղարթի: Բայց արդ՝
յի՞նչ իրաւունս հաստատեալ թշնամեաց՝ ի սոյն եղեն միջամուխ-
վասն զի ասեն, տպագրեալ գրեանք նոցա՝ լի են մոլորութեամբ.
յո՞ր գիրք արդեօք՝ ահաւասիկ ասեն գիրքն (Խորհուրդ Աստուած-
պաշտութեան): Այս գիրք ի քառասուն ամաց հետէ տպագրեալ է,
յայսքան ամս ընթերցան եւ քննեցին թշնամիք եւ ո՛չ ինչ գտին,
ա՞յժմ գտանեն. այս այն գիրք է, գոր ի ժողովն՝ երեք ամօք յառաջ,
առաջի արարին նոքին իսկ թշնամիք եւ չարախօսք, թէ բովան-
դակեալ կայ ի նմա ճշմարիտ հաւատոյ դաւանութիւնք, եւ այժմ
գիա՞րդ մոլորամիտ գտաւ: (Պատմագիրք Հայոց) իբր երեսուն ա-
մօք յառաջ ի յոյս ընծայեցաւ, եւ ի Հռօմ եւս հանդիսացաւ. եւ
զի՞ պատահեաց նմա. զի այժմ ընթերցմամբ տգիտաց՝ մոլորական
ցուցաւ. իմա՛ ըստ սմին եւ զայլ գրեանց. իմա՛ եւ մի՛ զարմանար.

այլ զարմասջի՛ր եւ եւ ակներեւ տեսջի՛ր, զի անհնարին նախանձ եւ ատելութիւն է, որ զայսպիսիս ճարտարաւորէ եւ զգայուէ:

Իրաւունս ունին եւ նոքա ի մախալ, քանզի ի ճոխաբանել իւրեանց եւ յընդվայր հարկանել զմեզ, ժողովուրդք ընդդէմ ելեալ, եւ զուլից սոցա կալեալ զկծեցուցանեն ասելով, այսչափ ամբ են, զի Արբայեանք գիրս նորանորս հանեն եւ զազգն լուսաւորեն, դուք զի՞ գործէք, դատարկ եւ փասքուք վայրավատին չրջիք, ի խաղս եւ ի գրօսանս ցնդիք, ընդ կանայս եւ ընդ աղջկունս կատակիք» եւ՛ն: Այսմ յանդիմանութեան ո՛չ կարելով տանել, ասեն, ջնջեսցին սոքա եւ գիրք սոցա, զի հանգիցուք: Զի՞նչ ապա ժողովուրդք, ընդէ՞ր եւ դուք ոչ աշխատիք յօրինել զգիրս, չկարեմք ասեն, ընդէ՞ր ապա ո՛չ ներէք կարողաց, զի խոչնդտակն են մեզ նոքա, ասեն: ՅԱւանն Վարչարհէյ անուանեալ ի Թրանսիլվանի՝ մին ի Յունաց շինեաց տուն մի փառաւոր. եանդիման սորա կանգնեաց եւ այլ ոմն ապարան մի. ընդ այս չկարացեալ տանիլ առն Յունականի՝ բազում ինչ արար եւ ծախեաց, զի բարձցէ զայն Ապարան գոնէ ըստ կիսոյն. ընդէ՞ր զի կուրացաւ տուն իւր. զի՞ կուրացար ո՛վ դու. բարձրացո՛ եւ դու գտուն քոյ՝ զի թոյլ տուեալ է յԱրքայէ. յոչ կարել նորա զայս առնել՝ յաւել յարկ մի եւս, որով եւ խեղթեաց գտուն նորա. ահա՛ այսպիսի ինչ է եւ յառաջիկայդ: Աւելի ինչ խօսել ի վերայ այսր՝ ի գո՛ւր է, քանզի յայտնի տեսանի, զի ի նախանձուէ չարին յուզին այսպիսի ինչ. բայց թէ՛ զիա՞րդ ոչ նշմարեն զայս՝ նշմարողքն ինքեանց է գիտելի, նոքա լսել խնորժեն զայսպիսիս, գրօսնուն եւս «զէրքէրէ վարմաք իսթէլէր». ասեն՝ զոր հաճին, խօսին ի հաճիլ: Գնայ մեռի՛ր, եկու սիրեմ. հատանեն զգլուխ անպարտ եւ սանդրեն զմօրուն: Օ՛ր ասեն դուք այսպէս եւ այնպէս. ասեն բերանով եւ հեղձուցանեն գործով, եւ զի մխիթարիմք. փառս տո՛ւր Աստուծոյ, զի որ Քրիստափօր անուանիմ՝ Քրիստոնեայ եմ: Այլ առանձինն գոհանամ զԱստուծոյ. զի այսպիսի վարանս զարթոյց զոգիս ուղղախորհուրդ Քաղաքացեացս համօրէն՝ յառնել, ո՛չ եթէ ընդդէմ թշնամեաց, այլ ի պաշտպանութիւն զրկելոյս, մինչեւ զանձինս եւս դնել ի վերայ միաբանութեանս մերոյ. որոյ վասն բազում անգամ ժողով արարեալ, եւ զերկոտասան իշխանս կարգեալ ոստիկանս՝ գրեցին միաբան ի Հռօմ, եւ զգիրն գարալաչիւ՝ վեց հարիւր ղուռուշ (600) ծախելով՝ առաքեցին ի Պուքրէշ՝ յԵլէնջեանսն. զի անձամբ տարցեն ի Հռօմ, եւ փաստաբանել արասցեն՝ զոր կարեն: Դարձեալ առաքեցին եւ զայլ գիրս դէպուղիդ ի Հռօմ, եւ կրկին եւս առաքեցին. եւ ունին առաքել: Այս ամենայն եղեւ եւ լինի. բայց ընդ վայր. զի կամ ի դերեւս

եկանէ. կամ բազում ժամանակաց ակնկալէ ըստ սովորութեան տեղույդ. որպէս ցուցանեն գործք, որք գործեցան յառաջ ժամանակաւ: Ապաքէն՝ Աբրահամ կաթողիկոս Լիբանանու, վասն դատի միոյ ժամու՝ գերիս ամս պարաւանդեցաւ այդր. հուսկ գինի՝ առանց բանի կոչման ել յատեան դոցա, եւ ի միջոյ կիսոյ ժամու՝ հառ զոր խնդրէրն. զի պատրաստ էր ամենայն. ապա բացեալ զգլուխ իւր յԱտենի անդ՝ ասաց առ Աստուած. գոհանամ զքէն Տէ՛ր, զի ի կամիլ զդատ մեր մեծ՝ զոր ունէաք ընդ քեզ, եկիր, յԱրեւելս եւ վճարեցեր զամենայն, ապա թէ՛ վրիպեալ գայիր աստ, մինչ ի կատարած աշխարհի տեւէր այն:

Դոքա իրաւունս ունին այսպէս վարելոյ. զի իմաստութեամբ գործեն. իսկ ազգ մեր՝ մանաւանդ Արեւելեայք մտօք զօրաւորք. ո՛չ իրաւունս գիտեն եւ ո՛չ զիմաստութիւն ճանաչեն. զի չեն ուսեալք. զոր ինչ ինքեանց հաճոյ տեսանեն, եւ ականջաց իւրեանց յարմարաւոր՝ փարեն գնովաւ. ապա թէ՛ այլ ազգ ինչ՝ մերժեն: Յաւուր միում ի ժողովս Մանուկեանց, եհարց եղբայր նորա Մատթէոս Աղայն, ի Վահանի գրոյն՝ ասէ, որպէս լսեմ, գրեալ է կարգ դարուց եկեղեցւոյն Հայոց անմոլար իջեալ. եւ զիա՞րդ լինիցի այդ. ետու պատասխանի՝ այդ քեզ անհասկանալի՝ է «Տէմիրտէն պիր լէպլէպի տիր, հէր տիշ չէյնէյմէզ». յերկարիլ բանից՝ ասեմ, եթէ՛ կամիս եւ կարես անսալ՝ լո՛ւր, զի՞նչ ասես Աղայ. զոր վկայէ Սրբազանն Պապն Հռոմայ, ընդունի՞ս. այո ընդունելով ընդունիմ ասէ. եւ ես ասեմ, ասա՛ եւ լսեմ. ո՞չ ահաւանիկ երկոտասան երրորդ Գրիգոր սրբազան Պապն Հռոմայ՝ հրովարտակ եհան վասն Հայոց յորում վկայէ թէ՛ «Ազգ Հայոց, ազգ մեծ, ազգ անուանի եւ հօր, ազգ հարազատ, որդի Սուրբ Եկեղեցւոյ Քրիստոսի եւ այլն: Այս հրովարտակ տպագրեալ է ի Հռոմ: Եթէ ազգ Հայոց մինչեւ ցաւուրս սրբազան Քահանայապետիդ գտաւ հարազատ եւ հաւատարիմ որդի Սուրբ Եկեղեցւոյ Քրիստոսի. ուրեմն անմոլար էջ ցայնժամ. ապա թէ ոչ՝ անհարազատ գտանիւր, դու զի՞նչ ասես, ո՛չ քննութիւն եւ ոչ հարցումն, այլ զի՞նչ. սրբազանն ասէ, այդ այդպէս է ասացեալ «նէ մանի» ասեմ ցնա ո՛չ ասացի քեզ թէ՛ զոր ո՛չ ախորժես, ծանր լսես եւ ո՛չ ընդունիս. ո՛չ յայս նիւթ միայն, այլ եւ յայլս. չեւ իմ աւարտեալ գիտսս՝ ասէ ցիս Մանուկ Աղայն «վարդապետութիւն Զեր յօրինեաց գիրք ընդդէմ Հայոց. իսկ այս Վահան գիրք՝ է ջատագովութիւն Հայոց» եւ ո՞րպէս լինիցի այս. «Պու նէ փէհրիչ, պու նէ՛ լահանայ» եւն. ետու պատասխանի. իմացիր եւ գայդ, զոր ասես. Այս գիրք հայի ի ջատագովութիւն ճշմարտութեան Եկեղեցւոյն Հայոց. ըստ որում է Եկեղեցի. իսկ

այն գիրք՝ հայի ի վանումն մոլորեցուցչաց Հայոց: Այսչափ ինչ շատ լիցի առ այժմ, զի չի՛ք կար գորութեան ի ձեռին իմում: Բայց սակայն ինձ մնայ բողոքել յԱտեանն Քրիստոսի զի յետ վաստակելոյ իմ զամս բազումս ի պատիւ Եկեղեցւոյ ի ձեռն գողոց դատապարտեցայ ի ծերութեան իմում, եւ ի ստապատիր ամբաստանաց կեղտ անուն ընկալեալ՝ հանդերձիմ աւասիկ մաշիլ ի գերեզմանի: «դատ արասցէ ինձ տէր ըստ արդարութեան իմում»։ Բայց ակն ունիմ թէ՛ նա ինքն սուրբ Եկեղեցին՝ առանց ինչ տեսանելոյ՝ ի տրուպս արդարացուցէ զիս. քանզի ի նա ապաւինեցայ: Իսկ զոր գրեալ էիք վասն Վահանին թէ՛ ի նմա նշմարիցի՞ ընթացք Տիգէրթացիօնին. ծանի՛ք, զի այս մտածութիւն չունի յայս գործ. զի դիտումն Տիգէրթացիօնին է ցուցանել թէ մա՛րթէ ուղղափառաց հաղորդութիւն առնել ընդ հերձուածողս ի հոգեւորս. այդ կարծիք մերժելի է յինչն. իսկ դիտումն Վահանին է ցուցանել թէ՛ Եկեղեցին Հայոց՝ իբրեւ Եկեղեցի ընդունի զամենայն ճշմարտութիւնս հաւատոյ: Եթէ ունիս զօրինակ առաջնոյ թղթոյն գրելոյ յինչն առ սրբազան ժողովն, ընթերցի՛ր, զի յայն թուղթ բովանդակի Վահանն:

Դնեմ ի գրիս թուղթ մի համառօտ, որոյ օրինակն է:

Առ սրբազան Հայրդ

Երկուս գիրս գրեցի առ սրբազան ժողովն իբրեւ բողոք. զայս գրեմ առ սրբութիւնդ իբրեւ աղերս. լուեալ էք եւ լսէք զվիճակ ուղղափառաց Քաղաքիս: Բաժանումն անգօղելի. գայթակղութիւն անասելի. բամբասանք սոսկալի. անուն քահանայութեան հեծէ ընդ ոտիւք աշխարհականաց, պատճառաւ դադարման Առաքելութեան մերոյ եւ տպագրութեան:

Այս հուր յօրէ բորբոքեալ տոչորէ. եւ ո՛չ ունի շիջանիլ հնարիւք առանձին մարդոյ: Հայր սուրբ՝ ձեռն սրբութեանդ կարող է բարեկարգել իբրեւ այր, որ գլուխ է Եկեղեցւոյն Քրիստոսի, ապա թէ ո՛չ՝ կատարածն հայի ի յատակս դժոխոց. այո՛ ի ձեռն սրբութեանդ:

Որոյ Հայրագութ տեսչութեանն
կամ յամենայնի հնազանդ ծառայ
Հայր Միքայէլ Չամչեան

1856 ամի, 15 Սեպտեմբերի
արտագրեցաւ ի սուրբ էջմիածին

ՀԱՅՐ ԱՐՄԷՆ ՎԱՐԳԱՊԵՏ ԱՅՏԸՆԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ԳԱՐԵԳԻՆ ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆԻՆ

Գերապատիւ Արժանընտիր Տէր Եպիսկոպոս

Շնորհաւոր Տարեմուտ եւ սուրբ Յայտնութիւն

Գերապատիւ Տէրութեանդ շնորհալից շնորհաւորութեանց փոխարէն, որով հաճեցաք աստուածային անհասանելի տնօրինութեամբն ոչնչութեանս վրայ կատարուած ընտրութիւնն ինձ բարեմաղթել, սրտագին անկեղծ շնորհակալութիւնս յայտնելէ ետեւ՝ կը փութամ եւ ես ինձէն Գերապ. Անձինդ վրայ նմանապէս կատարուած բարձրագոյն արժանապատուութեան աստիճանը ջերմաջերմ ըղձիւք շնորհաւորել, խնդակից ըլլալով Ազգին՝ որ դովին ընտրութեամբ գտաւ իւր զարգացուցիչն ու ծաղկեցուցիչը, միանգամայն խնդրելով յամենաշնորհն Աստուծոյ երկար երջանիկ ամաց անընդհատ շարք մ'ամենայն յաջողութեամբ եւ օրհնութեամբ եւ անսասան առողջութեամբ: Մնամ այս նորամուտ Տարւոյս սկզբան առթիւն, զոր առանձինն կերպիւ կը մաղթեմ Գեր. Տեառնդ՝ իբրեւ սկիզբն նորոյ երջանկութեան եւ նորանոր յաջողութեանց. Եղիցի. Եղիցի:

Սոյն կարճառօտ բաց ի սրտի խորոց բխեալ դոյզն ըղձիցս յայտարարութիւնն ու շնորհակալիքս հաւաստելով՝ կը մնամ խորին մեծարանօք եւ սիրով

Գերապ. Տէրութեանդ
Խոնարհ եւ աղօթող ծառայ
Հ. Արսէն վ. Այտընեան
Ընդհ. Աբբ.

Գերապատիւ Տէր
Տէր Գարեգին եպս. Սրուանձտեան
Առաջնորդ Պոնտոսի եւն.
Ի Տրապիզոն

ՀԱՅՐ ԱՐՍԷՆ ԱՅՏԸՆԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ
Մ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻՆ

Վիեննա, 25 Յունուար 1836

Յարգույ Մեծապատիւ Տէր

Վաղ թէ անագան՝ միշտ ընդունելի եւ շնորհակալութեան նիւթ են սիրոյ ցոյցերն որ մեր արժանաւորութիւնից շատ աւելի հասնում են մինչեւ այսօր, ի շնորհաւորութիւն մեր Յոբելինի, սակայն միշտ՝ չափազանց ազնուասրտութեամբ չափազանցօրէն գնահատելով այն դուզնաքեայ արդիւնքն որը մեր տկարութիւնը կարողացել է յառաջ բերել երկար տարիների շարքումն մեր ցանկութիւնից եւ ազդի ակնկալութիւնից շատ նուազ: Այսպէս սիրով եւ սրտագին շնորհակալութեամբ ընկալանք Ձեր եւս գեղեցիկ շնորհաւորութիւնքը:

Ընկալանք դարձեալ սիրով եւ շնորհակալութեամբ գրաւոր նուէրն որը շնորհք արել էք մատուցանել մեզ ի յիշատակ՝ գիտնալով որ ո՛րքան ախորժիւ կը կարդանք այդպիսի երկասիրութիւնքը, որպիսի հրամանոցդ «Հանդէս գրական եւ պատմականը»:

Խնդրելով երկնաւոր օրհնութեանց լիութիւնը եւ երկար տարիների երջանկութիւնը Ձեր վրայ՝ մնամք ամենայն ակնածութեամբ

Ազնուութեանդ
Աղօթարար ծառայ
Հ. Արս[էն] Վ. Այտրնեան
Արք. Ը. Աբբ.

ՀԱՅՐ ԱՐՍԷՆ ԱՅՏԸՆԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ
Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆԻՆ

Ա.

Վիեննա 25 Սեպտեմբեր 1876

Սիրելի բարեկամ

Ձեր պատուական թղթոյն հետ որ ամսոյս 14ին շնորհել էիք, ընկալայ հիւսուածքի 3 առաջին թերթերուն ալ սրբագրուածները. ջանացայ մանր յանձնարարութիւններդ ըստ կարգի կատարել. ի միտ առի դիտողութեանցս դիտողութիւնները Ձեր կողմանէ միանգամայն զարմանքով տեսայ անհարթ գրուածոյս դէմ այդչափ շնորհակալութեան ցոյցեր տրուած շնորհակալ եմ ազնուախօս բացատրութեանցդ:

Սրբագրութիւնը, կ'ասէք թէ Ձեր կողմանէ քիչ մը յերկարեցաւ. յերկարեցաւ այս անգամ ալ մեր կողմանէ. նովին պատճառաւ - այսինքն որ գրաշարներէս մէկը դեռ անվարժ լինելով Ձեր գրչին չափազանց շատ սխալներով լցած էր թերթերը. այժմ ըստ բաւականին ուղղուած՝ Ձեր բաղձանաց համեմատ մի անգամ ալ կը դարձնեմ Ձեզի, սրտի հանդարտութեան համար. քաջայոյս եմ որ յաջորդ թերթերէն աւելի անսխալ կը շարուին: Մի՛ կասկածիք, սիրելի բարեկամ թէ Ձեր արած սրբագրութիւնները խառն կամ չփոթ երեւին. շատ որոշ ու բացայայտ էին սակայն ա՛յս միայն աղաչէի, որ բառ մ'աւելացնելու կամ պակասեցնելու ժամանակ մերձաւոր բառերուն վրայ ալ մանր փոփոխութիւն մ'անել պէտք է, այսինքն աւելացած տեղը քովէն բառ մը պակասեցնելով, եւ պակասած տեղը նոյն կամ նախընթաց ու յաջորդ տողին վրայ փոքր յաւելուած մ'անելով. ապա թէ ոչ հարկ է որ փոքր փոփոխութեան մը համար՝ 10-15 կամ աւելի տողի շարուածքն ամբողջ քակուի ու մեծ տեղափոխութիւն արուի, նորանոր վրիպակներու պատճառաւ տրուի եւն: Ներեցէք:

Բանասիրական խորհրդածութեանցդ վրայ աւելացնելու բան չունիմ.- միայն կը մասնկան նկատմամբ հարեւանցի ակնարկութեամբ՝ յիշեցնեմ գաղղ. *le bois* եւ *l'arbre* գրութեան կերպը. (համեմատելով Հյ. կը խօսիմ եւ կ'ասեմ գրութեան կերպին). այսինքն

թէ երկրորդին ապաթարցն ամենեւին պատճառ չէ առաջինը կից գրելու: Այսու ամենայնիւ Զեր որոշումն կ'ուզեմ յարգել այս տպագրութեան մէջ:

Դժուարելով կ'ասեմ վերջապէս՝ որ յաւելուածքի տպագրութեան շտապեցնելու մասին չպիտի կարենամ Զեր բաղձանքը լիով յագեցնել, որովհետեւ առ այժմ թէ՛ գրաշարը եւ թէ՛ նոյն մանր տառերը այլեւայլ գրքերու կապուած ըլլալով, դեռ քիչ մ'ատեն հարկ է որ սպասենք:

Ի վախճանի նորոգելով բարեկամութեանս ու անկեղծ սիրոյս հաւաստիքը, մնամ

Ազնուութեանդ
Խոնարհ ծառայ
Հ. Արսէն Այտընեան
Կր[օնաւոր] Մի[իթարեան]

ԳԱԹ. Այտընեան Արսէն 654, ք.1-3, ձեռագիր, բնագիր

Բ.

Վիեննա, 21/9 Յունուար 1877

Սիրելի բարեկամ

Զգիտեմ ինչ պատճառաւ մեր եւ Ս. Պետերբուրգի երթեւեկն արգելուած կ'երեւի այս ամիս: Ասկէ երկու շաբաթ յառաջ ուղարկեցի Զեզի «Հիւսուածքի» 7^o եւ 8^o թերթերու սրբագրութիւնները – դեռ այսօր չղարձան յետ:

Դեկտ. 26ին կամ 27-ին ճանապարհ դրինք Զեր խնդրած չորս գրքերու ծրարը. – դեռ այսօր չիմացանք թէ ընդունա՞ծ էք: Աւելի յառաջ, նոյն ամսոյն 10ին թղթով մէկտեղ իւր խնդրածն ուղարկեցի Պր. Եզեանցի.– ցայսօր չգիտեմ թէ հասա՞ւ իր ձեռքը: (Աւելորդ է յիշել, որ անցած շաբաթ էլ «Հիւսուածք»ի 9^o եւ 10^o թերթերու սրբագրութիւնն ուղարկել էի. գուցէ թէ բաւական ժամանակ անցած չհամարուի):

Ուստի խնդրեմ, եթէ գիտնալու արժանի բան մի կայ այս երեւութին մասին՝ ծանուցանէք անյապաղ:

Այսօր կ'ուղարկեմ 11 եւ 12 թերթերու երկրորդ սրբագրութիւնները, իսկ տպագրեալ մաքուր թերթերը մտադիր եմ առաքել,

երբ ապահովապէս հասնելու վրայ որոշ տեղեկութիւններ ընդունիմ ձեզմէ:

Մնամ՝ ողջունիւ սիրոյ բարեկամաց

Աղօթարար ծառայ
Հ. Արսէն վ. Այտընեան
Կր[օնաւոր] Մխ[իթարեան]

ԳԱԹ. Այտընեան Արսէն 654, ք.10, ձեռագիր, քնագիր

Գ.

Վիեննա, 25/13 փետրուար 1877

Սիրելի բարեկամ, ողջոյն

Թէպէտ գրել էի Ձեզ, թէ գրաբարի մասին սրբագրութեան թերթերն աւելորդ է Ձեզ ուղարկել, սակայն այս առաջին երկու թերթերն հարկ համարեցայ այս անգամ Ձեր դատողութեան ենթարկել, գլխաւորաբար՝ 1^o մանրագիր բովանդակութեանց համար, որ արդեօք կը բաղձա՞ք այս հատորին գլուխներուն տակ եւս աւելացընել (բայց բովանդակ այս մասը գրաբար լինելով՝ այսինքն նաեւ ճակատն ու գլխակարգութիւնքը, արդեօք անպատե՞հ կը համարիք աշխարհաբար մաս մի խառնել մէջը). - 2^o. Երես 25, յանկարծ պակասաւոր հատած մի կը սկսի՝ Գ. գլխէն ետքը որուն սկիզբը չգտանելով ձեռագրին մէջ, առ այժմ թողուցինք, այնպէս մինչեւ Ձեզմէ պատասխան մը ընդունինք:

Ի ժամուս չունելով այլ ինչ, մնամ նորոգութեամբ անկեղծ բարեկամութեան հաւաստեաց

Ազնուութեանդ
Աղօթարար ծառայ
Հ. Արսէն Այտընեան
Կր[օնաւոր] Մխ[իթարեան]

Այս անգամ փակագիծ նշանները սխալմամբ այնչափ առատ գործածուել են:

ԳԱԹ. Այտընեան Արսէն 654, ք.14, ձեռագիր, քնագիր

Դ.

28/16 Յուլիս 1881. Վիեննա

Սիրելի եւ ազնիւ բարեկամ

Քանի՜ քանիցս սիրոյ նամակներ էք յուղարկել այս տեղ ի՞մ անուամբս, շնորհակալ եմ մեծապէս Ձեր անգին բարեկամութեանն ցոյցերուն համար. միանգամայն ցաւով սրտի կը յայտնեմ թէ այդ թղթերէն եւ ոչ մին կարացի տեսանել, ոչ միայն երեքամեայ բացակայութեանս պատճառաւ որ ի Կոստանդնուպոլիս կը գտնուէի, այլ նաեւ – զարմանք – վասն զի այդ թղթերն որ յուղարկել էք՝ չեն հասած ի Վիեննա: Միայն այս ամսոյս մէջ Վիեննա դառնալու՝ գտայ «26 Մայիսի» թուականաւ Տփղիսէն գրուածը եւ Ազնուութեանդ երկու գրաւոր երկերն որ պատուական երիտասարդն Վանեցի պ. Մանուէլ Անանեան այս տեղ մեր վանքը բերել է: Սիրով կը շնորհաւորեմ Ձեզ՝ մատենագրական ասպարիզի վրայ Ձեր հանճարոյն առած նորանոր ծաւալմունքը, երանի՜ թէ մեր հասարակութիւնն եւս գիտենար եւ արժանւոյն օգտիլ: Յիշեալ պ. Անանեանի հետ չկարացի ցայսօր տեսութիւն անել, եւ ոչ ալ գիտեմք թէ դեռ ի Վիեննա՞ է, թէ ուրիշ տեղ: Քանի որ դեռ ես ի Վիեննա եմ (իբր 1 ամիս) կը խնդրեմ թղթակցութիւննիս անպակաս լինի:

Ընդունեցէք անկեղծ սիրոյս հաւաստիքն որով եմ միշտ

Ազնուութեանդ

Խ[ոնարհ] ծառայ Աղօթարար

Հ. Արսէն վ. Այտընեան

Կր[օնաւոր] Մխ[իթարեան]

Յ. Գ. Ներեցէք յաւելուածիս:

Ձեր «Հայոց հեթանոսական» կրօնը» պատուական երկասիրութեան 33 երեսում կը յիշուի «հօրօղ մօրօտ» գոր կոչեր էք «դարձուած» եւ դարձեալ «ծաղիկների անուն»: Խնդրեմ շնորհք արէք տարակոյս լուծել. վասն զի այդ բառերը մեր ժողովրդական լեզուին անծանօթ, բայց քննական քերականութեանս ներածութեան մէջ յիշուած են (երես 70): Արդ ցանկալի է ինձ գիտել 1°. թէ արեւել. գաւառաց մէջ գործածակա՞ն են այդ զոյգ բառերը. 2°. թէ ի՞նչ նշանակութեամբ գործ են ածում. 3°. ի՞նչ են «Հարուտի մարուտի» (նոյն 33 երեսումը) պարսկաձե՞լ թէ հայաձեւ, եւ դարձեալ ի՞նչ նշանակութեամբ: Մեծապէս շնորհապարտ կ'անէք զիս՝ եթէ ասոնց վրայօք պատասխան մի շնորհէք:

ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ՀԱՅՐ ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆԻՆ

Գեր. Տէր Հ. Ղեւոնդ Մ. Ալիշան - Վենետիկ
19 յուլիս 1886, Տրապիզոն

Պատուական Ս. Հայր

Մայիսին գրեցի Ձեր Հայրութեան թէ կ'երթամ յԱյրարատ եւ նահապետիդ ողջոյն տամ Մասիսին:

Այժմ վերադարձած եմ. եւ փոխադարձը Ձեզ կը բերեմ: Ողջոյն Քեզ:

Միածնի իջման Ս. տեղէն ողջոյն երկնահանգոյն Ս. տաճարին կամարներէն:

Ողջոյն Գայիանէի եւ Հռիփսիմէի Ս. շիրիմներէն. Ս. Մեսրոբայ գերեզմանէն:

Ողջոյն մեր լուսատուի Խոր Վիրապէն. Գեղարդայ հիանալի Խորաններէն: Ողջոյն Այրարատի հողէն ու ջրէն. Հրազդանէն եւ Երասխէն: Ողջոյն Աստուածամուկ Ս. Գեղարդէն: Ողջոյն Թաղէսի եւ Լուսաւորչի Ս. Աջերէն եւ այլ բազում սրբութեանց եւ սրբոց օրհնեալ մասերէն: Ողջոյն Մանուկ եւ Ալեւոր Մասիսներէն: Ալեւորն կը նմանէր Քոյղ պատկերին. գազաթը ճերմակ. երեսը ճերմակ. ալիք ճերմակ եւ փառաւոր. աչկունքը սուր. խոր եւ խոշոր: Բերանը փակ՝ բայց մշտախօս եւ բարձրաձայն: Սրտի տեղը՝ կրակով լի, որ կը վառի անմարելի, եւ կը շարժէ ամպն ու անդունդ. Հայոց սրտեր հանէ ի թունդ. ինչպէս Քո սիրտ իւր կրակով. իւր նուագով պայծառ հոգւով, ծածկեալ սիրոյդ:

Գեր. Տ. Մեսրոբ եպիսկոպոս Սմբատեանց ընթերցաւ ինձ Ձեր նամակն ի Ս. Էջմիածին. որով կը շնորհաւորէիք զիս եւ կ'օրհնէիք. սրտանց շնորհակալ եմ, Ս. Հայր, եւ ես իմ վայելած շնորհաց եւ օրհնութեանց մասն եւ բաժին Ձեզ կը փափագիմ:

Նախորդ նամակաւս Ճօրճեան պատանւոյ մը համար խնդրած էի որ եթէ կարելի էր Ձեր շնորհիւ ընդունուէր վանքիդ վարժարանը. կ'աղաչեմ՝ այդ կամ ոչ, շնորհ ընէք յայտնել երկտողիւ մը, որպէսզի սեպտեմբերէն առաջ պատրաստեն, կամ այլ տեղ մը դիմեն:

Ներողամտութիւնդ կը հայցեմ այս ձանձրութեանց համար եւ մնամ Ս. աղօթիցդ կարօտ:

Սրուանձ[տեան] Գարեգին եպս.

ՀԱՅՐ ԳՐԻԳՈՐԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼԷՄՔԵԱՐԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ
ԱՌԱՔԵԼ ՀԱՄԱՐՁՈՒՄԵԱՆԻՆ

19/7 Հոկտեմբեր 1894

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

«ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ» ՕՐԱԳՐԻ

ՎԻԵՆՆԱ

Revue "Handess Amsorya"

VIENNE (Autriche)

VII/2 Mechitaristengasse 4

Ա.

Մեծապատիւ Պր. Առաքել Համբարձումեան

Այսօր Պր. Ա. Սարուխանեանէն նամակ ընդունեցայ, որ կը պատմէր «Մշակի» խմբագրութեան մէջ իրեն եղած դիտողութիւնները՝ Հայ լրագրութեան 100 ամեայ յորելինի պատկերին մէջ «Նոր-Դարի» առած դիրքի մասին:

Իրաց լուսաւորութեան համար, իբրեւ ծանօթի կը գրեմ Զեգ: Ինչպէս ներփակեալ պատկերէն կը տեսնէք, «Նոր-Դարի» դիրքը տարբեր է այն պատկերին մէջ, որ Ռուսաստանի եւ առհասարակ Տաճկաստանէ դուրս ամէն երկիրներու համար որոշուած էր, բայց Թիֆլիսի գրաքննութիւնը թոյլ չտուաւ ներմուծել զայն, այլ միայն Տաճկաստանի որոշեալ օրինակները: Երկուքի մէջն ալ compositionի մէջ կուսակցական տեսութիւնները անտես եղած են, այլ միտ դրուած է ճաշակագիտականի, որ լրագիրներն ու լուսանկարներն Շմաւոնեանի շուրջ այնպէս բոլորին, որ ամէն կողմ հաւասարապէս տեսք եւ կեանք ունենայ: Ես կողմնակցութեանց ամենեւին միտ չեմ դրած, եւ կարելի ալ չէր պատուաւոր եւ ոչ-պատուաւոր դիրք զանազանել: Իսկ եթէ կուսակցութեան աչօք նայուի, կարելի է այլեւայլ կերպով մեկնել, օրինակ «Նոր-Դար» պատուաւոր դիրք համարուածը ես կարող եմ մեկնել այնպէս, որ «Մշակի» եւ «Հայրենիք»ի տակ մնացած է եւ սեւ սգոյ շրջանակ առած, եւն: Ասոնք կարծեմ նշանակութիւն չունին: Եւ եթէ ունին,

կարելի է ըսել, որ Յորելինի պատկերի գաղափարն կազմողն ուզած է, որ այն իրարու հակառակ ուղղութիւն ունեցող թերթերն ու անձերն, որ երբեք իրարու պիտի չմօտենան, գէթ յորելեանին օրը թղթի վրայ իրարու կողքին հաշտութեամբ ներկայանան հասարակութեան: Այսչափ:

Ես Ձեզ նամակ մը գրած էի եւ Պր. Չաթալբաշեանի ձեռօք ուղարկած, չգիտեմ որ արդեօք Ձեր ձեռքն հասաւ:

Արդեօք կարելի չեղա՞ւ Ձեզ բաժանորդ գտնել պատկերին:

Այստեղ ինձ «Սինկափոր» լրագրի մասին խօսած էիք: Կը համարձակիմ յիշեցընել Ձեզ:

Կը խնդրէի, որ եթէ կարելի է «Մշակի» մէջ յայտարարէիք քանի մանգամ Յորելինի պատկերը, որով թերեւս կարելի կ'ըլլայ աւելի տարածել եւ եղած մեծ ծախքը ծածկել: Արդէն այս մասին գրած եմ մեր Չաթալբաշեանին:

Կը շնորհաւորեմ բարեգործական ընկերութեան նոր գրադարան-ընթերցարանն: Ես քովս ունիմ Վենետիկի եւ ուրիշ տեղերու գրքերու գործածուած բայց անթերի օրինակներ, զորոնք եթէ կ'ուզուի՝ շատ արժան կ'ու տամ գրադարանին:

Սպասելով Ձեր պատուականին, մնամ Ձերդ

Հ. Գրիգորիս Գալէմբարեան

ԳԱԹ, Առաքելեան Հ. 871-879, ք.1,2,3, ձեռագիր, բնագիր

«1794 Հարիւրամեայ Յորելեան Հայ լրագրութեան 1894» լուսատիպ պատկերէն սակաւաթիւ օրինակներ մնացած են:

Կարելի է ձեռք բերել Թիֆլիս պ. կ. Մութաֆեանի գրասենեակը պ. Յ. Չաթալբաշեանին մօտ, եւ կամ դիմելով «Հանդէս ամսօրեայի» խմբագրութիւնը, հետեւեալ հասցէով.

Въ Виѣну (Австрія)

Rédaction de la revue “Hantess”

Vienne (Autriche) VII2

Mechitaristengasse 4

Գինն է 1 ըր. 50 կ.: Կը յանձնարարենք փութով դիմել:

Բ.

22/10 Փետրուար 1895

Յարգելի Բարեկամ Պր. Հ. Առաքելեան

Ընդունեցայ ժամանակին Ձեր 15/27 Յունուար եւ յետոյ 24 Յունուար պատուական նամակները, բայց անմիջապէս չկրցայ պատասխանել, վասն զի կ'ուզէի գործը կարգադրել, եւ այնուհետեւ գրել:

Արդ, կը յայտնեմ շնորհակալութիւնս նշանակած գրքերուս գնման համար, եւ կը հաւանիմ Ձեր առաջարկութեան 20% գեղջ տալու:

Նոյնպէս կը յայտնեմ շնորհակալութիւնս հրատարակչական ընկերութեան գրքերն ձրի ուղարկել որոշելնուդ համար: Կը յուսամ մօտ օրեր ընդունիլ նոյններն, ինչպէս գրած էք, որոնցմէ կ'ըլլայ անշուշտ եւ Գարագաշեանի Քննական պատմութիւն Հայոց:

Ձեր գրած գրքերն այսօր, մէկ արկեղ մէջ, Բաթում Պր. Արշակ Ծատուրեանցին ուղարկեցի Տրեսի վրայով, ճանապարհածախսը մինչեւ Բաթում վճարելով: Ձեր Յունուար 24 նամակին համեմատ դուրս թողուցի Մխիթար Աբբահօր 3 հտր. բառգիրք, ինչպէս նաեւ № 21, 183 եւ 213: Բաց ասոնցմէ դուրս թողի նաեւ հետեւեալներն՝

№ 66 Հիւսեակ ըբ.-50 (կրկին անգամ գրուած ցուցակի մէջ)

№ 132 Նուէր ըբ. 1. (կրկին անգամ գրուած ցուցակի մէջ)

№ 119 Մեկն. ըբ. 3. (կրկին անգամ գրուած ցուցակի մէջ)

№ 138 Ոսկեանց ըբ.-50 (չգտնուեցաւ)

№ 105 տպ. Կ. Պոլիս 1876, ըբ.-50 (չգտնուեցաւ)

ըբ. 5.50

Այս հինգուկէս ըուբլին կը ծածկէ «Եւրոպա» մեծ, 1847 Յուն.-Դեկտ., զոր Դուք հաշուի մէջ նշանակել մոռացած էիք, որով այս կողմանէ հաշուոյ փոփոխութիւն յառաջ չի գար: Իսկ միւս փոփոխութիւններու պատճառաւ հաշիւն հետեւեալը կ'ըլլայ՝

Իմ ցուցակիս հաշիւը «Բազմավէպ» եւ «Եւրոպա» ամբողջ միասին ըբ. 755.50

Հանէ՝ Աստուածաշունչ եւ Քերկ. ըբ. 162,
եւ 3 հտր. բառգիրք 55 ըբ. 217

Մնայ	ըբ. 538.50
Հանէ 20%	107.70

մնայ մաքուր	430.80
Յաւել «Դիտտէս»	1,20
մնաք պարտական	ըբ. 432

Այս գումարն խնդրեմ փոստով ուղղակի ինձ ուղարկեցէք: Իսկ եթէ այս դժուարութիւն մ'ունի Credit Lyonnais եւ տեղույս Landerbankի ձեռք յանձնել տուէք ինձ:

Դուք նամակիս անիմանալի մասին, իմ բացակայութեանս ժամանակ «Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան» գրադարանին (եւ ոչ «Մարդասիրական» որ սխալմամբ եմ գրեր) ուղարկուեր է «Հանդիսի» հին տարիներ եւ ի պատասխանի Ընկերութեան նամակին գրուեր է, որ «Հանդէսն» ծախքն չհանելուն՝ ձրի կարող չենք ուղարկել, այլ մեծ % գեղչ տրուեր է, որով պահանջք է մնացեր Փր. 49,50: Այս նամակն ալ Ընկերութեան ձեռքը չէ հասեր: Այժմ քանի որ յարգելի Ընկերութիւնն մեզի հետ առանձինն յարաբերութեան մէջ է, այլ եւս «Հանդիսի» հին հաշիւն գոյութիւն չ'ունենար եւ կը մնայ այնպէս, ինչպէս Յարգելի Ընկերութեան № 429 (28/ XII 94) պատուականին մէջ նշանակուած է, նուէր Յարգելի Ընկերութեան:

Ընկերութեանդ գրադարանին համար մեր հրատարակութիւններէն խոստացած էի Ձեզ 25% գեղչ. Մենք աւելի դիւրութիւն տալու համար՝ կու տանք 30% գեղչ, արկղ եւ ճանապարհածախս Ընկերութեան հաշուին:

Գեր. Այտընեանի Յորելինի առթիւ Ձեր Բարեգործական Ընկերութեան եւ «Մշակի» յարգելի խմբագրութեան ցոյց տուած համակրութեան եւ աջակցութեան առանձին առանձին շնորհակալ եմ: Մօտ օրեր քաղաքիս հայ հասարակութեան հետ Յանձնաժողով մը պիտի կազմենք, եւ այս Յորելեանն ազգային հանդէս մը պիտի ընենք: Մի անհաճոյ սխալմունք մ'եղաւ իմ կողմէն, որ սխալմամբ Ձեզ գրեցի նոյ. 2ին, որ պէտք էր ըլլալ նոր տոմ. նոյ. 1ին. բայց միւս կողմանէ այն լաւութիւնն ունի, որ իբր թէ, «Մշակի» խմբագրութիւնն բուն աղբերէն իմացած չէր, այլ «լսում էր», որով № 9ի յօդուածն լաւագոյն ազդեցութիւն բրած կ'ըլլայ: Մեր Ա. Սարուխանեան ինձ գրեց որ ինքը «Մշակի» մէջ յօդուածներ պիտի

գրէ Գեր. Այտընեանի մասին: Յայտարարութիւն մը կը ղենմ «Հանդիսի» Մարտի թուոյն մէջ, ուր կը նշանակուին բաժանորդութեան տեղերն Ձեր նամակին համեմատ: Ուրիշ որոշումներն ժամանակին կը ծանուցանեմ:

«Մշակի» անցեալ տարւոյ համարներէն կը պակսին մեզ հետեւեալներն, զորոնք խնդրեմ բարեհաճեցէք մեզ ուղարկել տալ:

«Մշակ» 1894 № 3ի (վերջին կէս թերթը)

№ 19

№ 29

№ 30:

Միտք ունինք Գեր. Այտընեանի Յորելիսին ստորագրութեան գիրքն հրատարակել, ուր կը գրուին նոյն աւթիւ գրուած յօդուածներն, որ եւ է կերպով մասնակցողներուն անունները, շնորհաւորական գրութիւններն եւն:

Առ այժմ մնացէք բարեաւ

Յարգելի բարեկամ

Հ. Գրիգորիս Գալէմբարեան

ԳԱԹ, Առաքելեան Հ. 871-879, ք.6,7,8, ձեռագիր, քնագիր

Գ.

2 Մարտ 1895

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

«ՀԱՆԴԻՍ ԱՄՍՕՐԵԱՅ» ՕՐԱԳՐԻ

ՎԻԵՆՆԱ

Revue "Handess Amsorya"

VIENNE (Autriche)

VII/2 Mechitaristengasse 4

Յարգելի Բարեկամ Պր. Հ. Առաքելեան

Ինչպէս նախորդ նամակաւ գրած էի «Հանդիսի» Մարտի թուոյն մէջ զրինք յայտարարութիւն մը գատ թղթոյ վրայ, որմէ 2 օր. կը ներկայեմ: Արդեօք կարելի՞ է 1000 օր. «Մշակի» մէկ թուոյն մէջ ղենել, որով ամէն տեղ կը ծանօթանայ: Այս մասին խնդրեմ յայտնել ինձ Յարգ. Խմբագրութեան միտքը:

Կը ներփակեմ 2 տետր 40 ական բաժնեթուղթ Ձեզի եւ
«Մշակի» յարգ. խմբագրութեան համար:

Սպասելով Ձեր պատուականին, եմ

Ձերդ

Հ. Գրիգորիս Գալէմքեարեան

ԳԱԹ, Առաքելեան Հ. 871-879, ք.9, ձեռագիր, բնագիր

Դ.

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

«ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ» ՕՐԱԳՐԻ

ՎԷՆԵՆԱ

Revue "Handess Amsorya"

VIENNE (Autriche)

VII/2 Mechitaristengasse 4

6 Յունիս 1896

Յարգելի Բարեկամ Պր. Հ. Առաքելեան

Ընդունեցայ Ձեր Մայիս 5/17 թուակիր բարեկամականը,
ներփակեալ 320 թուրով միասին, որմէ 300 նշանակեցի Ձեր հա-
շուին ձեռագրաց ցուցակի համար, իսկ 20 ըր. Գեր. Մեսրոպ վ.ի
հաշուին: Շնորհակալութիւնս կը յայտնեմ:

Ձեռագրաց ցուցակն, հակառակ իմ ճգանցս ուշացաւ եւ
կ'ուշանայ: Գերմաներէն մասն, որ 30 թերթ հաշուած էր, վասն
զի տպագրութեան ձեռագիրը ամբողջ պատրաստուած չէր, եղաւ
40 թերթ, որով այս Յունիս ամսոյ վերջը կը լմնայ տպագրու-
թիւնն գերմ. մասին, կը մնայ վերջը անուանց եւ գործոց ցուցակը
որ 10 թերթ մը կու տայ, որ կը պատրաստուի: Մտածեցի հայերէն
մասն գունատիպ տախտակներով ուղարկել Մայիս, Գերմաներէն
Յունիսի վերջը, իսկ ցանկը Օգոստոս կամ Սեպտեմբերին, բայց
կիսուակէս գործը լաւ տպաւորութիւն չէր ըներ, եւ նշանակու-
թիւնն չունէր, անոր համար որոշեցինք որ գործը կատարեալ եւ
ամբողջ ըլլայ, առանց կատարելութիւնը տուժելու կամ յապաղե-
լու, եւ երբ վերջանայ միասին ղրկուի: Եւ որովհետեւ այժմ ամառն
ամէնքը ցրուած կ'ըլլան, կարծեմ լաւագոյն կ'ըլլայ Սեպտեմբերին
ձամբայ հանել:

Իմ միտքս էր բոլոր կաւկասի օրինակները մէկ կամ երկու արկղով մէկ հասցէով դրկել, եւ Թիֆլիս բաժանել ըստ պատկանելոյն, որով թէ աշխատութիւնը եւ թէ՛ ծախքը նուազ կ'ըլլայ: Պր. Չաթալպաշեան գրած էր ինձ որ դրկեմ Պր. Պետրոս Խրիմովի հասցէով, եւ ես միտք ունէի Պր. Չաթալպաշեանին յանձնել ցուցակ մը, որու համեմատ բաժանէր օրինակները: Հաւա՞ն էք այս կերպին:

Կը յուսամ որ «Հանդէսի» մասին գրածնիդ գալ տարւոյ համար կ'իրագործուի:

«Ծագկեփունջի» դիտողութիւնը պարզ բաղձանք մըն էր, որ զայրացեալ թշնամական բանակուիւնները դադրին, եւ թշնամեաց առիթ չտրուի զմեզ երկպառակեալ տեսնելու:

Կը սպասեմ Բարեգործական Ընկերութեան որոշման ծախու գրքերի մասին:

Մնամ յարգանք եւ սիրով

Ձերդ

Հ. Գրիգորիս Գալէմբարեան

ԳԱԹ, Առաքելեան Հ. 880-890, ք.1, ձեռագիր, բնագիր

Ե.

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

«ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ» ՕՐԱԳՐԻ

ՎԻԵՆՆԱ

Revue "Handess Amsorya"

VIENNE (Autriche)

VII/2 Mechitaristengasse 4

20/8 Նոյեմբեր 1896

Յարգելի Բարեկամ Պր. Հ. Առաքելեան
ի Տիֆլիս

Ընդունեցայ Ձեր 24 հոկտեմբեր պատուական նամակը, որուն համեմատ՝ Բարեգործական Ընկերութեան զնաժ գրքերն իբրեւ տպագրութիւն 14 ծրարով ուղարկեցի ապահովեալ՝ «Մշակի» խմբագրութեան հասցէով: Villotի բառգիրքը չկրցայ դրկել, վասն

զի 2 kiloյէ աւելի ծանր էր, հետեւաբար թղթատարը չէր ընդու-
ներ: Եթէ առիթ կ'ունենամ արկղ ղրկելու, մէջը կը դնեմ, եթէ
մինչեւ այն ատեն ծախուած չըլլար: Ասոր արժէքը, ինչպէս կը
տեսնէք ներփակեալ հաշուոյն մէջ, fr. 12.- վար առած եմ հաշուէն:
Կը յուսամ քիչ ատենէն դարձնել աւելորդ կամ ծախու եւրոպա-
կան-հայկական գրքերու ցանկ մը ղրկել:

329

12

317

19 (ճանապարհածախսի կէսը)

frs. 336

«Հանդիսի» 50 ընկալագրաց տետրակ մը դրած եմ 14 ծրար-
ներէն մէկուն մէջ. յուսամ թէ Ձեր ջանքն արդիւնաւոր պիտի
ըլլայ, որով զմեզ երախտապարտ պիտի ընէք:

Ձեռագրաց մասին նախորդ նամակաւ գրած եմ, որ Պր. Չա-
թալպաշեանին ղրկած եմ 2 արկղով, որմէ եւ կ'ընդունէք Ձեր
օրինակները:

Մնամ յարգանք եւ սիրով

Ձերդ

Հ. Գրիգորիս Գալէմքեարեան

Գեր. Այտընեանի «Կենսագրական ակնարկն» ու «պատկերն»
կարելի է թերեւս կարգի դնել, եթէ յոյս չկայ այսուհետեւ
ծախելու:

ԳԱԹ, Առաքելեան Հ. 880-890, ք.5, ձեռագիր, բնագիր

Զ.

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

«ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ» ՕՐԱԳՐԻ

ՎԻԵՆՆԱ

Revue "Handess Amsorya"

VIENNE (Autriche)

VII/2 Mechitaristengasse 4

28/16 Դեկտեմբեր 1896

Յարգելի Բարեկամ Պր. Հ. Առաքելեան

Ընդունեցայ Ձեր 6/18 դեկտեմբեր թուակիր պատուական
նամակը: Կարող էք երեւակայել որ 50 ապահով բաժանորդն արդէն

մեծ ֆուրոր յառաջ բերաւ մեր մէջ, ուստի եւ կը յայտնենք մեր խորին շնորհակալութիւնը: Կ'աշխատինք «Հանդեսն» այս տարի աւելի հետաքրքրական դարձնել, քան 1896ին:

Կը շնորհաւորեմ նոր տարին եւ Ս. Ծնունդը, որ համայն ազգին համար նոր օրեր բերէր. անստոյգ ապագային, որ մեր առջեւ կայ, բարեգութն ուրախական ելք մը տար առաջիկայ տարին:

5%ի մասին խօսք չկայ. ես չնշանակեցի, թողլով վճարողին իւր իրաւացի գեղչն անելու: Յուսամ գրաքննութիւնը ամէնն թոյլ կու տայ: Ասոնցմէ զատ հայկական-եւրոպական գրքեր, արժան գներով կը գնէ՞ք: Միւսներն ընդունելէն ետեւ կարող էք գրել, եւ ես նոր ցուցակ մը կը ղրկեմ:

Արդեօք Տաթեւի վանքի շարժուն ձօճուն սեան *original* լուսանկարը կը գտնուի՞ Փափագեանի կամ Տէր-Ղեւոնդեանի մօտ կամ ուրիշ լուսանկարուած: Շատ կարեւոր էր գերմաներէն մէկ յօդուածիս համար: Այիշանի, «Տարագի» եւ Սմբատեան եպսի. (Գեղարքունիք) հրատարակած պատկերներն իրարմէ շատ տարբեր են. երեւի եւ ոչ մէկը բուն լուսանկարի վրայէն է: Ծանօթ է Ձեզ կամ ուրիշի մը բաց ի վերոյիշեալ երեք նոր գրութիւններէ (կայ նաեւ Ստ. Սիւնեցոյ պատմ. մէջ յիշատակութիւն) ուրիշ մը յիշատակուած կամ ստորագրուած, ռուսերէն կամ ուրիշ լեզուաւ: Եթէ լուսանկարը գտնէք խնդրեմ իմ հաշուին գնեցէք եւ ղրկեցէք իսկոյն, որով զիս մեծապէս կը պարտաւորեցնէք:

Շնորհակալութիւն ձեռագրաց ցուցակի մասին Պր. Մայիսասեանցի ընտիր եւ ազդեցիկ գրութեան հրատարակութեան համար:

Առ այժմ մնացէք բարեաւ:

Յունուարի «Հանդէսէն» կ'ուղարկենք Ձեզ 50 օր. «Մշակի» հասցէով

Ձերդ

Հ. Գրիգորիս Գալէմբեարեան

Է.

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

«ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ» ՕՐԱԳՐԻ

ՎԻԵՆՆԱ

Revue “Handess Amsorya”

VIENNE (Autriche)

VII/2 Mechitaristengasse 4

14/2 Յունիս 1897

Յարգելի Բարեկամ Պր. Հ. Առաքելեան

Ամիս մը բացակայութենէ վերադառնալով կը գտնեմ Ձեր 10/22 Մայիս բարեկամականը, եւ կը փութամ պատասխանել:

1. «Հանդէս» Մայիսի թիւը երեւի Ձեզ սխալմամբ մի օրինակ զրկուեր է: Այսօր ուղարկեցինք 12 եւս: Յունիսի համարը՝ Բագուի 35 օր. չէ զրկուած Ձեր գրութեան համեմատ եւ կը սպասուի Ձեր հրամանին:

2. «Հրատարակչական Ընկ.» շնորհակալութեամբ ընդունեցանք այս օրերս № 126 եւ 127: Մինչեւ ցայսօր եկած չեն մեզի 103, 113, 120, 122, 123, 124 եւ 125:

Առ այսօր այսչափ: Մնամ յարգանք

Ձերդ

Հ. Գրիգորիս Գալէմբարեան

ԳԱԹ, Առաքելեան Հ. 880-890, ք.10, ձեռագիր, բնագիր

Ը.

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

«ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ» ՕՐԱԳՐԻ

ՎԻԵՆՆԱ

Revue “Handess Amsorya”

VIENNE (Autriche)

VII/2 Mechitaristengasse 4

2 Հոկտեմբեր 1897

Յարգելի Բարեկամ Պր. Հ. Առաքելեան

Ընդունեցայ Ձեր 28 օգոստոս թուակիր պատուականը:

Պր. Սարուխանեան արդէն ծանոյց ինձ, որ ընդունած է Ձեզմէ 122 ըր. ի հաշիւ պարտուց Մատենադարանի Բարեգործա-

կան Ընկերութեան, որով այս հաշիւը կը փակուի: Շնորհակալ եմ յարգելի Ընկերութեան եւ առանձինն Ձեզ:

«Հանդէսի» օգոստոսի համարներն ուղարկուեցան ըստ սովորութեան, եթէ մէկը ընդունած չէ, խնդրեմ յայտնել: Հոկտեմբերի համարներէն հանեցի գործակալաց կարգէն, Ձեր պատուական անունը ինչպէս կը պահանջէիք:

Վրաց պատմութիւնը ուրախութեամբ կը տպենք ենթադրելով որ շատ երկայն պիտի չըլլայ: Եթէ առաջիկայ Յունուարին սկսինք, գէթ տարւոյն վերջը վերջանայ: Աւելի հետաքրքրական կ'ըլլայ անշուշտ Հայոց հետ ունեցած յարաբերութիւնները:

Հրատարակչուեան Ընկերութեան հրատարակութիւններէն հետեւեալները ցայսօր ընդունած չեմ №№ 113, 120, 122, 123, 124, 125, 128, 130, 132, 134, 135 եւ շարունակութիւն:

Մնամ յարգանք եւ սիրով

Հ. Գրիգորիս Գալէմքեարեան

ԳԱԹ, Առաքելեան Հ. 880-890, ք.11, անագիք, քնագիր

Թ.

14 Մայիս 1898, ի Տփղիս

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

«ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ» ՕՐԱԳՐԻ

ՎԻԵՆՆԱ

Revue "Handess Amsorya"

VIENNE (Autriche)

VII/2 Mechitaristengasse 4

Յարգելի Բարեկամ Պր. Հ. Առաքելեան

Ներողամիտ եղէք որ Ձեր 2/14 Մարտ պատուական գրութեան հազիւ այսօր կարող եղայ պատասխանել, վասն զի սաստիկ զբաղած էի՝ բաց ի ընթացիկ գործերէս, ցուցահանդիսի պատրաստութեամբ եւ Գերմաներէն տետրակ մը գրելու, որ աւարտեցաւ այժմ, եւ մօտ օրերս կ'ուղարկեմ օր. մը «Մշակի» յարգելի խմբագրութեան: Նոյն տետրակին մէջ աւելի չեշտած եմ Միաբանութեան Գերմանացիներուն մատուցած օգուտները, նպատակն

այնպէս պահանջելով: Վասն զի ստոյգ ալ մենք Թրիեստ-Վիեննայի Մխիթարեանքս մեր գոյութիւնն ու պահպանութիւնը պարտական էինք եւ ենք գերմանացի ժողովրդեան, (եւ ոչ հայ ժողովրդեան-դժբախտաբար) եւ Աւստրիոյ կայսերական տան:

Ընդունեցայ նաեւ Պարսկահայոց մասին Ձեր գրութիւնը: Կը հրապարակենք ուրախութեամբ եւ ընդդիմութիւն չունինք նաեւ առանձինն հրատարակել իբր հատոր մը մեր «Ազգային Մատենադարանին» բայց ներեցէք որ ըսեմ, թէ հարկաւոր է ամբողջ ձեռագիրը մինչեւ վերջը միասին դրկել, որպէս զի կարելի ըլլայ վերջնական որոշում մը ընել:

Պիտի խնդրէի որ հաճիք «Հանդիսի» անցեալ տարւոյ հաշիւը, եւ մանաւանդ Ձեռագրաց ցուցակի հաշիւը, որ 2 տարի եղաւ գրեթէ, փակել, որպէս զի մենք մեր գործերը կարգադրենք, որուն այնչափ պէտք ունի:

Յարգանք եւ սիրով

Հ. Գրիգորիս Գալէմբարեան

ԳԱԹ, Առաքելեան Հ. 880-890, ք.14, ձեռագիր, քննարկ

ՀԱՅՐ ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼԵՄԲԱՐԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ԲԱՐՈՒԴԱՐԵԱՆԻՆ

Վիեննա 3 Ապրիլ 1895

Մեծապատիւ Տէր Խմբագրապետ

Ինչպէս ներփակեալ ծանուցումէն կը տեսնէք, Գեր. Այտր-նեանի Յորելի համար կազմուած յանձնաժողովն որոշած է «Այտընեան Արուեստագիտական Հիմնարկութիւն» անուամբ հաստատութիւն մը կանգնել, որուն ուղղակի ազգին արուեստաւոր դասին եւ անուղղակի ազգին ընդհանրութեան օգտակար ըլլալուն համոզուած է:

Գիտնալով որ Ձեր փորձառութիւնն ու յազգին պիտոյից ծանօթութիւնը մեծապէս պիտի նպաստէ գործոյն կատարելու-

թեան եւ միւս կողմանէ նաեւ յաջողութեան, կը խնդրենք որ Ձեր պատուական թերթին մէջ Ձեր կարծիքները յայտնէք եւ Ձեր աջակցութիւնը մեզ շնորհէք:

Մնանք խորին յարգանօք
ի կողմանէ յանձնաժողովոյ
Այտընեան Արուեստագիտական Հիմնարկութեան

Հ. Գրիգորիս վ. Քալէմբեարեան

ԳԱԹ, Մ. Բարխուդարեան 87, ք.1, ձեռագիր, բնագիր

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՄԻԱՆՁՆ
ՀԱՅՐ ՍԱՐԳԻՍ ՅՈՎՍԷՓԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐ-ԱՐԲԱՀԱՄԵԱՆԻՆ

Ա.

Վենետիկ, Ս.Ղազար
22 Մայիս 1895

Պատուական եւ սիրելի եղբօր
ի Քրիստոս
Սարգիս Վարդապետի Տէր-Աբրահամեան
ի նուաստ Հ. Սարգսէ ողջոյն

Հայր Դիոնէսիոսի միջոցաւ ընդունեցայ Ձեր մարտ 7 գրած պատուական թուղթը՝ որով ինձ սուրբ յարութեան առթիւ սիրելի մաղթանքներ կ'ընէիք. շատ շնորհակալ եմ Ձեր անկեղծ սիրոյն, եւ փոխադարձ բիւրիցս կրկնելով նոյն մաղթանքները՝ կը խնդրեմ յարուցեալ փրկչէն որ լեցնէ զՁեզ աստուածեղէն զօրութեամբ եւ իմաստութեամբ, որպէս զի այդ սրբազան կոչման պարտքերը անթերի եւ պանծանօք կատարէք, եւ լինիք ճշմարիտ քարոզ բանին կենաց. առաքելոց կալուածոց մէջ մտած ժամանակ՝ լինիք

նաեւ բնակարան Հոգւոյն սրբոյ որ մի քանի օրէն պիտի սաւառնի մեր վերայ, ինչպէս երբեմն առաքելոց. եօթնարփեան շնորհօք լեցուի Ձեր սիրտը, ուստի գետահետեալ թափի ի ջերմիկ սիրտս հաւատացելոց. ահաւասիկ Սիրելի, եղբայր սոքա են իմ սրտիս անկեղծ մաղթանքները:

Ուրախ եմ, սիրելի եղբայր, որ դուք այդքան փութով սկսել էք քահանայական սրբազան պաշտամունքները, բայց կը ցաւիմ որ հեռի ի հայրենեաց օտար երկրի մէջ եւ տարբեր երկնքի ներքեւ կը թափէք Ձեր քրտինքը, թողլով մեր հարց սրբազան աշխարհը մեր հարազատներ եւ հայրենակիցները, մեր օրորան եւ սիրելի ծնողաց քնարան խաւարի տգիտութեան մէջ, ուր կարծես թէ այսուհետեւ չպիտի ծագի գիտութեան լուսաւոր ճառագայթները, չպիտի մխիթարուին այն սգաւոր հոգիքը որոց սփոփիչ եւ պահպան հրեշտակ պիտի լինէիք. ի՞նչ է մեր հայրենեաց ապագայն, մեր հարց աւանդներ մինչ յե՞րբ պիտի կարենայ խրախուսել այդ բեկեալ եւ լքեալ ժողովուրդը, տխուր վախճանը կարծես թէ մօտ է որոյ սգաւոր արձագանգները հասան մեր լսելիքը. ես այլ եւս կարօղ չեմ ընել իմ հայրենեացս ընտրութեամբ վիճակիս. իսկ դուք առաւելաւ եւս պիտի զարգացնէիք մեր հայրենիքը՝ ուրիշ կերպով տնօրինեց երկինք. ուրեմն ըստ իս յուսահատական եւ ողբալի է մեր հայրենեաց վիճակը: Ես ուրիշ աւելի սերտ կապերով կարծեմ պիտի կապուիմ Միաբանութեանս գործոց հետ՝ որով եւ անկարելի պիտի լինի եղբարցս խնդրանաց կատարումը:

Սիրելի եղբայր բաւական ժամանակ է որ զրկեի եմ Ձեր խնդրած ժամագիրք եւ մի ցուցակ նամակով հաղերձ առ Պ. Յովսէփ Պոցեան գուցէ այժմ Ձեր ձեռքը հասած կը լինի, իսկ այսօր կը զրկեմ մի ժամակարգութիւն իբրեւ նուէր իմ առ Ձեզ ունեցած անկեղծ սիրոյս նշանակ, ընդունելուդ պէս գործածէ վասն զի եկեղեցւոյն բարձրագոյն եւ սրբազան պետերէն թոյլ տրուած եւ կարօղ եմք աներկիւղ հրատարակել. փոքրիկ յառաջաբան մի եւս պիտի դրուի սկիզբը զոր սակաւ ժամանակէն պիտի տպենք, որոյ օրինակ մի եւս կը զրկեմ Ձեզ յետ տպագրութեան:

Հաղորդէ սիրելի եղբայր միշտ մեր հայրենեաց լուրերը, եւ որքան կարելի է առանց Ձեր ժամանակի կորստեան փութով նամակները գրեցէք: Հ. Մինաս վարդապետէն Ձեր մասին, որ միշտ բերանով եւ գովութեամբ կը խօսէր Ձեր վրայ ուրախիմ եւ կը փափագիմ միշտ աւելին լսել:

Հ. Յովհաննէս վարդապետ կղզիս պիտի գայ եւ վերակացու մեծաւոր պիտի լինի վարժարանեաց. ընկերները ամբողջ տակաւին

վանքի մէջ կը գտնուին եւ իրենց սիրոյ ողջոյնը կը մատուցանեն. ընդունէ սիրելի ողջոյնս եւ համբոյր եղբայրական:

Մնամ Սիրելի եղբօրդ
Հ. Սարգիս Յովսէփեան
Միանձն Մխիթարեան

ՀԱԱ. ֆ.967. ց.1, գ.19, ք.11-14, ձեռագիր, քնագիր

Բ.

ի վանս Ս. Ղազարու ի Վենետս
8 Յուլիս 1895

Սիրելի եւ Պատուական Եղբայր
Ի Քրիստոս

Ընդունեցայ Ձեր մայիս վեց գրած պատուական թուղթը, եւ նորա հետ միասին 4 ռուբլի ժամագրոց գինը. շատ շնորհակալ եմ եւ շատ ուրախ որ իմ չնչին ծառայութեամբս Ձեր ազնիւ սրտին մեծ հաճոյք պատճառած եմ: Բայց գուցէ զՁեզ մտատանջութեան մէջ ձգեցի փութով չպատասխանելով Ձեր թղթոյն, որոյ նկատմամբ խնդրեմ ներող լինիք, որովհետեւ պաշտամանցս փոփոխութիւնը եւ զբաղանցս առաւելութիւն ազատ ժամանակ չշնորհեցին ինձ, որպէս զի կարող լինէի ըստ պատշաճին պատասխանել Ձեզ. եւ առ Ձեզ ուղղելիք փոքրիկ աղօթագրքերը պատրաստ չգտնելով պատրաստել տուի եւ նամակիս հետ միասին կը ստանաք, ընդունեցէք զանոնք իբրեւ փոքրիկ նուէր մի եղբայրական ջերմ սիրոյս. կը փափաքէի աւելին ընել՝ բայց որովհետեւ մեր կազմատունը շատ գործեր ունի առ այժմս այսչափ կարողացայ:

Եղբարցս գրած աղերսագիրը ձեռքս հասաւ եւ առանց կարդալու Գեր. Աբբահօր յանձնեցի, որով չգիտեմ թէ ինչ գրած էին եւ Գեր. Աբբահայրը ինչ պատասխանեց, միայն այսչափ ըսեմ որ այժմ հայրենեացս այցելութիւն ընել գրեթէ շատ դժուարին է եւ գուցէ անկարելի. որովհետեւ այժմ Վ. Հ. Յովհաննէս Վ. Վարժարանեաց ի վանս դաստիարակ կարգուելով եւ զիս այլ իրեն ոգնական առաւ, զոր մեք վանքի մէջ Հ. Պատուելի կը կոչենք: Որով գուցէ եղբարցս խնդրագիրը անիրագործելի մնաց. բայց որովհե-

տեւ կրօնաւորական կարգի մէջ իմ ու մեր կամքը մեծաւորաց հրամանները պիտի լինին, ուստի ես ազատ կարող եմ համարուիլ երբ եղբարցս աղերսագրին չեմ նպաստել, եւ արդէն դուք Ձեր աչօք տեսաք եւ ականջօք լսեցիք Գեր. Աբրահօր խօսքերը. չըսուի եղբարցս կողմանէ թէ ինքը չուզէր անոր համար այլ զինքը չեն դրկեր. վասն զի ինչպէս ըսի ես պատրաստ եմ մեծաւորիս հրամաններ իբրեւ աստուածային պատուէրներ կատարել:

Ահաւասիկ սիրելի եղբայր իմ կարճ տեսութիւն զոր ջանացի փոքր ի շատ բացայայտել եւ ծանուցանել:

Հռովմայ Լեւոնեան վարժարանի տեսչութիւն ընդունեն է Պ. վարդապետ Քոյունեան:

Իմ բարեւներս յիշէ առ ամենայն հարցանողս եւ զՁեզ կ'ողջունեն ամենայն վանականք Ձեր սրբազան յիշատակ միշտ վառ կը մնայ մեր սրտից մէջ:

Ընդունէ եղբայրական սիրոյ ջերմ ողջոյնս եւ գնոյն մատո սիրելի քրոջս Մարիամին որոյ կարօտը շատ կը քաջեմ, եւ ամէն ատեն երբ իր յիշատակը կը նորոգուի սրտիս մէջ, միշտ արցունք յաչացս կը կաթէ:

Մնամ սիրոյ եղբայր Ձեր
Հ. Սարգիս Յովսէփեանց
Միանձն Մխիթարեան

ՀԱԱ. ֆ. 967. ց.1, գ.22, ք.11,12, ձեռագիր, բնագիր

ՀԱՅՐ ԻԳՆԱՏԻՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԻՒՐԵՂԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐԲԱՀԱՄԵԱՆԻՆ

ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ
ՄԽԻԹԱՐԵԱՆ
ՎԵՆԵՏԻԿ
ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

Վենետիկ ի 15 Մայիսի 1896

Յարգոյապատիւ եւ Մեծարգոյ Տէր,

Մեծաւ հաճութեամբ ընթերցաք գտուեալդ ի 11 մայիսի, որով առաջի առնէիք մեզ զԱստուածահաճոյ տենչանս սրտիդ,

պահել անմոռաց գլխատակ երկնահրաւէր հանգուցելոյ եղբօրդ եւ սիրելւոյ որդւոյ մերոյ եղ. Եղիսէի, յղելով փոխանակ նորա զպատանի մի ի վանս մեր յազգականութիւնէ Զերմէ: Շնորհ յոյժ ունիմ զազնուութենէ սրտիդ, եւ սիրագեղ խնդութեամբ հաճեալ հաւանեալ ընդ գեղեցիկ առաջարկդ, մաղթեմք ի Տեառնէ հեղուլ ի վերայ մանկանն գերկնային հոսանս շնորհաց, զի որոց միանգամ ի վանս տեսեալ իցեն եւ վայելեալ յեղբայրասէր եւ յերկնային քաղաքավարութիւն հանգուցելոյն, գտցեն ի նմա զայլ ոմն առաքինազարդ Եղիսէ, եւ շնորհօքն Աստուծոյ եւ գթութեամբ Տիրամօր, ընդ որոյ ամենագութ հովանաւորութեամբ հանդերձեալ է մտանել, ի մոռացօնս դարձուցէ զցաւս Զեր եւ մեր: Այսպէս մնամք փութով ընդունել զպատանեակն յորդեգրութիւն Ուխտիս:

Իսկ զառաքելի մանկանէն ի Ռափայէլեանն վարժարան, խօսեցայ ընդ Տեսչի վարժարանին որ ալն ունիմ ընդ փոյթ արասցէ զպատասխանին:

Ընդ ջերմ ողջունի սիրոյ վանականացս, ընկալ եւ գիղձս եւ զմաղթանս մեր ի յաջող ելս գործոյդ հովութեան ի փառս Տեառն եւ ի փրկութիւն հոգւոց, եւ յանձն լեալ յԱստուածահաճոյ աղօթս

Մեծարգոյ Տեառնդ

*Ն[ուաստ] Ծ[առայ] Իգնատիոս վ. Կիւրեղ[եան]
Արք. եւ ընդ. Աբբ. Մխիթար[եանց]*

ԲԱՆԱՍԷՐ, ԼԵԶՈՒԱԲԱՆ, ՁԵՌԱԳՐԱԳԵՏ, ՄԽԹԱՐԵԱՆ
ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ՀԱՅՐ ՅԱԿՈԲՈՍ ՏԱՇԵԱՆԻ
ՆԱՄԱԿՆԵՐԸ
ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹԵԱՆԻՆ

Ա.

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
«ՀԱՆԴԷՍ ԱՄՍՐԵԱՅ» ՕՐԱԳՐԻ
ՎԻԵՆՆԱ

Revue “Handess Amsorya”
VIENNE (Autriche)
VII/2 Mechitaristengasse 4

Վիեննա 24 Դեկտեմբեր 1897

Մեծարգոյ Բարեկամ

*Ստացած եմ ժամանակին կրկին քարտէսները (Յունուար 29
եւ փետր. 6):*

*Երկար սպասեցիք այս երկտողիս, որուն յապաղելուն պատ-
ճառը դիւրաւ կրնաք գուշակել: Արդէն գարուն կը սկսի հոս եւ
ես տակաւին՝ ամէն ճգանց հակառակ՝ չկրցայ աւարտել «Պատա-
րագամատոյցքն» որ մեծ ծաւալ առաւ: Յոյս ունիմ այս ամիս
անպատճառ աւարտելու: Այս միջոցին բազմաթիւ նամակներ ալ
եկան ամէն կողմէն, այլեւայլ խնդիրներու համար. եւ ոմանք շատ
ալ ժամանակ սպառեցին, մինչեւ ամէն կէտի պատասխան տալ
կարելի եղաւ: Շատերն ի հարկէ դրած եմ մէկդի՝ լաւ առթի
սպասելով: Գէշ թղթագիր կ'ըլլամ ասով. բայց առ այժմ ուրիշ
կերպ կարելի չէ:*

*Շատ փնտռեցի Ձեր յիշած վերջաւորութիւնը գտնելու. բայց
մեր ձեռագրաց մէջ չգտայ եւ ո'չ ալ ծանօթ ուրիշ տեղ մը: Քանի
որ Ձեր երկրորդ քարտը չէր եկած, համամիտ էի կարծելու թէ
Խլաթեցի գանձարանի մը վերջաբան ըրած ըլլայ այն տողերը,*

որուն կը յարմարին ալ անոնք. («... որ ետ ինձ կար տկար անձին – եւ զեջն ու զնու հասոյց ի մին – Բամեալ գանձեքս որ ի միջին-եջն առաջին եւ նուն վերջին») Այն ժամանակ կրնար ենթադրուիլ որ Եջն ու Նուն իւր գանձերու սկզբան եւ աւարտման գանձաթու-ւերն էին, ինչպէս ամէն գանձարաններ լուսանցքի վրայ ունին նոյնիսկ կարգաթուերը: Բայց «ն» (400) գանձաթիւ հաւակ[նա]ան չէր: –Միջանկեալ ըսեմ որ խլաթեցւոյ գանձերու, որ սովորաբար ցիրուցան կը գտնուին գանձարաններու մէջ, ամփոփ հաւաքում կ'երեւայ էջմիածնի թ. 282 ձեռագիրն, որուն մէջ կայ նաեւ յիշատակարան 16 տողով «ի ծերենց Գրիգոր Վարդապետէ շինողի գանձուտ» (տպ. «Արարատ» 1895 էջ 129-130):

Երկրորդ քարտէսը խնդիրը լուսաւորեց գոնէ չափով մը, ուր կը հաղորդէիք 460 (նկ) տողով վիպասանութեան մը գիւտը, որ կ'աւարտի յիշեալ տողերով: Այդ «Յիշատակարան աղէտից ի ժամանակի մերում, զոր ասացեալ է Գր. Վարդապետ խլաթեցւոյ» ինձ միայն ընդհանրապէս ծանօթ էր. այսինքն գիտէի ձեռագիր ցուցակէ մը (միայն որ կայ խլաթեցւոյ) «Պատմութիւն նահատակութեան վկայից իւրոյ ժամանակին» (խորագիրս անշուշտ ձեռագրաց համեմատ չէ.) բայց եւ ո'չ տող մը ծանօթ է ինձ այս գրուածքէն, եւ ոչ ալ տպագրութիւն մը կարծեմ եղած է (որ արդէն անհաւանական է յիշեման): Յամենայն դէպս յիշեալ վերջաբանը կրնայ յարմարիլ 460 տնով վիպասանութեան մը, եթէ մանաւանդ բուն մարմինը կամ իւր ժամանակակից իրաց պատմութիւնը սկսի «Ես տնով եւ աւարտի «ն» տնով: մնացեալ 60 տունը վերջաբան ըլլալով: Թէ ուղիղ է այդ կամ ո'չ, դուք միայն կրնաք որոշել, առձեռն ունենալով նոյն գրութիւնը:

Անշուշտ Զամչեան 7, 451 այս վիպասանութիւնը կը յիշէ: Զարմանք է միայն որ ձեռքս եղած Վենետիկոյ ձեռագրաց ցուցակին մէջ չեմ գտներ այսպիսի բան մը նշանակուած: Այնտեղ կը նշանակուին (իւրաքանչիւրին սկզբնատողերով) 23 աղբրսական Տաղեր, 41 գանձեր, յետոյ «Որոշումն վասն խնդրոյ իրիք Պսակի» եւ «Թուղթք» խլաթեցւոյ, ինչպէս նաեւ « ժամատեղեաց»: Ուրիշ ցանկէ մը գիտեմ «ճառ ի ծնունդ Աստուածածնի» եւ «Ներբող տնօրինական Տեղեաց» ինչպէս նաեւ յիշեալ «Պատմութիւն նահատակութեան վկայից» եւն:

Տպագրութիւն մ'այն վիպասանութեան անծանօթ է ինձ։- Բայց անկարելի է: Շատ եւ շատ բան կայ ցիրուցան եւ մոռացուած մեր ամէն թերթերուն (Հին ու նոր) մէջ, որոնք պրպտուած եւ մոռացութենէ ազատուած չեն: Քիչ բան միայն կրցած եմ մինչեւ ցայժմ մի առ մի աչքէ անցընել եւ նշանակել. մնացեալ ապագային թողլով: Յիշեմ որ «Գրիգոր Երիցու» անուամբ նման տող կամ «Յիշատակարան» մը կայ՝ պատմութիւն անցից իւ ժամանակին, որ կը սկսի. «Ապէնեազ եւ անկարօտ ի սկզբանէ երբ սրբեան» եւն: Գրութիւնս լոյս տեսած է ի «Ճռաքաղ» 1861-2, էջ 17-23 ժ եւ ժԴ դարէն է կամ 1335 տարիէն, ինչպէս յայտնի է սա խօսքէն «ի յԱղամայ եղեւ սկիզբն, մինչեւ ի յայս նոր թուական, եօթնհարիւր ութսուն եւ չորս (=1335), որ զօրացան ազգն Հագարեան, եւն: Վերջաւորութիւնն է այսպէս. «Եթէ զանունս հարցանես, Գրիգոր գերէց եմ անարժան, որ կարգեցի յայսմ տառի տունս թրւով հարիւր եւ քսան: Ատկէ յայտնի է որ 120 տնով 1335ին գրուած «Յիշատակարանը» չի կրնար նոյն ըլլայ Ձեր յիշած Խլաթեցւոյ «Յիշատակարանին» ձեր 460 տնով: Բայց թէ նմանութիւն մը կայ եւ ո՛ր աստիճանի. Դուք միայն կրնաք որոշել:

Ահա ինչ որ ինծի ծանօթ է եւ ինչ որ կրցայ առ այժմ գտնել: Հրատարակութեան արժանի է անշուշտ Խլաթեցւոյ տաղը. այո կարգիները իրենց ժամանակակից պատմութեան համար թանկագին են: Կը սպասեմ նաեւ Մնացորդաց գրոց հրատարակութեան: Յուսով եմ որ ասորերէնը շատ զօրւար չի գար. եւ - որ ամէնէն մեծն է - շատ արդիւնաւոր պիտի ըլլայ մեր գրականութեան քննութեան համար:

Ողջոյն ամէն ծանօթներէն որ հոս են: Մնամ մեծարանօք

Ձերդ

Հ. Յ[ակոբոս] Տ[աշեան]

Բ.

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

«ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ» ՕՐԱԳՐԻ

ՎԻԵՆՆԱ

Revue “Handess Amsorya”

VIENNE (Autriche)

VII/2 Mechitaristengasse 4

Վիեննա 15 Դեկտեմբեր 1896

Մեծարգոյ Բարեկամ

Հազիւ այսօր կրցայ կերպով մ^աւարտել գրեթէ երկու ամիս յառաջ տուած խոստումս, եւ նամակիս հետ կը խաւրեմ առանձին ծրարով: Խոստմանս կատարումն աւելի դժուար եւ շատ աւելի թերակատար եղաւ քան որչափ կը կարծէի:

Նոյեմբերի սկիզբն ազատելով Յուդակէն՝ սկսայ Պատարագամատոյցը շարունակել (որ նոյնպէս քիչ ժամանակէն կ'աւարտի, վասն զի շարողներն ուրիշ գործք չունենալով ձեռքերին՝ ստիպուած էի ձեռագիր հասցընել: Քիչ ժամանակ կը մնար Յունաց ժամագրքով գրադելու: Երկու շաբաթ է որ աւելի ազատ էի, որ ժամանակ երեք յանձնարարութիւն ունէի կատարելիք, Ձեզի տուած խոստումս, Պրոֆ. Կոնիբիրի եւ Ֆէթթէրի համար:

Առաջին երկուքը միայն կրցած եմ ցայսօր կատարել: Յունաց ժամագիրքն ծայրէ ծայր աչքէ անցուցի, որ ամբողջ շաբաթ մը տեւեց, վասն զի մերինին պէս մէկ եւ համառօտ չէ անոնցն. առնուազն 5 գիրք աչքէ անցընել պէտք եղաւ: Համառօտութեան համար՝ պատշաճ տեսայ ժամագրքին ամբողջական ուրուագիծ մը գրել (տես էջ 7-10), ուր ամէն կարեւոր բան համառօտիւ նշանակուած է. միայն անթիւ անհամար Տաղերն, Շարականներն կցուողներն, մեսեդիք եւ մասեր կարելի չէր մի առ մի նշանակել: Ասկէ դուրս ցանկի վրայ ալ նշանակեցի անոնք, որ բառ առ բառ նոյն են. անկարելի էր ամէն փոքր նմանութիւն նշանակել ցանկին մէջ, եւ կարծեմ աւելորդ ալ էր:

Ի հարկէ իմ նշանակածս Յունաց արդի ժամագիրքն է, որ միայն ընդհանուր ծրագրաւ նոյն է Հայոց յետ, իսկ մանրամասնութեանց մէջ շատ քիչ անգամ: Եւ ասի բնական է: Մերը հին յունական ժամագրքին հետ կապ ունի, իսկ Յունաց արդի գործածածը բիւզանդեան է՝ Ը-Ժ դարերուն զարգացած եւ կերպարանափոխ եղած ճիշդ այնպէս, ինչպէս պաշտաման ամէն գրքերը: Իսկ հին յունական ժամագրոց մասին լաւ աղբիւր մը (եւ ո՛չ բնագիր մը) չունէի առջեւս, որ համեմատել կարենայի, թէեւ անո՛վ միայն կրնայ հայերէնին ծագման եւ մասին լոյս ծագիլ: Աչքէ անցուցի նաեւ ասորականն, որ արդիւնք մը չտուաւ: Դժբախտաբար իմ գործածած թէ՛ յունական եւ թէ՛ ասորական բնագիրները Հռոմ տպագրուած են, որոնք՝ ինչպէս շատ տեղ տեսնուեցաւ համառօտեալ բնագիր մը կը ներկայացընեն:

Թերակատար է ըստ այսմ իմ ըրածս, բայց կարծեմ նաեւ ասով բաւական իւր նպատակին: Եթէ ապագային աւելի միջոց ունենամ աւելի զբաղելու, գանց չեմ ըներ արդիւնքը յայտնելու:

Շատ ժամանակ չէ՝ լոյս տեսած է բաւական երկար (անգղ.) յօդուած մը Հայոց ժամագրքին վրայ՝ Յիմմերման հայագէտէն: Յօդուածս մեծ լոյս մը չի սփռեր եւ միայն Յունաց եւ Հայոց ժամագրքին ընդհանուր գծերը կը համեմատէ: Բայց որովհետեւ կրնայ օգտակար ըլլայ՝ կը ջանամ թարգմանութիւն կամ քաղուածք մը դնել «Հանդէսի» մէջ մօտ ժամանակներս:

Մագիստրոսի մասին Ձեր գրածը կարծեմ մերձակայ թուերէն մէկուն մէջ լոյս պիտի տեսնէ թարգմանութեամբ: - Ի՞նչ եղաւ Մնացորդացը, որ լաւ եւ չափաւոր արդիւնք մըն է մեր գրականութեան համար, եւ որու հրատարակութեան կը սպասեմ անհամբեր:

Ճամբորդութեան յոյսս առ այժմ ջուրն ինկաւ. թէեւ այնպէս յոգնած եմ որ բռնութեամբ գրեթէ կրնամ շարունակել զբաղմունքներս: Յոյսս գարնան կամ գոնէ ամառուան վրայ է: Տեսնենք:

Ողջոյն ամէնէն, ի մասնաւորի Հ. Վահանէն, որ ապաքինած է, թէ եւ ոտքը տակաւին բոլորովին լաւ չէ:

Ողջունիւ մեծարանաց մնամ

Հ. Յ[ակոբոս] Տաշեան

Գ.

Վիեննա, 16 Մայիս 1901

Մեծ բարեկամ,

Ձեր վերջին 24 Ապր[իլի] բարեկամականին այսօր միայն կրնամ պատասխանել, ուրիշ գործով չափազանց ծանրաբեռնուած ըլլալով: Նիւթական մասը դիւրին է կարգադրել: Սանասարեան վարժարանի ցուցակը կը խնդրուի: Իսկ Պալեանի ցուցակներու մասին խնդրեցի Վ. Հ. Բառնաբասէն, որ ասանկ բաներու մէջ աջողակ է եւ արդէն գործ ունի շատերուն հետ. եւ սիրով յանձն առաւ: Ուստի ապահովապէս կը գտնէ գրքերը եւ կը խաւրէ: Մեծ բաներ չեն, քանի մը տետրակներ՝ մանրագիր ցուցակներ մասնական փոքր հաւաքմանց մէկ քանիին:

Ծանրակշիռ է Երոստաղէմի Աւետարանի խնդիրը: Ձեզի կարծակից եմ որ հնութեան վրայ կասկածելու նպաստող նշաններ կան, թղթահամարներն վերին լուսանցքի վրայ գունաւոր չըջանակի մէջ նշանակելը սովորական չէ անշուշտ: Սակայն ասի կրնայ երկրորդական ըլլալ. քանի որ ուրիշ գրչագրաց ալ սովորութիւն է թուանշաններն նշանակել գունաւոր՝ բուն միագոյն՝ չըջանակի մէջ նոյնպէս (աւետարանաց բաժանմունքն կողի լուսանցքներու վրայ եւն:): Աւելի կասկածելի է մագաղաթին մաքուր եւ անարատ մնալը, կամ՝ ինչպէս կը վկայէ «քիչ տեղ դեղնած»: Այսու հանդերձ որոշիչ պարագայ կրնայ ըլլալ այս միայն այն դէպքին, երբ ձեռագրին պատմութիւնը գիտնաք, (-որ ինծի անծանօթ է-): Խաղաղ վանքի մը մէջ խնամով եւ անվտանգ պահելով՝ կրնար անշուշտ մաքուր մնալ դարերով: Մանաւանդ որ դարերու դրոշմն այս ալ կրած է. գոնէ կ'ըսուի թէ «ստորին լուսանցքներն մաշած են», շատ տեղ թղթեր ինկած են եւն:

Շատ աւելի ծանրակշիռ է բնագրի խնդիրը, այն որ բնագիրն աւելի սովորականին կամ տպուածին համեմատ է: Այս կէտը միայն մանրամասն ուսումնասիրութեամբ կրնայ վճռուիլ: Վասն զի նախ հարկ է ցուցնել թէ ո՞րչափ հնութիւն ունի սովորականը: Դժուարութիւնն ա՛յն է որ «սովորական» կոչածնիս ալ ապահով բնագիր չէ, այսինքն տպագիրը քննադատեալ չէ: Առանց այս կէտը վճռելու՝ դժուար է ըսել թէ ինչո՞ւ կարելի պիտի չըլլայ որ սովորական բնագրին յատուկ տպագրութեամբ գտնուէր նաեւ է դարու սկիզբը:

Միայն Մատթ. Ի է համեմատելով կը գտնեմ որ Երուսաղէմ = Տպ. համար 3, 25, 29, 48, 60 – Իսկ Մոսկ. = Տպ. համար 9. բայց Մոսկ. = միւս ձեզր. սովորականին (տես Զոհրապ) համ. 29, 54, 56 – փոխադարձաբար Երուսաղէմ = միւս ձեզր. սովորականին կամ 54. ո՛չ միոյն համեմատ համ. 46: Ուղղագրութեան կէտերը (ոմանք = ումանք) չհաշուեցի, քանի որ սա ընդհանուր խնդիր մըն է, տակաւին քննութեան կարօտ: Ուստի առանց մանրամասնութեանց եւ քննութեանց վճիռ մը տալ չեմ համարձակիր:

Խնդիր չկայ՝ յիշատակարանն օտար ձեռքէ է, եւ անշուշտ ո՛չ գրչէս, ուստի այն «Գրիգոր Երէց» թերեւս լոսկ լուսանցադիր մըն էր՝ ստացիչը. Անշուշտ անսովոր է եւ ձեւը Հյց. թուական Յիշատակատան (նոր ձեռքէ նորոգուած ճիշդ թուականին մասն՝ ինչպէս անձամբ տեսնելով ստուգեցի) «Գրեցաւ սուրբ աւետարանս ՆժԵ թուականութեան Տեառն մերոյ, հրամանով եւ ծախիւք» եւն. դարձեալ «Ես Սարգիս անարժան քահանայ գրեցի զսուրբ աւետարանս ՆժԵ թուականին թուագրելոյ ի վերայ մեր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» եւն: Ահա այս թուականաւ (-գոր եթէ բառացի փրկչական՝ առնունք, կ'ըլլայ = 415), կը մեկնէր բանասէր մը իբրեւ Լուսաւորչի թուական, ուստի $300+415 = 715$. (գրուածքն է ի «Բագմավէպ» 1897, էջ 497-99): Այս խնդրոյ մասին ընդարձակ խօսած եմ եւ յիշատակարանը դրած եմ «Ակնարկ մը հայ հնագրութեան վրայ» գործին մէջ. (Վիեննա, 1898, էջ 181-188): Իմ կարծիքս էր թէ ՆժԵ լոկ Հայոց թուական կարծելու է (=966): Յետոյ երբ անձամբ տեսայ յիշատակարանն ու ձեռագիրը՝ կարծիքս փոխելու նոր բան մը չգտայ: «Լուսաւորչի» կարծել լոկ ենթադրական բան մըն է եւ կռուան մը չունի, կը մնայ՝ կա՛մ բառացի առնելու է ՆժԵ «Տեառն մերոյ» (=415) կա՛մ Հայոց թուականն է. (-եւ անհնար չէ՝ անկէ հաշուել «Թագաւորելոյ Յիսուսի» թուական մը, կամ լոկ այնպէս անուանել Հայոց թուականը՝ գոլտ եկեղեցական ըլլալը չեշտելով): Բայց այս խնդիրները շատ հեռուն կը տանին զմեզ, եւ ո՛չ ալ զԶեզ ձանձրացընել կրնամ երկար նամակովս:

Կը սպասեմ «Մնացորդաց» գրոց մասին Ձեր գրածին: Իմ քննութիւնս դժբախտաբար մնաց տակաւին այնպէս անաւարտ: Տարւոյս սկզբէն վեր ոչինչ կրնամ սկսիլ, ո՛չ ալ շարունակել սկստածները: Նոր գործ մը, գոր սկսելուս կէս մը կը զոյժամ (-վասն զի շատ յոգնեցուց զիս եւ հակառակ ամէն ջանքի կրիայի քայլերով յառաջ կ'երթայ,-) բոլորովին բռնած է ժամանակս, եւ ջանալու եմ որ Սեպտ. ամսոյն լոյս տեսնէ գոնէ Ա մասը: Հայոց

լեզուի եւ Հայկաբանութեան մասին ընդարձակ գրութիւն մըն է, հանգուցեալ Հ. Քերովբէի Սպենեան, զոր հարկ էր ճոխացընել ամէն կերպով, մանաւանդ հայ լեզուի հնագոյն կամ նախամեսրոպեան ժամանակաց խնդիրներով: Ես դեռ այս մասին վրայ կ'աշխատիմ: Ամբողջը՝ երկու մասէ՝ Գաթրճեանի «Պատարագամատոյցէն» շատ աւելի մեծ է, կը կասկածիմ՝ գրեթէ կրկինն, եթէ այս ընթացքով շարունակուի, բայց պիտի ջանամ ջետ-մեսրոպեան ժամանակները կարճ կապել: Այս մասին թերեւս յետոյ ուրիշ անգամ:

Այս առթիւ պարտքս է յայտնել շնորհակալութիւնս այն բարեացակամութեան համար, որով հաճած էիք խաւրել «Հին Հայաստանի մի քանի աշխարհագրական անունները եւ վանաց արձանագրութիւնները» գործը: Եթէ կրնամ համարձակիլ՝ կը խնդրէի որ համառօտիւ շարադրէիք էական կէտերն եւ արդիւնքը: Ծիշղ հիմայ Ուրարտեանց եւ Հայոց խնդիրը կը գրեմ յիշեալ գործոյն մէջ. եւ կը բաղձայի լոկ յիշելէն աւելի բան մը գրել կարենալ Ձեր գրուածին մասին: Իսկ ժամանակի սղութիւնը կ'արգիլէ որ բառարանով սկսիմ աշխատիլ լաւ հասկընալու ուսերէն: Ի հարկէ եթէ Ձեզի նեղութիւն մը կամ գործոց պարապ արգելք մը չէ խնդրածս:

Ողջունիւ ամէնուն որ հոս են՝ մնամ յարգանօք

Ձերդ

Հ. Յ[ակոբոս] Տաշեան

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԻԽԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԲԱՀԱՅՐ
ՀԱՅՐ ԱՐՄԷՆ ԱՐՔ. ԱՅՏԸՆԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻԶ,
ԳՐՈՂ ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆԻՆ

20 Յունուար 1898

Վիեննա

Պատուական Ազնուասիրտ Տէր

Յաւագին գրութիւնդ ցաւով կարդացի եւ մանաւանդ անո՛ր համար որ արդէն շատ օր յառաջ օտար լրագրաց մէջ տեսայ

անոնց ամէնուն մահապարտութեան վճիռը տրուած, անշուշտ ցայ-
սօր գործադրուած եւս: Ի Փարիզ ակելի դիւրին է ստուգելը:

Մարդասիրական առաջարկութիւնդ՝ գիտես սիրելի, որ Ա-
ղաչեցելոյն ոչ բարի կամքէն եւ ոչ սրտին ազնուութենէն կախում
ունի, այլ ժամանակիս պարագաներէն եւ մանաւանդ լայնատարած
Տէրութեան պէսպէս յարաբերութիւններէն: Ինք ամէն տեսութեան
տեղեկութիւն կ'ուզէ ինձմէ. եւ մօտ օրերս միխթարեալ սրտիւ
ինքնին կ'ըսէր, թէ հիմայ բաւական խաղաղացած են իրերը: Սա-
կայն, ինչպէս ըսի, ի՛նչ օգուտ որ իրմէ կախում չունի գործոց
ընթացքն:

Եմ ամենայն սիրով

Աղօթարար
Հ. Արսէն վ. Այտընեան
Արք. ընդ. Աբբայ

ԳԱԹ. Ա. Զոպանեան 298-299 I ք., ք.1, ձեռագիր, քննարկ

ՀԱՅՐ ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆԻՆ ՀԱՍՑԷԱԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿ՝
ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ
ԸՆԴՈՐԻՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ա/թ

Գերապատիւ Տէր Տէր Ղեւոնդ Վարդապետ Ալիշան

Ի Վենետիկ

Զպատուական նամակ Ձեր, գտողեալն ի 12 փետրվարի անձ-
կալից ստացայ ուրախութեամբ սրտի, որում ի պատասխանի փու-
թամ ի ծանուցանել գերապատուութեան Ձերում թէ զնուէրն Ձեր
թանկագին, զՍիսուան ստացեալ եմ արդէն ի ձեռանէ Տեառն Հա-
մագասպայ Սափարեան, միաբանի բարեջան ուխտիդ, որում եւ
փոխարինեմ զանբաւ շնորհակալութիւն իմ:

Առաքեալ առ Ձեզ յիշատակարանք եթէ երեւին ձեռագիր
աւետարանաց միայն այնու աղագաւ է, զի ի յիշատակեալ կողմանս
միայն եւ եթ աւետարանք երեւեցան. պահեալք յեկեղեցիս, զայլ

մատեանս դուն ուրեք պատահեցան մեզ տեսանել յայցելութեան մերում եւ որք յերեւելոցն կրէին գլխատակար[ան]սն, չթողուն անտես: Որպէս կանխօրէն ծանուցեալ եմ, ձեռագիրք, չեւ եւս օրինակեալ յիշատակարանօք, մնան ի Սանահին եւ ի Հաղպատ եւ ի գիւղօրայս Լօււոյ Գաւառի, առ ի չգոյն ի կողմանսն վստահելի օրինակողի. եթէ յաջող ընծայիցին դէպք եւ ժամանակ, օրինակել տալ եւ առ Ձեզ առաքել ոչ բնաւ դանդաղեցայց:

Ի հաւաստիս խորին եւ անկեղծ յարգանացս առ Ձեզ մնամ:

ՀԱԱ. ֆ. 57, ց.1, գ.160, ք., ձեռագիր, քնագիր

ՀԱՅՐ ՅԱԿՈԲՈՍ ՏԱՇԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆԻՆ

Ա.

Վիեննա 24 Դեկտեմբեր 1898

Մեծարգոյ Բարեկամ Պր. Արշակ Զոպանեան

Ներողամիտ կը գտնուիք անշուշտ երկարատեւ լռութեանս: Ձեզի անծանօթ չէր դրութիւնս անցեալ տարի, որ ստիպեց զիս, ահա գրեթէ տարիէ մ'աւելի է, հեռու մնալ Վիեննայէն՝ նախ գիւղագնացութեամբ եւ յետոյ (Մայիս 26էն վեր) ուղեւորութեամբ յԱրեւելս, որ դժբախտաբար անյաջող եղաւ. Կ. Պոլիս միայն ոտք դրի եւ ո'չ քայլ մ'անդին, ուստի պէտք չէք զարմանալ որ շուտով վերադառնալ ստիպուեցայ եւ ո'չ երկար զբաղիլ էջմիածնի գրատան գանձերով (ինչպէս գրած էիք առ վ[երապատուելի] Հ[այր] բառնարաս գրած քարտին մէջ): Պատճառը պարզ է, ո'չ միայն էջմիածին, այլ եւ ո'չ Տրապիզոն ու Կարին հայրենիքս կրցայ ոտք կոխել: Ինչո՞ւ ճիշդը ես ալ չեմ գիտեր. բայց կ'երեւայ գիտութեամբ զբաղիլը մեծ ոճիր մըն է եղեր ժ.Թ. դարուն վերջերը, որով մեծապէս վտանգաւոր՝ նաեւ հայրենիքն այցելել իբր 20 տարի բացակայ գտնուելէն ետքն ալ: Կարճ կապեմ. Յունիս 1էն վեր՝

երբ Կ. Պոլիս մտայ, մինչեւ նոյ[եմբեր] 11 անընդհատ աշխատեցայ սա անիծեալ թեգքերէն ձեռք բերել, եւ չեղաւ: Խնդիրը գնաց Ներքին ու Արտաքին գործոց նախարարութեանց, անկէ վեցիրին, որ հրաման տուաւ, բայց այս հրամանն ետ առնուեցաւ անմիջապէս Պալատէն ուստի -№3 - իրատէ պիտի ելլէր եւ տակաւին պիտի ելլէ: Ես Աւստրիոյ պաշտպանութեան թուղթն ունենալով, անոնց հիւպատոսարանի եւ դեսպանատան ձեռօք միայն կրնայի գործել, որոնք չկրցան բան մը յաջողցընել:

Նոյնպէս Ռուսիա մտնելու համար՝ անցագիրս visé ընել տալ կարենալու համար յատուկ հրաման պէտք էր գալ Պետրբուրգի Սինոդէն. (-վասն զի կաթոլիկ քահանայից համար այս օրէնքը կայ:) Յունիսի սկիզբը խաւրուեցաւ խնդրագիրը. իսկ պատասխանը չեկաւ նաեւ ցայսօր, կամ թերեւս ժխտական պատասխան եկաւ, զոր ինծի իմացընել չուզեցին աւստր[իական] պաշտօնեայքն ի Կ. Պոլիս:

Այսպէս կամ այնպէս, հինգ ամիս ի զուր Պոլիս սպասելէն ետքը, ձմեռը մերձենալով, ստիպուեցայ Վիեննա դառնալ, եւ տակաւին կը սպասեմ ելից խնդրին. երկրորդ փորձ մ'ալ պիտի ընեմ անշուշտ. բայց կը յաջողի՞ արդեօք՝ խնդիր է:

Զարմանք կ'ազդէ այն պարագայն որ թէ՛ Տաճկաստան եւ թէ՛ Ռուսաստան միօրինակ ընթացք մ'ունեցան այս պարզ ուղեւորութեան խնդրին, եւ ա'յս կէտն անըմբռնելի կը մնայ: Ապա թէ ոչ՝ Տաճկաստանի համար բաւական լուսաւորուեցաւ խնդիրը, վասն զի նախ շատ բարեխիղճ լրատուք գիտ լաւ մը սեւցուցած կ'երեւան՝ իբր թէ Փարիզ գացած ճառեր խօսած ըլլամ եւն, եւն, գոնէ եթէ կրնամ հաւատալ առնուած տեղեկութեանց. նոյնպէս թէ բարձրաստիճան մը ջղերուն դպած ըլլայ աւստրիական անցագիր ունենալս, Պոլիս Հայոց դպրոցներն եւն այցելելս եւն են: Ինչ եւ իցէ նայինք ի'նչ ելք կ'ունենայ. թերեւս Աւստրիոյ դեսպանատունն իւր տուած խոստումը՝ խնդիրը կարգի բերելու յարմար առթիւ, ի գլուխ հանէ, թէեւ յոյս չունիմ:

Կը խնդրէի որ այս գրածներս ծածուկ մնային. հրապարակ ելլելով պարզապէս աւելի վնաս կայ խնդրին քան օգուտ, մանաւանդ քանի որ վերջնականապէս վճռուած չէ:

Կրնաք ուրեմն գուշակել թէ ի'նչ տրամադրութեան մէջ դարձայ. ուստի առ այժմ գործք մ'անգամ սկսիլ՝ մտաց կարեւոր ամփոփութեամբ՝ դժուար է:

Շնորհակալութեամբ ստացայ «Անահիտ» թերթիդ թիւը, զոր խաւրել բարեհաճած էիք: Կը մաղթեմ որ անձանձրոյթ եւ յաջողութեամբ շարունակէք սկսած լաւ գործքն, որ գեղեցիկ գաղափար մըն է, միանգամայն յուսալով որ պէտք եղած դիւրութիւնները կ'ունենաք աւելի զարգացնելու թերթը: Մեծ ուրախութեամբ կարդացի Ձեր թերթին երկու թուերն ալ. եւ ուրախութեանս արտայայտութիւնը թերեւս ցուցնէի մասնակցելով Ձեր թերթին գրուածքով ալ, եթէ չըլլար արդի անտրամադրութիւնս եւ յոգնութիւնս, եւ եթէ չորուցամաք գրող մը չըլլայի՝ շատերուն համար բոլորովին չոր ու հին նիւթերով գլուխն ուռած: Ապագան թերեւս դարման բերէ երկուքին ալ:

Առ այժմ մաղթելով Ձեզ յաջողութիւն եւ լաւագոյն օրեր մերձակայ Ամանորայ առթիւ՝ մնամ յարգանքօք:

Ձերդ

Հ[այր] Յ[ակոբոս] Տաշեան

ԳԱԹ, Զոպանեան Ա., 6903-05 Իթ., ձեռագիր, քնագիր

Բ.

Congregation
der Mechitaristen
in Wien

Վիեննա 24 Յունիս 1900

Մեծ. Ա. Զոպանեան

Շատ ուշացուցի Ձեր վերջին պատուական գրութեան պատասխանը, բայց անշուշտ անկարելի էր, ինչպէս արդէն գուշակած էիք Ձեր թղթին մէջ: Խնդիրը հոն է որ առանց Գեր. Աբբահօր հրամանի կարելի չէր ինձի մասնակցիլ համաժողովին, իսկ Գեր. Աբբահայրը բոլորովին հիւանդ՝ անկարող էր եւ ցայժմ տակաւին որեւէ գործքի, թէեւ ապաքինած է հիւանդութենէն: Այս էր պատճառը որ յապաղեցի անմիջապէս պատասխանելու որ ժխտական պիտի ըլլար, ինչպէս գոնէ գործքով եղաւ ալ: Ի հարկէ ուրիշ

դժուարին կէտ մ'ալ կար ինծի համար, Հայոց հեթանոսական կրօնքին վրայ բանախօսութիւն մ'ընել կամ խօսիլ դժուար էր ինձի որ գործնական դիւրութիւն չունիմ գաղ[ղիական] լեզուն վարժ խօսելու. իսկ գերմաներէն լեզուաւ Պարիսի մէջ հայագետ մը կողմանէ՝ կարծեմ անպատշաճ էր: Զինչեւիցէ՝ չեղաւ: Յամենայն դէպս մեծապէս շնորհակալ եմ Ձեզ որ բարեհաճած էիք ինծի համար շատ պատուաբեր առաջարկութիւն մ'ընել համաժողովին վարչութեան, եւ եթէ առիթ կայ կամ պէտք տեսնէք՝ խնդրեմ բարեհաճիք յայտնել խորին շնորհակալութիւնս նաեւ անոր:

Բաղձանքս է գոնէ ցուցահանդիսին առթիւ Պարիս նոր եւ զՁեզ վերստին տեսնել, բայց չեմ գիտեր, աս ալ պիտի ըլլա՞յ, թէ ոչ, ըստ երեւոյթին արգելքներն որ շատ կան, բառնալ կարելի պիտի չըլլայ:

Ներէիք որ այժմ համառօտիւ կը փակեմ, ուրիշ առթիւ աւելի մանրամասն, մաղթելով յաջողութիւն Ձեր գրական գործոց, յատկապէս յաջողութիւն «Անահտին» մնամ յարգանքօք

Զերդ

Հ[այր] Յ[ակոբոս] Տաշեան

ԳԱԹ, Զոպանեան Ա. 6903-05, ձեռագիր, քնագիր

Գ.

Վիեննա 16 Մարտ 1901

Մեծապատիւ Պր. Ա. Զոպանեան

Ձեր փետր[ուար] 8 թուականաւ պատուականը ընդունած եմ:

Այդ ալ յանձնեցի Հանդիսի խմբագրապետին որ կը կատարէ Ձեր բաղձանքը: Այս առթիւ կը յայտնեմ շնորհակալութիւնս «Անահտին» թուրուհի համար, գործնք հաճեցաք խաւրել ինծի, եւ մաղթել Ձեզի յաջողութիւն ձեռնարկած լաւ գործին մէջ:

Առողջութիւնս եւ գործերս կը հարցընէք: Առողջութիւնս փա՛ռք Աստուծոյ լաւ է, գոնէ ոչինչ տարբեր անկէ զոր գիտէք, նոյն է նաեւ ընդհանուր կացութիւնը, եւ գործերը, որ Ձեզի անծանօթ չեն: Եթէ փոփոխութիւն մը կայ՝ ան ալ աչքերուս վիճակն

է, որ յետ գճետէ երկարանալու վրայ են, չգիտեմ յոգնութեա՞ն հետեւանօք թէ ի՞նչ: Բայց վերջապէս հեռատես ըլալը – որմէ այժմ չա՛տ ու չատ հեռի եմ արդէն – լաւ բան է, բայց ի՞նչ ընենք երբ չկայ այլ եւս: Գոհ եմ եթէ աւելի եւ չատ աւելի չգէշնայ:

Նոր գործք՝ բացի Հանդիսէ (որ դանդաղ կ'ընթանայ դրժ-բախտաբար) է Հ. Սպենեանի հայկաբանութիւնը կամ հայոց լեզուի ուսումը, որ մամլոյ տակ է, եւ գոր կը ջանամ լրացնել, ինչպէս ըսի Գաթրճեանի «Պատարագամտոյցքը» (նոյն ալ գրով ու դիրքով): Քիչ մը դժուար է անո՛ր համար որ լեզուագիտական է եւ աւելի մասնագէտ լեզուագէտ մը պէտք էր գործին համար: Սակայն կը ջանամ ընել որչափ կրնամ: Ձեմ գիտեր ե՛րբ կրնայ գոնէ ամառն հրատարակուիլ: Անոր համար կը խնդրեմ որ առ այժմ մեջտեղ չ'ելլէ, վասն զի գործը կրնայ շատ ուշանալ:

Ներեցէք որ այս անգամ այսչափ քիչ կրնամ գրել:

Ուրիշ անգամ յուսամ աւելի պարապ ունենալ եւ աւելի գրելիք: Մնամ մեծարանօք

Ձերդ

Հ[այր] Յ[ակոբոս] Տաշեան

ԳԱԹ, Զօպանեան Ա., 6903-05 ք., ձեռագիր, քնագիր

ՀԱՅՐ ՍՏԵՓԱՆՈՍ ՍԱՐԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐՐԱՀԱՄԵԱՆԻՆ

17 Նոյեմբեր 1899
[Վեներտիկ]

Մեծարգոյ եւ սիրեցեալ եղբայր
ազնիւ եւ պատուական Տ. Սարգիս Վ.

Ընդունեցայ Ձեր սիրալիր թուղթը Հոկտ[եմբեր] 20 թուականաւ, նոյնպէս ընդունեի եմ Հոկտ[եմբեր] 2 թուակիրն ալ: Ես վերջինս դեռ չընդունած՝ խնդրեր էի Տպարանի Տեսչութեանէն գրել առ Մուպայաճեան իմանալու համար թէ ինչո՞ւ չէք գրեր ինձի:

Վասն զի Աղեքսանդրապոլէն թուղթ բնաւ չեմ առած: Ձեր խնդիրը յայտնեցի այժմ Տպարանի Տեսչութեան:

Խնդրեմ, Սիր[ելի] եւ մեծ[արգոյ] վարդապետս, ինձ ղրկուած թղթոց հասցէին վրայ մի՛ գրէք *direction*, եւն., այլ, պարզ իմ հասցէս, որպէս զի չփոթութիւն չելլէ:

Գալով Ձեր վերջին թղթոյն յորում փափաք կը յայտնէք, տղոց փութով առաքման ի վանս, մեծապէս ուրախ եմ եւ խորին շնորհակալութիւնքս կը յայտնեմ, Ձեր ազնիւ եւ անձնանուէր գործակցութեան համար: Եւ որպէս զի դուք ալ կարենաք դիւրութեամբ յղել տղաքը ահաւասիկ անոր կերպը:

Ի Պաթում ունինք մեզ յոյժ ծանօթ եւ սիրող վանացս Յովսէփ Պայեան, Պետրոս Նորիխան աղաները, նոյնպէս Շապանեան, իսկ Լոյտի ընկերութեան հոն եղող տեսուչը շատ ծանօթ է Հ. Մինաս վ. Նուրիխանի:

Արդ Դուք 60-65 ռուբլիով տղաքը կը յղէք ի Պաթում, եւ հոն ամէն ինչ կ'ըլլայ յաջողութեամբ, իսկ մնացած ստակը (եթէ՞ մնայ) տղաքը քովերին պահեն եւ բացարձակ մէկու մը չտան մինչեւ որ հասնին առ իս, որպէս զի զգեստեղինաց մասին Ձեզի կանխաւ գրածս կարենամ կատարել: Շոգենաւէն ամենեւին դուրս չելլեն:

Տղոց ճամբայ ելլելը հաճէիք իմացընել առ Վ. Հ. Գրիգոր ճէլալ ի Կ. Պօլիս, հասցէին վրայ ղնելով *in assenza P. Atanasio Tiroyan etc.* եւ ինձ եւս փութով իմացընէիք:

Բայց այս վերոյիշեալ իրաց եւ ոչ մին ըրէ՛ք մինչեւ որ Ձեզի թուղթ չգայ վերոյիշեալ աղաներուն մէկէն կամ միւսէն, որոնք Ձեզի կ'իմացընեն թէ արդեօք տղաքը ղրկելո՞ւ էք ի Պաթում եւ ե՞րբ: Ապա թէ ոչ՝ կրնայ ըլլալ անյաջողութիւն մը դարձեալ տղաքը ետ կը դառնան:

Այսօր ես ի Պաթում կը գրեմ եւ կը ղրկեմ փութով:

Կ'երեւի որ մեր նամակներէն մին կամ միւսն կորսուած է. Կոմիտասայ լուսանկարները քանձնաբարեալ ղրկել եմ. ընդունեցա՞ք, հիմա. Գալուստն ալ իւր թղթոյն պատասխան կը սպասէ. կը խնդրէր մօրմէն 3-4 ռ. իւր լուսանկարը հանելու համար. հաճէիք իմացընել որ տղուն երկու տող նամակ գրեն:

Յուսամ թէ ներկայս անդորրացուց թէ՛ զՁեզ եւ թէ՛ տղաքը եւ պարզեց ամէն խնդիր:

Խնդրեմ Կոմիտասին եւ Գալուստին մկրտութեան թուղթերը յղէիք փութով նոյպէս գալիքներուն:

Կարօտ եւ փափաքող Ձեր անձամբ տեսութեան, եմ ամենայն յարգանք Մեծ. Սիրելի վարդապետիդ:

*Խ[ոնարհ] ծ[առայ]
Հ. Ստեփանոս Սարեան
Կ[րօնաւոր] Մ[խիթարեան]*

Յ.Գ. Մեծ վարդապետ, արդեօք ներելի է գընել թէ տղօց անունք ինչու՞ փոխուեր են, լաւ ինչու՞ առաջին առաջարկուածին:

*Քալիք տղաք զգուշանան մրսելէն, ապա թէ ոչ՝ ծանր հիւ-
ւանդութեամբ կը հասնին, աղէկ հագուին:*

ՀԱԱ. Փ. 967. ց.1, գ.19, ք.81, 82, ձեռագիր, քնագիր

ՀԱՅՐ ՍԻՄՈՆ ԵՐԵՄԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ԳՐԻԳՈՐ ԶԱԼԽՈՒՇԵԱՆԻՆ

Venise S. Lazare
5 Նոյեմբեր 1901

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ
IMPRIMERIE ARMÉNIENNE

Ազնիւ Պ. Զալխուշեան

*Գիւղագնագութեանս պատճառաւ Ձեր գրութիւնը չատ ուշ ձեռքս հասաւ. հաւատացէք Սիրելի Զալխուշեան, որ խիստ դառ-
նացայ երբ «Մշակին» մէջ կարդացի առ մեծ բանաստեղծն եղած
երախտագիտական ցոյցերու մէջ «Բազմավէպի» պարսաւելի լռու-
թիւնը. «Մշակը» կարդալէն յետոյ ընդունեցայ Ձեր պատասխանը,
ամէն բան անցեր էր, եւ մահարձանի թարմ ծաղիկներն ալ արդէն
թարչամած, ձեռագիրն այլ չէր կարող ո'ւնէլ դարման մ'ընել:*

*Ուստի ներեցէք Պ. Զալխուշեան այս տխուր միջադէպին,
մտադիր էի արդէն առանց Ձեր յայտարարութեան հանդիսին առ-
թիւ խնդակցութիւնս եւ մաղթանքներս յայտնելու, սակայն հան-
դիսի որոշեալ օրն ալ չէի գիտեր: Ես այժմ որքան եւ ուշ, բայց
պարտք կը զգամ իբրեւ Մխիթարեան մը, իբրեւ անհատական հայ*

մը՝ գնահատել Ձեր այն ճիգն ու վաստակը որով ուզեցիք մեր պաշտելի խօսնակը անմահացրնել, աշխատեցէ՛ք տարածել անոր համբաւը, վասն զի ով որ կը կարդայ Գամառ Քաթիպան, կը սորվի անկեղծ Ազգասիրութիւն:

Միշտ Ձերդ
Խ[ոնարհ] ծ[առայ]
Հ[այր] Ս[իմոն] Երեմ[եան]
Խմբ. «Բազմավէպի»

ԳԱԹ, Ռ. Պատկանեան 1226, Թ-1, ձեռագիր, բնագիր

ՀԱՅՐ ԱԹԱՆԱՍ ՏԻՐՈՅԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ
ԲԱՆԱՍՏԵՂԾ ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆԻՆ

Ա.

1902 Յուլիս 18 (Ն-Տ)

Fiesso d'Artico
Villa Armeni (Italia)
(Prov. di Venezia)

Ազնիւ եւ Սիրեցեալդ Իմ Դանիէլ

Այսօր հօրդ հասցէին դրկեցի քեզի յանձնուելու համար՝ իմ լուսանկարներէս 10 հատ, որոնք յարմար առիթով արձակուրդի օրերուն մէջ կամ յետոյ ըստ պահանջելոյ պարագայից՝ կը յանձնարարեմ որ հասցընես իւրաքանչիւր աշակերտի ձեռքը, ըստ որում անուննին գրած եմ իւրաքանչիւր հատին թիկուքը:

Ասոնք Դդ. դասարանի աշակերտք են, եթէ Գդ. եւ Բդ. դասարանիներն ալ ժամանակին ցուցակ մը դրկեն եւ գիտնամ փափաքողեաց անունները՝ կը դրկեմ նաեւ անոնց ալ, որպէս զի պակսած չըլլամ իրենց ալ տուած խոստումէս՝ երբ վարժարանէն մեկնելու օրերուն մէջ փափաքեցան եւ խնդրեցին եւ ես խոստացայ վենետիկն դրկելու:

Հսեցի որ Վարժարանէն հեռացուած աշակերտներէն երեք կամ չորսը դարձեալ ընդունեւր է Վարիչն. եթէ յիրաւի անկարգ տղաներ եւ անբարոյականներ էին արձրկուածներն՝ (ինչպէս որ գրեւր էր վարիչն ի Վենետիկ) ինչո՞ւ դարձեալ կ'ընդունին. եւ եթէ այնպիսիք չէին (ինչպէս համոզուած եմ ես) ինչո՞ւ կը հեռացուէին. որ եւ իցէ կերպով անտրամաբան գործուած կը տեսնեմ եւ վայրկենական զգացմանց տեղի տալով, այս ինչ կամ այն ինչ անձի ազդեցութենէն ընկճուած վարչութիւն մը, առանց հաստատուն սկզբունքի եւ ուղղութեան:

Կը լսեմ որ վարիչը Վենետիկ պիտի գայ՝ ցաւալի դիրքին (վարժարանին) դարման մը գտնելու յուսով, եւ սրտանց կը փափաքիմ որ յոյսն իրականութիւն գտնէ: Կը յուսամ եւ սրտովս կ'ըղձամ որ անցագրի եւ ճանապարհի ծախուց դիւրութիւն գտնելով՝ յաջողի պատուական հայրդ ուղարկել զքեզ Վենետիկ վարժարանը. որուն տեսուչը Հ. Մինաս Նուրիխան այս օրերս փոխուեցաւ եւ ուրիշ բարձրագոյն պաշտօնի դրուեցաւ, եւ իրեն փոխանակ ընտրուեցաւ եւ քիչ ժամանակէն իւր պաշտօնը վարել պիտի սկսի այնպիսի անձնաւորութիւն մը՝ որուն վարչութեան ներքեւ վստահ եմ որ երջանիկ եւ լաւ ընթացք մը պիտի կատարէք Վենետիկ եկողներդ. այս անձնաւորութիւնն է Սարեան Հ. Ստեփանոս վարդապետն, որ իմ նախկին աշակերտներէս է եւ այժմ ալ սիրելի եւ մտերիմ, եւ վարչական դրութեան մէջ գրեթէ ըստ ամենայնի համամիտ իմ ունեցած գաղափարացս եւ ուղղութեանս:

Այս տարուան ընթացքին մէջ Քաղկ[եդոնի] վարժարանին անունը այսքան Կ. Պոլսոյ հասարակութեան բերանը եւ նաեւ օրագր[ը]աց մէջ ծամծմուելէն յետոյ եւ վարկաբեկ ըլլալէն յետոյ, արդեօք քանի՞ աշակերտ պիտի ունենայ Սեպտեմբերի մուտքին ժամանակ, համարելով ձրիավարժները...

Հետամուտք՝ իրենց նպատակին հասած էնթրիկներով նոյն վարժարանը ոչնչացնելու մէջ... Ամօթ իրենց:

Այս մասին այրած սրտով կը գրեմ այժմ, որովհետեւ եթէ փափաքնուն հասնելէն յետոյ՝ լաւագոյն վարէին՝ ըսելիք չունէի, մանաւանդ թէ պիտի ուրախանայի եւ զիրենք գովէի. որովհետեւ ես խղճով եւ սրտով աշխատեւր եմ ամէն մէկ աշակերտաց վրայ, եւ երբ ինձ առաջարկուեցաւ որ իբր միակ դարման մատակարարութեան հաւասարակշռութիւն պահելու եւ նախկին 22000 Քրանքաց պարտքը գոցելու՝ վարժարանին ձրիավարժ աշակերտները

ըստ կարելւոյն փութով հեռացընեմ (ինչ որ յաջորդա փորձեց ընելու մասամբ մի՛ եւ հետեւանքը տեսաւ), ես գրեցի առաջարկողաց որ ես ինքն 25 անգամ պատրաստ եմ հրաժարելու գործէն, քան թէ 25 աշակերտներէն (ձրիավարժներէն) մէկ հատն ալ՝ առանց իրենց յանցանքին՝ ընդդէմ խղճիս եւ սրտիս ձայնին արձրկեմ:

Եւ այնպէս ալ կատարեցի. մանաւանդ տեսնելով թէ ի՛նչպէս հակառակորդքս անխիղճ եւ վատ ոգւով՝ բամբասանք եւ զրպարտութիւն ձեռքերնին գործիք առած՝ իմ պատուոյս եւ անուանս հետ՝ ձեռնարկեր էին քանդելու վարժարանին պատիւն ու անունը, որուն հետզհետէ զարգանալուն համբաւը կարծես փուշ մըէր աչքերնուն մէջ: Ես գայթակղութիւն չպատճառելու համար՝ կրեցի, լռեցի, տեղի տուի եւ քաշուեցայ... Աստուծոյ թողլով չարամտութիւնը պատժելը... եւ Աստուած իր դատաստանն շատ շուտ եւ ակներեւ սկսաւ...

Սիրալիր բարեւներով ընկերակցացդ

Մնամ ողջագուրանօք

Քոյդ

Հ. Աթանաս վ. Տիրոյեան

ԳԱԹ, Դանիէլ Վարուժան 374-381, ք-1,2, ձեռագիր, քնագիր

Բ.

CONGREGAZIONE
MECHITARISTA

Venezia, S. Lazzaro
Դեկտեմբեր 23 1905

Ազնիւ եւ Սիրելի Դանիէլ Զան!

Հանդէպ սրտիս եւ քեզ քաջածանօթ զգացմանց՝ պաղ կու գայ ինձ գքեզ պարոն կամ ուրիշ այլ ինչ տիտղոսով կոչել ... Պատանեկութեանդ ատեն գքեզ իբրեւ որդի մը սիրող սիրտը՝ երիտասարդութեանդ ատեն գքեզ իբրեւ իրեն մաս մի կը նշմարէ եւ ջան կը կոչէ, եւ այսպիսի զգացմամբք ալ կարդաց ամսոյս 21ին առ իս ուղղածդ, իսկ ներփակեալն ալ յանձնեց առ որ ուղղածն էր:

«Բազմավիպի խմբագիր եղած էք» ...Ոչ, սիրելիս, քեզի հաղորդողն սխալ գրած պիտի ըլլայ. ուզեցին (ճիշդն ըսեմ՝ բռնադատեցին) որ ըլլամ ... այլ ես յանձն չառի:

Ստիպողական բարձրագոյն հրամանի մը տեղի տալու համար՝ յանձն առի ըլլալ խմբագրակից, այսինքն աշխատակից, ինչպէս են ուրիշ երկու անձինք ալ, որոնց հետ միասին խմբագրական մարմին մը կը կազմենք, աշխատութիւնը մէջերնիս բաժնելով իբրեւ ի պարտուց, եւ ուրիշներն ալ օգնելով մեզ՝ իբրեւ սեփական յօժարութեամբ:

Բացի խմբագրակիցներէ (որոնց միւս երկու անձինքն են Հ. Դաւիթ վ. Նազարեթեան եւ Հ. Կարապետ Տ. Սահակեան) կան նաեւ տպագրութեան եւ ցրման եւ հաշուի ուշադիրք. զի այդ մասերուն հետ ես յարաբերութիւն չունիմ:

Ուստի այս գրածէս կը հասկընաս թէ ես ո՛րքան ձեռնհասութիւն կրնամ ունենալ այն խնդրոց լուծման մասին, որ կը վերաբերին քու համով-հոտով գրած Սարսուռներդ եւ Մաշած լարդ տպագրելուն. այսինքն՝ ոչինչ ձեռնհասութիւն:

Այսու հանդերձ զքեզ գոհացնելու նպատակաւ (այսինքն՝ գրած պայմաններովդ այդ երկու քուրիկ-հատորիկներդ տպագրութելու մասին) խօսեցայ Տպագրապետին հետ, եւ լեզուէս ու սրբտէս բղխած անուշիկ յորդորներով ուզեցի իրեն կամքը հակեմ իմ եւ քու փափաքածիդ. ո՛րքան յաջողեցայ չեմ գիտեր. բայց ինքը խոստացաւ ինձ՝ որ այդ խնդրոյն վրայօք պիտի գրէ քեզ՝ կարելի եղածին չափ դիւրութիւններ ընելով, զորս իրեն վերապահեց ուղղակի քեզ հաղորդելու:

Ես իրեն հաղորդեցի մանրամասն ինծի գրածներդ. եւ իրեն ըսածէն այնպէս հասկըցայ՝ ինչ որ դուն ալ գրեր ես, այսինքն, թէ գուցէ վարդապետ Սիմոն Երեմեան այդ մասին զքեզ շատ լաւատես ըրեր է. մինչդեռ տպագրապետն ալ իրեն տպարանական արուեստի հաշիւներն ունի, եւ պէտք է ալ ունենայ – կարծեմ ըստ իտալական առածին *Conti senza l'oste* (առանց պանդոկապետի գիտութեան եղած հաշիւ մը) մէջտեղ կայ քու եւ նախընթաց խմբագրի մէջ. զՎեր. Սիմոն Երեմեան դեռ չեմ տեսած որ խօսիմ: Ծննդեան առթիւ այս օրերս Փատուայէն անշուշտ վանք կու գայ, եւ այդ առթիւ կը խօսիմ:

Ինչ կը վերաբերի քու անձիդ, նպատակիդ, կացութեանդ եւ միջավայրիդ՝ ինծի միշտ փափաքելի պիտի ըլլայ լսել:

Անգէտ էի ասկէց մեկնելուդ, զոր մեկնելէդ քանի մ'օր վերջը լսեցի Թաւուքճեանէն (որ այս օրերս Եգիպտոս պիտի մեկնի), եւ

զարմացայ թէ ինչո՞ւ Կանդ գնացեր ես, մինչդեռ Լօզան երթալիք էիր, ըստ որում Վ. Հ. Սիմոն Երեմեանէն լսեր էի:

Արդէն գիտես որ ես վերջերը վարչին տեսակ մը ընթացքը եւ ցուրտ վարմունքը եւ մանաւանդ շիմէրիք կասկածները տեսնելով՝ հեռու կեցեր էի ... երբ տեսայ եւ համոզուեցայ որ այդ վարչութեան լիսեռը կազմողը դրամական եւ կուսակցական շահախնդրութիւնն է ... զգուելով հեռու փախայ, եւ միայն... զոհերուն վրայ կսկծացի:

Կը վերջացնեմ երկտողս վստահեցնելով զքեզ որ փոխադարձ անոյշ յիշատակներով անցելոյն՝ մտքիս ու սրտիս մէջն ես, մանաւանդ այս Ս. Ծննդեան Քրիստոսի եւ Նոր տարւոյս օրերուն մէջ, յոյս նաեւ աղօթիցս եւ մաղթանացս առարկայ ես եւ կը փափաքիմ ըլլաս երկար տարիներով եւ երջանիկ կենօք:

Հայրական զգացմամբ սիրոյ

Իմ միշտ քոյդ Հ. Աթանաս

Յ.Գ. Ինձ դրկուած ընծայիկէ մը քեզ ալ մասիկ մը կը հանեմ եւ կը ծրարեմ.

Նոյն

ԳԱԹ, Դանիէլ Վարուժան 374-381, ք.3,4, ձեռագիր, բնագիր

Գ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ
Ս. ՂԱԶԱՐՈՒ
CONSEIL ACADÉMIQUE
DE S. LAZARE

Վենետիկ - Venise
1906 Յունուար 2

Ազնիւ եւ Սիրելի Դանիէլ

Ընդունեցայ եւ հաճութեամբ կարդացի շնորհաւորութեանցդ քարտը. փոխադարձ բիւր մաղթանքներ մեր ազգին յուսատու

երիտասարդիդ, որուն աւիւնը կը մաղթեմ հետզհետէ խանդավառ բորբոքի՝ տխրագգած միշտ այո՛ բայց սրտի հետ խօսող քերթուածիկներովդ: Երէկ ընդունեցայ Մ[ուրատ] Ռափայէլեան վարժարանի նոր եւ առժամանակեայ տեսչէն՝ Վ. Հ. Արիստակիսէ՝ 100 Ֆր. զրկելու քեզի, զոր ներփակեալ կը գտնես, հանդերձ ընկալագրով՝ զոր ինձ վերադարձընել հաճիս ստորագրութեամբդ:

Մնամ ջերմ սիրով եւ քեզ քաջածանօթ զգացմամբս

Քոյդ Աղօթարար

Հ. Աթանաս

ԳԱԹ, Դանիէլ Վարուժան 374-381, ք-5, ձեռագիր, բնագիր

Դ.

CONGREGAZIONE
MECHITARISTA

Venezia, S. Lazzaro Յունուար 29 1906

Սիրելի Դանիէլ Զան

Գրասեղանիս վրայ դասաւորուած թղթեղէններու կոյտերու մէջ պահուած նամակդ վերջապէս ձեռք բերի. քանի՛ քանի՛ անգամներ յուզեցի զանոնք եւ հզտնելով՝ ստիպուեցայ մինչեւ օրս լռել. ա՛յսպէս՝ երբեմն աչքի հանդէպ եղած իր մը, որ փնտռուի ամենէն աւելի դժուարագտուելին կ'ըլլայ:

Գամ պարունակութեան. նախ շնորհակալութիւն այն տաքուկ սրտի զգացումներուդ, որոնք իրենց յարակից արձագանգն ունին փոխադարձաբար իմ սրտի զգացմանցս մէջ դէպ առ քեզ:

Տպագրատան Տեսչին գրածին վաճառականական պարունակութիւնը կը յայտնես, որուն բոլոր բովանդակ վարձատրութիւն... ոչ, սխալեցայ... ձրի շնորհքը ըսել կ'ուզէի՝ 300 օրինակ քու տրամադրութեանդ ներքեւ դնելն եղած է՝ տպագրուած 500 օրինակէն, որուն մնացորդ 200ը պիտի վաճառէ Տպարանը իրբեւ փոխարինութիւն թղթի ծախքին ... կը զարմանա՞մ... Զէ. կը կարմրեամ, մտածելով որ եթէ քեզի իբրամ ըրած 300 օրինակն

ալ շարողչէքի (գրաշարի վարձ) ծախս հաշուէր, - հետեւաբար ըսել պէտք էր, թէ այդ տետրակի տպագրութիւնը պիտի չկարենար բնաւ նիւթական շահու արդիւնք մը յառաջ բերել տպագրողին ... Գուցէ իմ գարմանքս ու կարմրիլս իմ տգիտութենէս յառաջ կու գայ, որ հրէական հաշուագիտութեան բոլորովին անտեղեակ մէկն եմ, եւ մանաւանդ չեմ հասկընար շնորհք բառին գորութիւնը, եւս առաւել անոր ստորաբաժանումները՝ կէս շնորհք, քառորդ շնորհք, երրորդ կամ տասներորդ մասն շնորհաց ... եւ եթէ շնորհքն այսքան, ուրեմն մտածէ թէ ո՛րքան անշնորհք պիտի ըլլայ այն, որ շնորհք ըրած պիտի չըսէ ... Ուստի փառք տուր Աստուծոյ, որ այս երկրորդ տեսակին հանդիպած չես:

Երէկ (երբ ոտանաւորներուդ բնագիրն ուզեցի իրմէն, զորս այս օրերս կը դրկեմ քեզ) ինձ ըսաւ որ «Եթէ նամակ պիտի գրես Դանիէլին, խնդրեմ ըսէիր իրեն, որ իմ գրածիս պատասխանը դեռ չընդունեցայ իրմէն, որ ըստ այնմ ուր որ կ'ուզէ ուղարկեմ իրեն ծանուցած 300 օրինակներս»: Ըսի իրեն՝ «Փոխանակ 300 օրինակ դրկելու արդեօք աւելի ազնուութիւն չէ՞ր ըլլար, ի՛նչ գին որ 200 մնացած օրինակաց համար (առ մէն մի օրինակ) պիտի որոշէք, նոյն հաշուով 300 օրինակին գինը դրկէիք իրեն, որուն կարելի է աւելի պէտք կրնայ ունենալ իւր այժմեան վիճակին մէջ»: «Այդ բանը իրմէն 300 օրինակը գնել ըսել է, եւ կամ նորա հաշուին հոս ծախել. ինչ որ Տպագրատունս չի կրնար ընդունիլ»:

Միով բանիւ՝ ցուրտ վաճառականութիւն, ուսկից իմ բնաւորութիւնս զգուանք կը զգայ...

Բազմավէպը յանձներ եմ, որ ուղարկուի քեզի ըստ փափաքանացդ (որ իմս ալ է), փոխարէն խոստանալով մերթ ընդ մերթ գրչովդ ողջունելու այժմեան պարբերականաց այդ նահապետը, որ գրչիդ թարմ ու վառ ողջոյնը իւր հեղինակին հետ, իրեն ծերունի բազկօք սրտին վրայ պիտի սեղմէ սիրալիր ընդունելութեամբ:

Ուրախ եմ ես ալ, որ կեցած տեղէդ գոհ ես, եւ կեցութիւնդ ալ հանգիստ կը ծանուցանես: «Նպատակս ալ (կը գրես) մութի մէջ չէ» ... Այո՛, ինչպէս ամէն ապառնիք, ամենայն ինչ որ գալիք է. միայն թէ քաջալերէ գքեզ մտածելով՝ որ մութէն որ սկզբնական արարչագործ լոյսը ծագեցաւ. ուստի սրտանց կը մաղթեմ որ այդ ապագայիդ անորոշ այժմեան մթութիւնը՝ վաղուան արեգական փոխուի. եւ այսպիսի մաղթանօք, եւ քեզ քաջածանօթ սրտիս գեղուն զգացմամբ մնամ

Քոյդ Հ. Ա. Աթանաս

Յ. Գ. — Ուշադրութեամբ քննեցի (եւ եթէ չեմ սխալիր) տեսայ, որ հոս մնացած քերթուածիկներէդ, երեք կտորիկներ միայն (որոց մէջ է նաեւ Վենետիկ վերնագրուածը) չեն հրատարակուած դեռ ոչ Գեղունիին եւ ոչ ալ Բագմավիպին մէջ, թէպէտ եւ կապարեայ շարուած սիւնեակները ձեւացեր են եւ սրբագրութեան համար սիւնակները տպուեր են:

Պ. Հ. Մկրտիչ առաջարկեց ինձ, որ զանոնք Բագմավիպի մէջ հրատարակեմ, իսկ ես ըսի իրեն որ նախ կը գրեմ եւ երբ հեղինակին հաւանութիւնը ընդունիմ, այն ատեն միայն կրնամ տպագրել տալ Բագմավիպի մէջ. ուստի ձեռագիրներդ ղրկելէս առաջ՝ կը սպասեմ այս մասին ալ ընելիք կարգադրութեանդ, որ ըստ այնմ կա՛մ տպել տամ այդ երեք կտորները, եւ կա՛մ շարուածքը ցրուել տամ, եթէ այդպէս կը փափաքիս:

Մնացած յանձնարարութիւններդ ծանուցի Պ. Հ. Մկրտչին որ այս օրերս տկար է դեղնցաւ հիւանդութեամբ եւ կը խնամուի վանքին մէջ. յուսանք շուտով կ'անցնի:

Նոյն

ԳԱԹ, Դանիէլ Վարուժան 374-381, ք.6,7 ձեռագիր, բնագիր

Ե.

CONGREGAZIONE
MECHITARISTA

Venezia, S. Lazzaro *Փետրուար 18 1906*

Ազնուասիրտ Եւ Սիրելի Պր. Դանիէլ

Զբաղանացս շատութեան պատճառաւ յանձնեցի Պ. Հ. Կարապետի՝ ղրկելու քեզի բանաստեղծութեանցդ գոյգ մը տետրակներն, նշանակելով անոնց կողքին վրայ, ըստ թելադրութեանդ, «Գեղունի»ին գինը, եւ կամ մանաւանդ թղթատարական քարտիկ մը նոյնը եւ տետրակացդ ուղարկումը ծանուցանել՝ իմ բարեկեցութեան հետ. ինչ որ ըրաւ նա, որ ինձ աջ բազուկ գործակից է Բագմավիպի խմբագրութեան գործոյն մէջ:

Սակայն այն գրողածին եւ իմ նախընթաց նամակիս հա-
կառակ՝ այժմ կը ծանուցանեմ այն երեք քերթուածիկներդ, որոց
համար ըսեր էի՝ թէ շարուած են արդէն եւ հաւանութեանդ կը
սպասեմ Բագմավիպի մէջ գետեղելու համար, եւ զորս հաւանու-
թիւնդ ստանալէ վերջը գնացի գրաշարին քով՝ որ կարգադրեմ
ո՛ւր եւ ե՛րբ գետեղուելին, եւ ահա ցաւօք լսեցի՝ որ գրաշարն
համարելով թէ անոնք ա՛յլ եւս տպագրուելիք չեն, եւ իրեն ալ
նոյն-տեսակ կապարագիրեր պէտք ըլլալով՝ ուրիշ յօդուած շա-
րելու, առանց ինծի բան մը հարցրնելու՝ առեր արդ սիւնակները
ցրուեր է. որով այժմ՝ չուներով ոչ ձեռագիրը եւ ոչ տպագրուած
օրինակ՝ անոնք այլ եւս չեն կրնար տպուիլ: Այսքան՝ ի գիտութիւն
քեզ այս փոքրիկ արկածին վրայօք:

Պ. Հ. Մկրտիչ այժմ քաջառողջ է եւ ժիր ի գիր եւ ի յիր-
կ՝ողջունէ գրեզ, այն իւր բարի սրտով՝ ինչպէս որ ստուգիւ
ճանչցեր ես գինքը:

Կը փափաքիս Թասսոյէն՝ ամիսը մէյ մը երգ մը կարդալ
Բագմավիպին մէջ. կը ցաւիմ որ փափաքդ (որ շատ քեզ նման
ազնուասիրտ բարեկամաց փափաքն ալ է) պիտի չկարենամ գո-
հացնել, նախ՝ զբաղմանց շատութեան պատճառաւ, երկրորդ՝ որ
ես մտադիր չեմ ոչ ամէն ամիս եւ ոչ ալ երգ առ երգ հրատարակել
զայն Բագմավիպի մէջ, այլ հրատարակած կտորներս՝ իրրեւ նմոյշ-
ներ բանաստեղծութեան Gerusalemme liberataյէն կը համարիմ:
Թող որ ամէն կտոր հաւասարապէս գեղեցիկ եւ հետաքրքրական
չեն ի հարկէ, այլ անշուշտ ծաղկաքաղ չքնաղ կտորներ հաճելի
պիտի ըլլան ընթերցողաց:

Այն քերթուածիկներդ՝ զորս ղրկել կը խոստանաս Բագ-
մավիպին՝ հարկ չըկայ ըսեմ՝ թէ սիրով պիտի հիւրընկալուին նոյն
Հանդիսէն:

Քիչ մ'ալ իմ վրաս խօսիմ, գէթ խօսքերս արդարացնելու հա-
մար, որովհետեւ գրեցի ի սկզբան թէ զբաղանքս շատցեր են: Բըռ-
նադատեալ մեծերու եւ նաեւ փոքրներու թախանձանքներէն՝ յետ
երկու անգամ մերժումի՝ վերջապէս հարկ եղաւ ստանձնեմ Բագ-
մավիպի խմբագրի գործը՝ որ նիւթապէս ժամանակս կ'ուտէ. մի
եւ նոյն ատեն յանձնուած է ինձ չորս զանազան գրքերու տպա-
գրութեան սրբագրութիւնն եւ պատասխանատուութիւնը. ասոնց-
մէ գատ՝ սկսեր եմ ինքնագիր եւ կամ թարգմանածոյ տետրակիկներ
հրատարակել «Գրադարան թատրերգական» տիտղոսի ներքեւ. կ'աշ-
խատիմ լմընջընելու եւ կատարելագործելու Հանրագրական Դրու-
թեանս Բառարանը, որ պիտի սկսի տպագրուիլ. ասոնց հետ՝ պար-

տաւոր եմ՝ իբր անդամակից եւ քարտուղար՝ գործել, գրել, թղթ-
թակցիլ, մղել, եւն. վանքիս Ուսմանական ժողովին մէջ, ասոնց վը-
րայ՝ բռնի վրաս բեռցուցին վերջին օրերս նաեւ մեր ամէն ելեւ-
մուտքի հաշիւներուն քննչի եւ համարակալի պաշտօնն ... բացի
մանր մունր ուրիշ բեռներէ ... Աստուած ապագայ աւելցուելիք-
ներէն պահպանէ ... Ասով չեմ ուզեր ըսել թէ մեծ կամ նշանաւոր
օգուտ մը կ'ընեմ վանքին, այլ թէ՝ ստուգիւ գրադանքս պակաս չէ:

Սիրալիր ողջագուրանօքս եւ քեզ քաջածանօթ հայրենի գո-
րովանօք սրտիս, կ'աղօթեմ երջանկութեանդ համար եւ մնամ քոյդ

Հ. Աթանաս

Յ.Գ.- Երբ առիթ ունենաս ազնիւ հօրդ գրելու, շատ հաճո-
յագոյն գործ մ'ըրած պիտի ըլլաս ինծի, եթէ բարեւներս ալ զրկես
իրեն, եւ ըսես. «Հայր Աթանաս կ'ըսէ թէ Քաղկեդոնի վարժարանն
իրեն այցելութեան եկած պահուղ երբ տեղեկութիւն կը հար-
ցընէիր Փոքրիկ Դանիէլիդ վրայօք, քեզի յոյս չէի՞ տար՝ թէ մի՛
տարակուսիր, օր մը պիտի տեսնես որ քեզի ուրախութեան պատ-
ճառ պիտի ըլլայ»:

Նոյն

ԳԱԹ, Դանիէլ Վարուժան 374-381, ք-8,9 ձեռագիր, բնագիր

ԱՅՐ ՄԿՐՏԻՉ ՊՈՏՈՒՐԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ
Հ. ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ «ՊԼՊՈՒԼ ԱԻԱՐԱՅՐԻ» ԳԻՐՔԻ
ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Վենետիկ, Ս. Ղազար
13 Յունուար 1903

Արհիպատիւ Սրբազան տէր,

Հայոց Նահապետի, Աւարայրի Պլպուլ Հ. Ղեւոնդ Ալիշանի
չնորհիւ՝ ստուարահատոր հաւաքածոյ մ'ունինք ձեռքերնիս, որուն
մէջ ամփոփուած են հայկական մատենագրութեան անբաւ գանձեր,
այսինքն՝ Հայերէն Ձեռագրաց մէջ՝ աստ անդ ցրուած պատմական
եւ աշխարհագրական յիշատակարաններ:

Սոյն հաւաքածոյն, որ ձեւացած է մասամբ Միաբանութեանս պատ. հարց աշխատութեամբ եւ մասամբ այլ հայրենասէր ազգայնոց ոմանց նիւթական օգնութեամբ, որքան հնար է շուտով մտադիր ենք հրատարակել՝ ժամանադրական կարգի վերածելով եւ ձեռագրաց վրայ ալ համառօտ տեղեկութիւն մը տալով. իսկ ինչ ինչ կետեր ալ, թէ պատմական եւ թէ աշխարհագրական, ըստ պատշաճին լուսաբանել հակիրճ տողերով:

Արդ որովհետեւ փափաքելի էր մեզ, անշուշտ նաեւ ամէն բանասիրաց,- որ այսպիսի հրատարակութիւն մը ըստ կարելոյն ճոխ եւ անթերի լոյս տեսնէ, ուստի մեր այս երկտող գրութեամբն՝ կը դիմենք Ձեր Արհիապատուութեան, որպէսզի հաճիք Ձեր ձեռքէն եկած նպաստը ընել մեզ, ուղարկելով Հայերէն Ձեռագրաց Յիշատակարաններ ինչ որ ունինք եւ կրնաք ձեռք բերել:

Վստահ եմք Արհ. Սրբ. Տէր որ բարոյական օգնութեամբ պիտի հաճիք աջակցիլ այս նոր հրատարակութեան: Դուք մանաւանդ որ հայկական գրականութեան մէջ նշանաւոր դիրք մը կը գրաւէք Ձեր պատմական իմաստասիրական եւն հեղինակութեամբք, եւ ներկայ եկեղեցական հագուազիւտ հայկ. մատենագրութիւնը ճոխացնող պատկառելի դէմքերէն էք:

Այսօր երբ «Հնութիւնք Հայրենեաց»ը կը թերթէի, որուն մէջ ի սէր հայրենեաց թափուած են քրտինք եւ աշխատութիւն, քաջայերուեցայ գրել Ն. Արհիապատուութեան այս նամակս լիովին վստահանալով որ Ն. Արհ.ը պիտի ձգէ լուծմայ մը հայ գրականութեան գանձանակին մէջ, որ շատ աւելի դիւրութիւն ունի քան ուրիշները:

Միայն խնդրեմք նկատողութեան առնուլ հետեւեալն. այսինքն՝ ինչ Ձեռագրէ որ օրինակուած է Յիշատակարանը, այն ձեռագրին վրայ համառօտ տեղեկութիւն մը տալ.- նախ ի՞նչ գիրք է եւ ինչ կը պարունակէ.- 2.- Ներկայապէս ու՞ր կամ որո՞ւն քով կը գտնուի. 3.- Ձեռագրին նիւթը, գիրը, չափը եւ հանգամանքը եւ այլն:

Առ այժմ համբուրելով Ն. Սրբազնութեան Աջը, յայտնելով երախտագիտական խորին զգացումներս:

Մնամ Ձերդ Արհիապատուութեան
Ն. Ժ

Հ. Մկրտիչ Պոտուրեան
Կրօնաւոր Մխիթարեան

ՀԱՅՐ ԿԱՐԱՊԵՏ ՏԵՐ-ՍԱՀԱԿԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

ԵՂ. 1904

Մեծարգոյ Պարոն

Կը սպասէի որ վանք գայիք այսօր: Որովհետեւ բարեկենդանէն վերջ Պօլիս պիտի մեկնիմ հայրս տեսնալու համար, եւ ես կ'ընդգէտ ոտանաւորներու երկրորդ օրինակութիւնը աւարտել, մի քանի հատը Բաղմովէպին յանձնել, երթալէս առաջ:

Ուստի կը խնդրէի որ տետրակը նաւաւարին յանձնէիք, կամ, աւելի լաւ, քիչ մ'աւելի յաճախ այցելէիք վանքին:

Ստիպուած եմ, կը տեսնէք. Զեզի այս ձանձրոյթն ու նեղութիւնը տալու:

Զերդ անձնուէր,

Հ. Կարապետ Տէր-Սահակեան
Մ[իւսթաթա] Մ[իւսթաթա]

Յ.Գ. Կարծեմ թէ խիստ դատաստան մը պիտի բերէք հետեր-նիդ, մանաւանդ լեզուի մասին:

Նոյն

ԳԱԹ, Ա. Արփիարեան 946, ք.1, ձեռագիր, քննարկ

ՀԱՅՐ ՄԿՐՏԻՉ ՊՈՏՈՒՐԵԱՆԻ ԵՐԿՈՒ ՆԱՄԱԿՆԵՐԸ
ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍԲ. ԷՋՄԻԱՄՆԻ ՄԻԱԲԱՆ
ՏԵՐ-ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐԵԱՆԻՆ

Ա.

ՄԱՅՐԱՎԱՆՔ

ՄԻԽԹԱՐԵԱՆՑ

Վենետիկ – Ս. Ղազար 3/16 Սեպտ[եմբեր] 1905

Գերապատիւ Տէր

Առիթ մը կը փնտռէի թղթակցելու Զեզ հետ որ Պոլսոյ թէ՛ կղերէն եւ թէ՛ գիտական մարմնոյն մէջ փայլուն անուն մ'ունիք,

անուն մը ա'յնքան փայլուն որ հեռուէն Ձեր հայրենակցաց ուշադրութիւնը կրնայ գրաւել:

Վերջերս «Արարատ» հանդէսին մէջ Ձեր յօդուածը կարդացի, հատուածին վերջը կ'աւելցնէիք «Ձեռագիրներու հաւաքածոյէն» այսպիսի իմաստով:

Ես այժմ Յիշատակարանաց հրատարակութեամբ կը զբաղիմ, շատերը իրենց Ձեռագրաց յիշատակարանները ինձ դրկելու մեծ շնորհքն ըրին. արդեօք կարելի չէ՞ր ունենալ նաեւ Ձերինները կամ հրատարակուած տեսնել «Լոյս»ի մէջ:

Կը փափագէի իմանալ թէ արդեօք միջնադարեան տաղեր պարունակող ձեռագիրներ ունի՞ք:

Խոնարհ յարգանքօք ողջունելով զՁեզ մնամ Ձերդ

Հ. Մկրտիչ Պոտուր
Կր[օնաւոր] Մխիթ.

ԳԱԹ. Ազատ Թորոսեան, 9851-52 XII ք.1,2, ձեռագիր, բնագիր

Բ.

ՄԱՅՐԱՎԱՆՔ
ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

13 Դեկտեմբեր 1905

Գերապատիւ Տ. Յովհաննէս Ա. Ք. Մկրեան
ի Բերա

Մեծ եւ Սիրեցեալ Հայրենակից իմ

Ձեր հոկտ. 7/20 գրոյն ուշ պատասխանեցի, սպասելով, որ «Կոստանդին Երզնկացի»ն լմնայ եւ նամակիս հետ օրինակ մ'ալ դրկեմ Ձեզի:

Յուսամ որ Ձեր գիտողութիւնները կը հաղորդէք ինձ, այդ շարքի հրատարակութեանցս նախափորձը է, մի քանի պակասու-

թիւներ որ անդրադարձայ տպագրութեան միջոց յաջորդաց մէջ չեն կրկնուիր յուսամ:

«Երկրագունտ»ին մէջ Ձեր հրատարակած Տաղերուն հանդիպեցայ: շատ զարմանալի բան որ թէ Կոստանեանցի եւ թէ Չօպանեանի աչքերէն սպրդած են անոնք, որոնք՝ իրենց հրատարակութեանց շատ լոյս կրնային սփռել: Երբ «Խաչատուր Կեչառեցւոյ» վրայ խօսիմ Բազմավէպի մէջ, առիթ պիտի ունենամ յիշել եւ Ձեր հրատարակութիւնքը այդ բանաստեղծին՝ որ լաւ եւ հաւատարիմ Ձեռագրէ մը առնուած կը թուի ինձ: միայն թէ օրինակողը «Խաչատուր Կեսարացւոյ» կ'ընծայէ փոխանակ «Խաչատուր Կեչառեցւոյ» (Հմմտ. 1886ի երկրագունտ էջ 56):

Այս տաղը «Թէ մարդ ես» սկզբնաւորութեամբ չի՝ կրնար Խաչատուր Կեսարացւոյ ըլլալ, քանի որ ան Ժէ դարու մէջ ապրած է: մինչդեռ այդ տաղը ԺԵ-ԺՁ դարու ձեռագրաց մէջ կը գտնուի յանուն Կեչառեցւոյ:

Հիմակ զբաղած եմ Միջնադարեան բանաստեղծներով ինչպէս կը տեսնէք: «Բազմավէպ»ի մէջ եւ առանձին՝ Հայկական մատենագիտութեամբ, հիմայ այդ գործը (գոր Հ. Արսէն սկսած է եւ մինչեւ Ե տառը տպուած) իր «Համչիրակը» առաջ կը տանի վասն զի Հ. Արսէնը Մ[ուրատ] Ռ[ափայէլեան] վարժարանը փոխադրեցաւ ուսումնապետութեան պաշտօնով: Յիշատակարաններու Ա. հատորը պատրաստած եմ, յուսամ թէ տպագրուիլ կը սկսի մօտերս:

Հայ կաթողիկոսութիւն անունով իրաւասական, հնախօսական եւ պատմական աշխատութիւն մ'ունիմ պատրաստած գոր «Բազմավէպ»ի մէջ կ'ուզեմ հրատարակել եւ առանձին գիրք տպել:

Հ. Արսէնէն եւ ինձմէ ընդունեցէք յարգալից եւ սիրալիրող ջոյներ, որովք մնամ Ձերդ

Աղօթարար
Ն[ուաստ] Ծ[առայ]
Հ. Մկրտիչ Պոտուրեան
Կր[օնաւոր] Մի[թարեան]

Յ.Գ. Խնդրեմ հաճեցէք ինձ Ձեր հասցէն նշանակել որպէսզի ուղղակի կարենամ Ձեզ հասցնել գիրս:

Նոյն

ՀԱՅՐ ԹՈՎԱՄԱ ԿԷՏԻԿԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐՐԱՀԱՄԵԱՆԻՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
«ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ» ՕՐԱԳՐԻ
ՎԻԵՆՆԱ

Revue “Handess Amsorya”
VIENNE (Autriche)
VII/2 Mechitaristengasse 4

Վիեննա 9 Հոկտեմբեր 1905

Մեծարգոյ Սիրեցեալ Վարդապետ

Ձեր պատուականը բերող պատանիները նախընթաց օրը քաղաքս հասան եւ նոյն օրն իսկ վ. Հ. Բառնարաս վարդապետն ամենայն ինչ անձամբ հոգաց ու ճամբեց դէպի Վենետիկ:

Ձեր պատուիրածին համաձայն՝ յօդուածնիդ Գերպ. Գօյուկնեանին ղրկեցի ի Հռոմ՝ հանդերձ համառօտ նամակով մը պէտք եղածը ծանուցանելով:

Թէ՛ Ձեր եւ թէ՛ Ալբերդեան վարդապետին «Հանդէսի» պակաս թուերը ղրկուեցան: Մինչեւ ցարդ չյղելնուս պատճառն էր այդ կողմերու խռովութիւնները, կորսուելու վախ կար:

Խնդրուած քանի մը ժամագիրքն եւ մանկանց աղօթագրքերը վաղը կ'առաքուին ձրիաբար:

Ձեմ մոռցած, քանի մ'օրէն լուսանկարս ալ կ'ուղարկեմ Ձեզի՝ ըստ Ձեր բաղձանաց:

Հուսկ ուրեմն կը յայտնեմ Միաբանութեանս խորին ու սրտագին շնորհակալութիւնը Ձեր բարեացակամ պատրաստակամութեան եւ բարեկամութեան համար, որով կը խոստանանք «ձեռքէս եկածին չափ վանուցդ օգտին ծառայել»:

**Մնամ խորին յարգանք եւ սիրով
Ձեր անձնանուէր
Հ. Թովմա Կէտիկեան
Կրօն[աւոր] Մխիթարեան**

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ԼԵԶՈՒԱԲԱՆ
ՀԱՅՐ ԱԹԱՆԱՍ ՏԻՐՈՅԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ
ՓՐՈՖԵՍՈՐ ՖԻԼԻՊ ԱՐՓԻԱՐԵԱՆԻՆ

Ա.

Վենետիկ, Ս.Ղազար
1907, Օգոստոս 30

ԱԶՆԻԻ ԵՒ ՍԻՐԵՅԵԱԼԴԻ ԻՄ ՊՐ. ՖԻԼԻՊ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ի ԳաՀիրէ

Լուրջ երիտասարդ մը՝ որ իւր պատիւը գիտէ եւ պատուա-
ւոր ընտանեաց սերունդ մ'է՝ ինքն ըստ ինքեան պատուաւոր գործ
մը պիտի չհամարուի, իւր պարտուց մոռացութիւնն եւ կամ
պարտքը ճանչնալու եւ կատարելու մէջ անհոգութիւնը, ինչ որ
ցաւ պիտի պատճառէ եւ կը պատճառէ ոչ միայն զինքը եւ իւր
գերդաստանին ազնուութիւնը ճանչցող բարեկամներու, այլ որ ա-
ւելին է՝ զինքը սիրող եւ իւր բարւոյն եւ բարեյաւութեան փա-
փաքողներուն. եւ այս վերջիններուս մէջ կը փափաքիմ որ բնաւ
մէկու մը յետադաս չհամարիս քեզ քաջածանօթ եւ զքեզ հօր մը
սրտով սիրող Հ. Աթանասդ:

ԳԱԹ, Ա. Արփիարեան 651, ք.1, ձեռագիր, քնագիր

Բ.

Venise St. Lazare
1907 22 Յունուար

ԱԶՆՈՒԱՍԻՐՏ ԵՒ ՍԻՐԵԼԻ ՊՐ. ՖԻԼԻՊ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ի ԳաՀիրէ

Նախընթացս գրելէս եւ Գըլըճեան պատանւոյն յանձնելէս
երեք օր վերջը ընդունեցայ ամսոյս 10ին գրածդ:

Կ'ըսես որ թէմպէլութիւն ըրեր եւս եւ ներումն կը խընդ-
րես ... Ես որ շատ մը պակասութեանց տէր եմ՝ սիրով եւ կարեկից
սրտով կը ներեմ ինծի նմաններուն. ուստի դուն ալ լիուլի ներ-
մանս արժանացած ես:

Շատ ցաւեցայ լսելով ճամբորդութեանդ մէջ քաշած նեղու-
թիւնդ, եւ մանաւանդ այդտեղ կրած յօդացաւութիւնդ, որուն
մխիթարութիւնն ալ արդէն դուն գրեր ես՝ հիմայ քաջողջութիւնդ
վերստին ստանալդ աւետելով. ինձ կը մնայ մաղթել, որ միշտ
քաջաւորջ մնաս, ինչ որ սրտանց կը փափաքիմ եւ աղօթող եմ:
Յուսամ թէ այժմ գրած կերպովդ գործի մտեր ես եւ յառջադէմ
ասպարէզ մը պիտի ունենաս: Աստեղէն փախստական չորս վար-
դապետներն, որոնք Եգիպտոս ալ ընդունելութիւն չեն գտած, հի-
մայ փորձեր են Հռովմ գալ եւ հոն են. տեսնենք վերջերսին ի՞նչ
պիտի ըլլայ ... Հ. Ստեփան Եգիպտոսէն մեկնելովը Յակոբն ալ
անշուշտ իրեն խըճախ իրարանցումէն ազատեր է. գրեր էր ինձ
իւր մօրը եւ քողը Եգիպտոս գալը:

Ջերմագին սիրոյ եւ բարեկամական բարեւներս գերազնիւ
հօրեղբօրդ՝ Պր. Արփիար Արփիարեանին. իմացուր ինձ թէ կ'ուզէ
արդեօք ինքը, որ փետրուարի կէսէն վերջը այստեղէն 135 Քրանքի
չէք մը զրկեմ՝ իրեն անուան վրայ՝ վճարուելի, որպէս զի ես ալ
կարենամ առանց ամօթով մնալու հոս վճարել ուսկից որ փոխ
առի:

Սիրալիր զգացմունքով զոյգ աչերդ համբուրելով մնամ Քոյդ
Հ. Աթանաս

Յ. Գր. Միշտ սիրելի պիտի ըլլայ ինծի վրայօքդ տեղեկու-
թիւն առնուլ քեզմէն: Նոյն

ԳԱԹ, Արփիար Արփիարեան 651, Թ., ձեռագիր, քնագիր

ՀԱՅՐ ԱԹԱՆԱՍ ՏԻՐՈՅԵԱՆԻ ԵՐԿՈՒ ՆԱՄԱԿՆԵՐԸ
ԲԱՆԱՍՏԵՂԾ ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆԻՆ

Ա.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Ա. ՂԱԶԱՐՈՒ

CONSEIL ACADÉMIQUE

DE S. LAZARE

Վենետիկ 1907 Փետրուար 16

Ազնուամեծար եւ սիրելի բարեկամ

Սրտիս զգացմամբ կը փափաքէի այս նամակս Ձեզի չգրել, բայց հարկը կը բռնադատէ զիս գրելու:

Ձեր հայրական խնամքին առարկայ եղած եւ մեր սիրելի Ֆիլիպ եղբորորդինիդ անշուշտ պատմեց Ձեզի՝ Վենետիկէն Գահիրէ հասած պահուն, թէ ի՛նչպէս ցոյց տալով ինձ հոս՝ Ձեր իրեն գրած վերջին նամակները, խնդրեց ինծմէն որ միջոց մը գտնեմ իրեն դէպ ի Գահիրէ ճանապարհի ծախքը հոգալու, որով օր մ'առաջ ազատէր այստեղի աննպատակ եւ թափառական կեանքի վիճակէն, եւ զար Ձեզ մօտ, իւր աշխատասիրութեամբ ձեռնտու ըլլալու Ձեզ՝ իւր ապագան հաստատուն վիճակի մը հետ կապելու մտադրութեամբ:

Երբ ես ծանուցի իրեն, որ անձնական դրամի միջոցներ չունէի, իրեն օգնելու բայց ի սէր բարեկամութեան կրնայի ուրիշ ծանօթէ մը պէտք եղած դրամը փոխառութեամբ հայթայթել, նա վստահացուց զիս, որ եթէ այդպիսի լաւութիւն մ'իրեն ընեմ, քանի մը շաբաթուան ընթացքի մէջ Ձեր կողմանէ պիտի վճարուէր ինձ այդ դրամը, եւ իբր ապացոյց՝ տուաւ ինձ կարգալու նաեւ Ձեր իրեն զրկած նամակներէն մէկ երկուքը, որոնց մէջ կը յուսադրէիք վստահացնելով որ ամսուան մը մէջ կարենաք իրեն ճանապարհածախսը ճարել եւ զրկել: Ուստի ենթադրելով որ ըրածս ոչ միայն Ֆիլիպի օգտաւէտ, այլ նաեւ ձեզի ալ հաճելի գործ մ'է, քաղաքիս մէջ ինձ բարեկամ ծանօթ իտալացի քահանայէ մը 135 ֆրանք

դրամ փոխ առի, եւ անով Ֆիլիպի այստեղ ունեցած փոքրիկ պարտքերը վճարելէ զատ, մնացածով կրցաւ նա ուղեւորիլ եւ գալ Ձեր քով:

Որքան եւ մեր սիրելի Ֆիլիպը կը վստահացնէր, որ ամիսուկէսէ վերջը ապահով կրնայի ըլլալ որ վերոյիշեալ դրամը ձեռքս կը հասնի, սակայն խոհեմութիւն համարելով, ես երեք ամսուան պայմանաժամով այդ գումարիկը վերադարձընել խոստացայ փոխատուին:

Արդ, փետրուարի վերջին օրը այդ պայմանաժամը կը լրանայ, եւ ես ձեռքս չունենալով ուրիշ միջոց՝ վերադարձընելու փոխատուին այդ գումարը, շատ ամօթով պիտի մնամ նորա առջեւ, եթէ Դուք Ձեր ազնիւ զգացմամբ մինչեւ փետրոս[ար]ի 28ը չհասցընէք ձեռքս վերոյիշեալ գումարը:

Ֆիլիպի առ եի ուղղած ամիս մ'առաջ մի հատիկ նամակը բնաւ խօսք չէր ըներ այդ դրամի վճարման մասին. ուստի լաւագոյն համարեցայ ուղղակի Ձեզի գրել եւ ծանուցանել եղելութիւնը, որ գուցէ ծանուցած չըլլայ Ձեզի Ֆիլիպն, մտադիր ըլլալով ո՛ր գիտէ երբոր յաջողութիւն ունենայ գործերու եւ շահի՝ անձամբ վճարելու այդ պարտքը, առանց մտածելու որ երեք ամսուան պայմանաժամ դրուած էր իրեն եւ իւր գրաւոր ստորագրութեամբ ալ գայն յանձներ է ինձ:

Ուստի յամենայն դէպս կը խնդրեմ որ տհաճութեանց տեղի չտրուէր, եւ ես ալ բարեկամի մը խնդիրքը կատարած ըլլալու եւ լաւութիւն մը որ ձեռքէս կու գար ընելուս համար զիղջ չկրէի:

Եթէ դիւրութիւն է Ձեզի՝ ծանուցէք ինձ, ես այստեղէն 135 Փրանքաց չէք մը կրնամ զրկել, այդտեղ ձեզմէ վճարուելիք քանի մ'օրէ յետ նեկայացուելու պայմանաւ:

Չմոռնամ աւելցընելու, որ արդէն ծանուցեր եմ Ֆիլիպին, թէ իւր յանձնարարելուն համաձայն, ընդուներ եմ 10 Փր. դրամը, որ իրեն անուան վրայ եկած էր հոս, իւր մեկնելէն վերջը, իբր վճարումն, ինչպէս ըսած էր, այն կերակրոյ-գործեաց կազմածին, զոր հոս ուզեց գնել ինծմէն, եւ զոր ես 12.50 Փրանքաց գնած էի քաղաքիս մէջ 2 տարի մ'առաջ ըրած ճամբորդութեան մ'առթիւ եւ անգործածելի պահած էի:

Այսքան ի գիտութիւն Ձեր ծանուցանելով՝ կը մնամ Ձեր ազնիւ բարեկամութենէն երկտող պատասխանի մը:

Ձերդ Հ. Աթանաս

Բ.

27 Ապրիլ 1907
Վենետիկ, Ս.Ղազար

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ
Ս. ՂԱԶԱՐՈՒ
CONSEIL ACADÉMIQUE
DE S. LAZARE

**Ազնուամեծար Տէր Պր. Արփիար Արփիարեան
ի Գահիրէ**

Ընդունած եմ Ձեր 22 Մարտի պատուականը ի պատասխանի իմ նախընթաց շարք մը գրածներուս, որուն մէջ ծանօթ 135 ֆրանքաց խնդրոյ մասին կը յայտնէք թէ ո՛րքան ալ պարտք կը համարիք զայն հատուցանելու ինձ, բայց չէք կարող՝ Ձեր եւ Ֆիլիպին՝ գործերուն առկախ դրութեան մը պատճառաւ՝ այդ գումարը ձեռքս հասցընել որոշ պայմանաժամով մը: Բայց կը յաւելուք, թէ «կը խնդրեմ քիչ մը ատեն այս մասին համբերելու բարեհաճութիւնը ունենաք. վստահ եղէք որ ինչքան կարելի է շուտով պիտի հետեւիմ այդ պարտքին վճարման, եւ վստահ եմ ձեր բարեկամութեան վրայ»:

Սիրելի բարեկամ, դուք ձեր վիճակը պարզելով՝ վերոյգրեալ եզրակացութեան կը յանգիք, ես ալ փոխադարձ իմ վիճակը պարզեմ ձեր առջեւ, որպէս զի ըստ այնմ ալ ձեր բարի կամքին արդիւնքը ձեռքերնէդ եկածին չափ փութաք իրականացնել, որպէս զի չըլլայ թէ յանկարծ իտալական առածը ճշգրտէք, թէ *La via domani conduce alla casa di mai* (վաղուան ճանապարհը՝ երբեքի տունը կը տանի):

Ցաւալի դրութիւն մ'էր խեղճ Փիլիպին քաղաքիս մէջ ունեցած կացութիւնը. չէր կարող գնալ Պր. Խէրեանին քով ապրելու, ուսկից այնպիսի կերպով հրաժարեր էր արդէն, որ վերադառնալը բարոյապէս կարելի չէր, բայց եթէ իբրեւ ապրելու ողորմութիւն մը նորա տան մէջ մուրալու ձեւին ներքեւ:

Քաղաքիս մէջ չէր կրնար դիմել ոչ Մ[ուրատ] Ռ[ա]ի[այէ-լեան] Վարժարանի վարչութեան եւ ոչ այլ վանքին, քանի որ

արդէն վերջնական խօսքերնին լսած էր անոնցմէ, եւ որեւիցէ դիմումն ապարդիւն պիտի մնար։- Ինքը բնաւ տեղ մը դրամական վարկ չունէր, որ կարենար պարտքով ապրիլ, եւ քովն մը դրամ չունենալէ զատ, փոքրիկ պարտքեր ալ ըրած էր՝ զորս հարկ էր վճարել, որպէս զի գէթ բնակարանը կարենար շարունակել վայելելու։- Այս վիճակի մէջ ձեր նամակներն ալ կը յայտնէին, որ գէթ ամիս մը եւ երկուք ինքիւր գլխուն ճարը պէտք է տեսնէր, մինչեւ որ խնայութիւն ընելով՝ դուք կարենայիք իրեն ճանապարհի ծախք հայթայթել եւ ձեր քովը պատըսպարել։

Երբ ինծի ձեր նամակները ցոյց տալով՝ դիմումն ըրաւ, ըսելով որ միակ յոյսը վրաս դրած էր, սիրտս չդիմացաւ, եւ թէպէտ միջոցներէ զուրկ էի օգնելու իրեն, բայց ձեր նամակներուն պարունակութեանց եւ իրեն վստահացնելուն վրայ յեցած՝ ուրիշէ մը հարկ եղած դրամը փոխ առի եւ ճամբայ դրի գինքը պարզերես, վստահ, որ ինքն ալ պարզերես պիտի ձգէ այն անձին առջեւ, ուսկից փոխ ընդունեցայ, բայց մինչեւ օրս ամօթով մնացի։

Սիրելի բարեկամ, քաջ գիտէք դուք, որ իբր կրօնաւոր մը՝ սեփական դրամ չունիմ հատուցանելու այդ 135 Փրանքաց գումարը։ Հետեւաբար երեւակայեցէք իմ դիրքս, մանաւանդ որ ուրիշի մ'ալ բնաւ չեմ կարող յայտնել զայն։

Արդ, միթէ հնար պիտի չըլլա՞յ ձեզի, որ փոքրիկ խնայողութիւն մ'ընելով ամսէ ամիս գէթ քսան, գէթ տասն Փր[անք] մ'ուղարկէիք, որպէս զի այս խնդրէն ես ալ կարենամ պատուով դուրս ելլել, եւ ազնիւ ընտանեաց պատկանող ազնիւ պատանւոյ մը, ձեռքէս ու բարեկամական զգացմունքէս եկած ձեռնտուութեանս փոխարէն դառնութիւն կրելու վիճակի մէջ չիյնամ։

Եթէ գտնուածէս այլազգ պարագաներու մէջ գտնուէի, այս տողերս երբեք չէի գրեր ձեզի։ Հարկէն ստիպուած կը գրեմ, եւ Ձեր բարեկամական եւ ազնուասիրտ զգացմանց խորհրդածութեան յանձնելով գրածներս, մնամ թէ սիրելի Փիլիպին եւ թէ Ձերդ բարեկամ անձնանուէր։

Հ. Աթանաս վ. Տիրոյեան

Մխիթարեան

ՀԱՅՐ ՔԵՐՈՐԷ ԶՐԱՔԵԱՆԻ ԵՐԿՈՒ ՆԱՄԱԿՆԵՐԸ
ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԷՐ-ԱՐԻԱՀԱՄԵԱՆԻՆ

Ա.

ՄԱՅՐԱՎԱՆՔ ՄԻԽԹԱՐԵԱՆՑ

Վենետիկ, Ս.Ղազար
29 Հոկտեմբեր 1908

Գերյարգոյ եւ Սիրելի Վարդապետ
Սարգիս Վ. Տէր-Աբրահամեան

Ստացայ այսօր սեպ. 16 թուակիր յանձնարարեալ նամակա-
նիդ, ներփակ տասը ռուպլի թղթադրամով ի հաշիւ Վիեննական
հարց ըրած քառասուն ֆրանք ծախուց իրենց քովէն դէպի Վե-
նետիկ ուղեւորող տղոց համար. երբ ընդունիմ Նազլեան Վարդա-
պետի միջոցաւ դրկելիք դրամնիդ ի փակումն նոյն հաշուոյն, կը
փութամ իմացնել Ձեզ գայն ալ:

Նամակնէդ կ'ենթադրուի թէ դեռ ընդունած չէք հոկտեմբեր
5ին գրած նամակս. անշուշտ ստացած պիտի ըլլաք մինչեւ ցարդ:
Սակայն ներկայիս պիտի աւետեմ նախ թէ շաբաթէ մ'ի վեր է
որ Պօղոս Ղազարեանի աչքի ցաւը դադրած է եւ այժմ հանգիստ
ուսման կ'աշխատի. ուրիշ ուրախալի լուր մ'ալ, թէ ամսոյս 17ին
Ձեր երկու սաները ուրիշ երկու նորեկ ընկերներով հագուեցան
կրօնաւորական զգեստը, առ այժմ իբր համաձեւութիւն, ժամանա-
կին գիտակցութեամբ ընդունելու համար սքեմը, եթէ արժանաւոր
մնան:

Ցաւ ի սիրտ կը հաղորդեմ Ձեզ ուխտիս Աթոռակալ Հ. Սա-
մուէլ վարդապետի մահը, որ յանկարծակի հանդիպեցաւ Գիւտ
Խաչի առաօտը, երբ ժամերգութեան համար եկեղեցի կ'երթար.
յիշեալ վարդապետը Դուք լաւ ճանչցած պիտի ըլլաք, զի 1895-6
թուականին Հռոմ կը կենար իբր գործակալ:

Պիտի խնդրեմ Ձեզմէ որ հաճէիք տեղեկանալ Ծղալթրիլացի
Յովսէփ Նազարեան նորընծայ պատանւոյն հօրմէն, որ Ղազար կը
կոչուի, թէ արդեօք յօժարութիւն ունի՞ իր որդւոյն եղբայրական

վիճակը յանձն առնելուն, վասն զի տղան ուսումնական կարողութիւն չունի: Զայս չուզեցի ուղղակի հօրը գրել որովհետեւ գաղափար չկրնար ունենալ եղբայրական վիճակի վրայ, մինչ Զեր միջոցաւ կրնայ ստոյգ եւ որոշ ըմբռնել եւ ըստ այնմ տալ իր հաճութիւնը կամ ոչ: Այս մասին տղուն հետ խօսած եմ, դեռ ինքը տարտամ է, ի հարկէ քահանայական վիճակը նախամեծար կը համարի, եւ եթէ կարողութիւն ունենար արգելք մը պիտի չգտնայի վրան առ այժմ զինքը յորդորելու:

Յայտնելով Ձեզ կանխաւ իմ շնորհակալութիւններս եւ մատուցանելով յարգալիիր ողջոյններս

Մնամ միշտ Զերդ
Հ. Քերոբէ Զրաքեան
Կ[րօնաւոր] Մ[խիթարեան]

Յ.Գ. Ամսոյս 10ին Հ. Ղուկաս ճամբայ ելաւ դէպ ի Պոլիս որ երկու շաբաթ կենայէ վերջ պիտի ուղեւորի դէպ ի Տապիզոն:

ՀԱԱ. ֆ.967. ց.1, գ.22, ք.24,25, ձեռագիր, քնագիր

Բ.

ՄԱՅՐԱՎԱՆՔ ՄԻԽԹԱՐԵԱՆՑ

Վենետիկ, Ս.Ղազար
2 Ապրիլ 1910

Գերապատիւ եւ Սիրելի Վարդապետ

Ծանօթ է Ձեզ արդէն թէ Պօղոս Ղազարեանի աչացաւը որքան ինձ մտահոգութիւն պատճառեց Վենետիկ հասած օրէն ի վեր. գիտէք դարձեալ թէ անպակաս ըրած եմ ամէն կարելի խնամք, քաղթիս նշանաւոր աչաբուժերու ցոյց տալով, անձամբ անոնց պատուիրած դեղերը կաթեցնելով աչքին մէջ, ազատ ընելով պատանին այն պարտաւորութիւններէն որ կրնային աչքին ցաւը յաւելուլ: Սակայն տեսնելով որ մէկ ու կէս տարուան խնամքով ու դարմանով ոչ ինչ շահեցայ եւ ա'լ եւս պատանին ուսումնական եւ վանական վիճակին անյարմար դատելով, ցաւօք սրտի ետ կը դարձընեմ վաղը՝ իտալական շոգենաւով դէպի Պոլիս ճամբայ դնե-

լով, ուսկից մեր գործակալ վարդապետը Պաթում՝ եւ անկից Ախլցխա կը հասցընէ:

Տխուր է Պօղոսը մեզմէ բաժնուելուն համար, եւ փափաք յայտնեց որ գէթ եղբայրական վիճակով մնայ մեր մօտ. սակայն իր տարիքին փոքրկութիւնը չեն թոյլատրեր դեռ ընդունիլ զինքը այն վիճակին մէջ, եւ ծանօթ չէ ինծի ծնողաց տրամադրութիւնը. ուստի խոստացած եմ իրեն որ եթէ եղբայրական վիճակին մէջ մտնալու փափաքը պահէ եւ առնու ծնողաց հաւանութիւնը, ամէն օգնութիւն կ'ընեմ իր վերադառնալուն:

Առ այժմ պիտի յանձնեմ զինք Ձեր հայրենի խնամոց, գուցէ ցամաքային օդը եւ հայրենիքի կեանքը միակ դարմանն ըլլան իր աչքի ցաւերուն, որով խեղճը կը տառապի:

Խնդրեմ իմացընէիք ծնողաց Պօղոսի վերադարձը, որ աչքի ցաւէն դուրս ուրիշ պատճառ չունի. մանաւանդ պարտք կը համարիմ ինձ գոհութիւնս յայտնել իւր բարի վարուց եւ ջանասիրութեան, եւ այս պատճառաւ ալ տուած եմ Պօղոսի ձեռքը վկայական թուղթ մը:

Մատուցանելով Ձեզ մեծարանացս հաւաստիքը.

Մնամ Խ[ոնարհ] ծ[առայ]
Հ. Քերոբէ Չրաքեան

ՀԱԱ. ֆ.967. ց.1, գ.22, ք.44, անագիր, բնագիր

ՀԱՅՐ ՍԻՄՈՆ ԵՐԵՄԵԱՆԻ ԵՐԿՈՒ ՆԱՄԱԿՆԵՐԸ
ՊԱՏՄԱԲԱՆ, ԲԱՆԱՀԱԻԱՔ ԼԵՈՒՆ

28 Յուլիս 1908

Ա.

Ազնիւ եւ Սիրելի Բարեկամ Լէօ

Ձեր յորելեանը զիս անտարբեր չի թողուց, զգացի որ լուռ մնալս զրական եւ բարեկամական դաւաճանութիւն մըն էր: Ես

դարձեալ մամուլի մէջ անկիւն մը բռնեցի, եւ ամենէն աւելի անկեղծ ձայնս հնչեցի Ձեր յորելեանի եւ Արփիարի ոճիրին առթիւ:

Ձեր շնորհակալութիւնները շատ թանգ են, վասն զի անկեղծութիւն եւ բոլորովին զգացմունք են:

Կը ջանամ Ձեր խնդրանքները կատարել, միայն պէտք է երկու ամիս սպասել, գիւղագնազութեան օրերուն մէջ ենք. պէտք է վարչութեան հետ խօսիլ որ կարողանամ զՁեզ լիովին գոհացնել:

Ձեր վրայ՝ Արփիարի թերթին յղեցի 70 էջ երկար ուսումնասիրութիւն մը. Արփիար Լուսաբերի մէջ հրատարակեց թէ ի մօտոյ լոյս կը տեսնէ այդ յօդուածս. գնդակը անշնչացուց զինքը, մեռաւ եւ իմ այդ ուսումնասիրութիւնս, զոր ետ պահանջեցի, հիմա գրասեղանիս վրայ է, զայն վաղուց մտադիր էի յղել Վտակին, բայց պատասխան չստանալով, Արփիարին խնդրանքին մտիկ ըրի:

Ձեր կացութեան վրայ կը սպասեմ լիուլի տեղեկութեանց. ո՞րքան աշխատութիւն ունիք պատրաստ տպագրութեան. ի՞նչ կը պարունակէ Ձեր պատմական աշխատութիւնը: Կը շարունակէ՞ք տպագրութեան պատմութիւնը:

Ինձ յղեցէք ցուցակը այն գրքերու զորս մենք տպեր ենք եւ դուք չունիք, եթէ կարող ըլլամ կամաց կամաց կը ճարեմ:

Մաղթելով առողջութիւն, յաջողութիւններ

Ձերդ

Հ[այր] Ս[իմոն] Երեմ[եան]

ԳԱԹ, ԼԼՈ-24¹-24³, ք.1,2, ձեռագիր, քնագիր

Բ.

Համակրելի Պ. Լէօ

[1909]

«Մշակ»ի մասին Ձեր հաղորդածներն զիս շատ ջլատեցին: Ո՞ւր են Արծրունիի այն մեծ ու վեհ գաղափարի բարեկամ կու-

սակիցները. տասը տարի վերջը պէ՞տք էր որ մոռցուէր գաղափարի Սուրբին կտակը – «Մշակ»ի յառաջադիմութիւնը մշակականներով. եթէ Աստուած մի արասցէ «Մշակ»ը Ձեր ըսածին համեմատ մի օր անցնի թշնամի կուսակցութեան, այն ատեն այլ եւս ջնջելու է մեր ազգին գրքէն ազատամտութիւն, համերաշխութիւն եւ եղբայրութիւն բառերը. այլ եւս յառաջադիմութեան անիւր մեզ համար խորտակուած է: Զէ՛ դուք «Մշակ»ի խնամակալներ, դուք պարտական էք յանուն Գ. Արծրունիի պատսպարել «Մշակ»ը հարուստ մշակականի մը հովանիին տակ: «Մշակ»ը մէջաթիւ հանելը գաղափարական կայ հայրենիքնիս մատնել է, պղծել է: Արծրունիի խնկարկունները պետք են գինուիլ այդ դաւաճանութեան դէմ. ահա սուրբ կռուի ժամանակը. փրկեցէք գաղափարի Աշտիշատը: Ցնցող էր Ձեր գոյժը Սիրելի Լէօ ...

Արփիարեան խնդիրը շատ ուրախալի էր եւ շատ մխիթարական, այս առթիւ Հայկակին կողմէն ընդունեցէք իմ խորին շնորհակալութիւններս: Զինք այսօր վանք կանչեր եմ որ տեսակցիմ եւ հաղորդեմ ինչ որ կարեւոր է:

Գալով Ձեր յօդուածի մասին, ազատ էք ինչպէս որ կը հաճիք գրեցէք. միայն թէ փութայիք շուտով յղել գրութիւննիդ վաւեր գի ժամանակ չի մնաց, թերթը առաջ կ'երթայ, ճիշտ պայմանաժամուն պէտք է որ լոյս տեսնէ այն: Ձեր յօդուածը կ'արտատպուի նաեւ իբրեւ գիրք 500 օրինակ, դուք որչափ օրինակ որ կամենաք կարող էք պահանջել մեզանից:

Բնական է Ձեր գրութիւնը եթէ եթէ պատկերազարդ լինի աւելի հետաքրքրական կ'անցնի, որով եթէ ա'յնպէս նախ յղեցէք պատկերներն: Գրութիւննիդ ըստ կարելւոյն շուտ կը խնդրենք. եւ խնդրելով միանգամայն Ձեր ներողամտութիւնն. օրհասական «Մշակ»ին կը մաղթենք յաղթանակ:

Հայապատում ունի՞ք: Քիչ օրէն կը ստանաք մեր թերթերն:

«Մշակական» խմբագրութեան յարգանք ու սէր ...

Միշտ Ձերդ Խ[ոնարհ] ծ[առայ]
Հ[այր] Ս[իմոն] Երեմ[եան]

ՀԱՅՐ ՍՈՒՔԻԱՍ ԷՓՐԻԿԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ
ՊԱՏՄԱՐԱՆ ԼԷՈՒՆ (ԱՌԱՔԵԼ ԲԱՐԱԽԱՆԵԱՆ)

Ա.

Վենետիկ – Ս. Ղազար
9 Դեկտեմբեր 1908

ՄԱՅՐԱՎԱՆՔ
ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Ազնիւ Պ. Լէօ

Ձեր նամակին անմիջապէս կը պատասխանեմ, նախ յայտ-
նելով Ձեզ իմ մեծ ուրախութիւնը, Ձեր առողջութեան մասին:

Այո, մեր գները բարձր են բայց մեր նիւթերն ալ լաւ են, ինչ որ էլ լինի, ես պատրաստ եմ Ձեզ գոհացնել եւ սիրով յանձն կառնում իւրաքանչիւր թերթը տպել նոյն գնով ֆր. 75 փոխանակ 1200 օրինակի տպելով 1500 օրինակ: Մի մեծ գովաւորութիւն որ իմ առջեւն է ելնում, դա սրբագրութեան խնդիրն է. մենք այստեղ այժմ չունինք յարմար մէկը, որ կարողանայ լաւ սրբագրել Ձեր գիրքը, որով եւ տպագրական վրիպակներ չլինեն: Նոյն ժամանակ երբ հոս էիք, ես խօսել էի Հ. Անդրիկեանի հետ եւ նա սիրով յանձն էր առել այդ գործը. բայց նա այժմս կը գտնուի ի Կ. Պօլիս: Ես ինքս էլ ժամանակ չունիմ սրբագրութեան, ուստի չգիտեմ ի՞նչպէս կարգադրել այս խնդիրը:

Ձեզ պէտք եմ յայտնել նաեւ այս, թէ իմ առողջութիւնը այժմ լաւ չէ եւ հաւանօրէն առաջիկայ մարտին պէտք եմ տպա-
գրական գործից հեռանալ եւ Վենետիկից մի ուրիշ տեղ փոխուիլ, ուստի եթէ դուք մտադիր էք Ձեր գործը այստեղ տպել, պէտք էք շտապել որ ես պաշտօնիցս չբաժնուած ամենայն ինչ կարգադրեմ, որ գործը կարգաւորեալ առաջ գնայ:

Եթէ կամենում էք հոս տպել, ջանացէք որչափ հնար է չուտ Ձեր հաստատական պատասխանն տալ եւ միանգամայն սկզբնական ծախսերի համար պէտք եղած գումարը մեզ հասցընել, որ անմի-
ջապէս թուղթը գնենք եւ գործը սկսինք:

Կրկին խնդրում եմ Ձեզնից, սա Հ. Առաքելեանից իմ երկհատոր Երեւելի արանց բառարանը ինձ վերադարձնելու, իսկ եթէ նա կամենում է գնել, պէտք է վճարէ փութով 100 (հարիւր) ընդամենը, որ կարենամ մի ուրիշ օրինակ ձեռք բերել, որ շատ դժուար է:

Սրբազրութեան մասին կը խօսիմ Հ. Երեմեանի հետ, դուք ալ նրան գրեցէք, եթէ յանձն առաւ լաւ կլինի:

Առաջին դրամական վճարումն լաւ կը լինի 2000ից 3000 ֆրանկ ուղարկել:

Ձեզ ամենայն յաջողութիւն մաղթելով եւ սպասելով Ձեր հաստատական կամ ժխտական պատասխանին:

Մնամ յարգանք
Հ. Ս[ուքիաս] Էփրիկեան

ԳԱԹ Լէո 26-26² ք,1,2, ձեռագիր, րճագիր

Բ.

Վենետիկ – Ս. Ղազար
29 Յունուար 1909

ՄԱՅՐԱՎԱՆՔ
ՄԽԹԱՐԵԱՆՑ

Ազնիւ Պ. Լէօ

Կը փութամ յայտնելու, թէ Ձեր պատուական նամակն եւ ներփակ 1312 ֆրանկ սանտիմն ստանալով, նշանակեցի ի հաշիւ Ձեր Հայոց պատմութեան տպագրութեան ծախսուց:

Թուղթն յանձնած եմ ամենաազնիւ տեսակէն եւ թանկնոց, սպիտակ, բարակ եւ ողորկ: Գրերն եւս պատրաստ են:

Յուսով եմ, որ մինչեւ նամակս ընդունելնիդ մեզ կ'ուղարկէք նաեւ նոյնչափ գումար, որով կը վճարենք թուղթը:

Թուղթի մասին մի' մտածէք, եթէ ուզում էք 2000 օր. տպել, մենք կարող ենք տպել միայն 25 ֆր. տարբերութեամբ: Ինչ կը վերաբերի մեր պահանջն եղած հին հաշուին, կրկին քննեցինք եւ տեսանք, որ այդ գումարն գանձուած չէ:

Ուրեմն մեր պահանջն է հետեւեալը	9/11 04
1 Հնախօսութիւն Հայաստանի 3 հտր.	40 Ֆր. Հ.
1 Տեղագիր ի փոքր եւ ի մեծ Հայս	25
	65
30% -	45.50
Ուղղոյ են	4.50
Գումարն	50
30 օր ռուսահայ գրականութիւն, առաջին անգամ Ձեզ դրկուած,	
նամակատան ծախք	13
Դարձեալ 1200 օր. Նոյն գրքից Ձեզի դրկուած, նամակատան ծը-	
րարաց եւն ծախք	42
Իսկ 440 օրինակ նոյն գրքից Ձեզ դրկած ենք արկղով, միայն	
արկղի եւ	
այլ մանր ծախք	8
Համագումարը	Ֆրանկ 113
Կը խնդրենք քննել այս հաշիւը եւ կարգադրել:	
Անշուշտ այժմ ստացած կը լինիք Ձեզ հարկաւոր նիւթերը	
եւ յուսով ենք որ փութով կ'ուղարկէք ձեռագիրը, որ անմիջապէս	
գործը սկսի:	
Հ. Առաքելեանը, ինք գրել ու խնդրել է դարձեալ իր մօտ	
պահել Երեւելի արանց վարքը, սակայն պատասխանեցի որ անմի-	
ջապէս ինձ ուղարկէ նամակատան միջոցով:	
Մաղթելով Ձեզ ամենայն յաջողութիւն կը մնամ յարգանքօք	
Հ. Ս[ուքիաս] Էփրիկեան	

ԳԱԹ Լէո 26-26² ք,3,4, ձեռագիր, բնագիր

ՀԱՅՐ ՄԿՐՏԻԶ ՊՈՏՈՒՐԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԱՏԹԵՈՍ Բ ԻԶՄԻՐԼԵԱՆԻՆ

Ս. Ղազար - Վենետիկ, 5 Յուլիս 1910

Ամենապատիւ Եւ Վեհափառ Տէր

Թուականէս քանի մը օր առաջ մի օրինակ փառակազմ «-
Գեղունի» յղեցինք Ձեր Վեհափառութեան հասցէին. խոնարհաբար

կը խնդրենք ընդունիլ զայն մեր անհուն եւ խորին շնորհակալութեամբ:

Ձեր Կոչը եւ Դէմքը գեղեցկագոյն էջերը կազմեցին Կիլիկիեան որբուկներու նուիրուած Գեղունիին մէջ:

Վստահ ենք, որ հայ ազգը, որ միշտ գուրջ ցցուցած է զէպի ի իր թշուառ ազգակիցները՝ պիտի շարունակէ իր բարեգործութիւնը՝ եւ մենք զմեզ բիւրապատիկ վարձատրուած պիտի համարինք եթէ իմանանք, որ «Գեղունիին» կրցած է փրկել Կիլիկեցի որբիկներու կեանքերը:

Համբուրիւ Վեհափառ Տեառնդ ս. Աջոյն, խորին յարգանքով եւ մաղթանքներով մնամ Ամեմնապատիւ Տեառնդ

Ն[ուաստ] ծ[առայ]
Հ. Մկրտիչ Պոտուրեան

Առ Ամենապատիւ Վեհափառ Տեր
Տ. Մատթէոս Բ. Իգմիրլեան հայրիկ
Սրբազնագոյն կաթողիկոս Ամենայն Հայոց
ի Ս. Էջմիածին

ՀԱԱ. ֆ.57, ց.2, գ.1202, ք.26, ձեռագիր, բնագիր

ՀԱՅՐ ՄԿՐՏԻՉ ՊՈՏՈՒՐԵԱՆԻ ԵՐԿՈՒ ՆԱՄԱԿՆԵՐԸ
ԲԱՆԱՍՏԵՂԾ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻՆ

Վենետիկ - Ս.Ղազար
12 Յունուար 1911

ՄԱՅՐԱՎԱՆՔ
ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Ա.

Սիրելի Սեւակ

Ընդունեցայ նամակդ, գիրքդ, ոտանաւորդ. նոյն իրիկունը կարդացի արդէն գիրքդ, կարմիր գիրքդ մեծ հաճոյքով եւ առանց

ընդհատելու: Ես կը սիրեմ ա՛յն երգիչները որոնք մարդկային կեանքը աւելի թշուառներուն կեանքը բարելաւելու, երջանկացնելու նպատակն ունին, եւ դուն համոզուած եմ մէկն ես այդ իմ սիրած բանաստեղծներէն. եւ շատերը պիտի դիտեն զգածուած կեանքը թշուառ մարդկութեան, զոր կրցած ես եւ կրնաս պատկերել կարմիր կամ սեւ մելանով: «Կարմիր գրքիդ» փոխարէն պիտի յղէի քեզ իմ «Սեւ էջը» բայց վասն զի գուրկ է ան գրական գեղեցկութենէ, ատոր համար կը յղեմ իմ մէկ միւս նոր աշխատութիւնը «Հայ մամուլը»:

Ոտանաւորդ շարունցաւ եւ լոյս պիտի տեսնէ իմ ուղղուած ներքեւ հրատարակութիւնք գրական եւ գեղագիտական հանդէսին մէջ որ պիտի կոչուի «Աստղիկ» շաբաթէ յուսամ կը ստանաս առաջին թիւը, մի միայն այդ թերթին աշխատակիցները պիտի իմանան անոր խմբագրին իսկական անունը. եւ կը խնդրեմ որ ոչ բերանացի եւ ոչ գրաւոր մէկուն չյայտնես թէ Աստղիկի խմբագիրը Հ. Պոտուրեանն է: Թերթը վաճառելու մէջ պիտի չտպուի այլ դուրսը քաղաքին մէջ: Կը փափագիմ նոյնիսկ որ ջնջես նամակիս այս էջը, տե՛ս թէ որքան կը բաղձամ որ գաղտնի մնայ իմ յանդուգն քայլս:

«Աստղիկի» ամենէն յուրջ գրական եւ գեղարուեստական հանդէսը պիտի ըլլայ. գիտե՞ս ինչպէս. վասն զի մի միայն անոնք պիտի աշխատակցին՝ որոնցմէ յօդուած կ'ուզուի: Ամէն թիւի մէջ Հայ գրականութենէն 3 կամ 4 յօդուած միայն պիտի կարենանք դնել: Առաջին թիւին մէջ պիտի երեւաս Արտ. Յարութիւնեանի եւ Վրթ. Փափագեանի հետ:

Ղրկէ՛ շուտով տպագրութեան պատրաստ գիրքդ, արդէն «Աստղիկ»ի աշխատակիցները պիտի վարձատրուին անոնց գրական գործերէն հատորիկներ հրատարակելով եւ գրագէտներուն տրամադրութեան ներքեւ դնելով 200-300-400 օրինակ:

Եթէ ուրիշ ոտանաւորներ եւս պատրաստ ունիս յղէ՛: 25-30 հոգի միայն պիտի արժանանան «Աստղիկ»ի մէջ երեւնալու:

Կիսամեայ է «Աստղիկ»ը ամէն կողմ ձեռքէ պիտի ծախուի հատը 30 սանտիմի. այսինքն ամէն քաղաք կամ գիւղ գործակալներ պիտի ունենանք 30% գեղչով իրենց պիտի յղենք քանի՜ օրինակ որ ուզեն եւ իրենք պիտի ցրուեն բաժանորդաց եւ որ նոյն ատեն պիտի գանձեն դրամը: Այսպէսով ընդունելութիւն պիտի գտնէ Աստղիկը եւ պիտի տարածուի:

Եթէ եռանդ ունիս ձմրան վրայ քերթուած մը գրելու, ձմեռին մէջ լուսանկարդ հանել տուր եւ ոտանաւորիկով մը յղէ: Զեւը կը դրկեմ ճարտար վրձինովս!!

Առ այժմ ցտեսութիւն, շնորհաւոր Ն.Ա.

Բարեւներ եւ Հ. Ղազիկեանէ

Քոյր

Հ. Մկրտիչ Պոտուրեան

ԳԱԹ, Ռուբէն Սեւակ 115, ք.1,2, ձեռագիր, բնագիր

Բ.

Սիրելի Սեւակ

Ընդունած եմ «Վերջին Հայերը» սպասեցի «Աստղիկ»ին հետ դրկել քարտ մը: Այսօր տպուեցաւ դեռ առաջին թիւը, առաջինն է, համբերութիւն: Մէջն է «Փողոց աւլողը»: Կ'ուզէի իմանալ թէ «Փողոց աւլողին» շարքէն ուրիշ կտորներ ալ ունի՞ս տակաւին, եւ կամ կրնա՞ս դրկել որպէս զի անոնցմով ալ հատորիկ մը հանենք: Ըստ իս Գեղունիին մէջէն ալ կրնանք այդ հատորին մէջ դնել:

«Վերջին Հայերը» ինչպէս ըսի առանձին կը հրատարակուի, մէջէն երբեմն երբեմն անտիպներէն կը դնենք Աստղիկի մէջ: Յուսամ թէ «Աստղիկ» պիտի ըլլայ բոլոր հայերուն հանդէսը, դիւրամատչելի ամենուն, վասն զի ամեն կողմ ձեռքէ պիտի վաճառուի գործակալներու միջոցով, հատը 30 սանդիմի եւ Տաճկաստան 50 փարայի: Վերի հարցմանցս պատասխանելու տեսնդ ըսէ թէ քանի՞ հատ պիտի դրկենք քեզ: Լոզանի ուսանողաց կրնայ վաճառուիլ: Հասցէս նոյնն է.

Monsieur
M^r Roupen Tchilinghirian
19 Avenue du Léman
(Suisse) Lausanne

[Հ. Մկրտիչ Պոտուրեան]

ԳԱԹ, Ռուբէն Սեւակ 115, ք.3, ձեռագիր, բնագիր

ՀԱՅՐ ՄԻՆԱՍ ՆՈՒՐԻԽԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԽՈՒՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ

Հռովմ 7 Մարտ 1913

ՄԱՅՐԱՎԱՆՔ
ՄԽԹԱՐԵԱՆՑ

Վսեմաշուք Եւ Մեծապատիւ Տեարք
Հայկական Մասնախմբի
Պարիս

Խորին շնորհակալութեամբ ստացայ 23 Փետրուարի Ձեր պատուական գրութիւնը:

Գիտեմ որ ապահով էք, թէ ամէն Մխիթարեանի սիրտ կը բաբախէ ուր կայ իր Ազգին ցաւը կամ ուրախութիւնը, եւ նորա երազն է իր սիրելի ազգին բարօրութիւնը: Որով ամեննիս երախտապարտ ենք Ձեր մեծ գաղափարին եւ աշխատութեան:

Բնական է, ըլլալով Միաբանութեան մը անդամ, ոչինչ կարող եմ գործել անձնականապէս: Բայց կրնաք ըլլալ ապահով որ Ուխտս, ինչպէս Բէրլինու Դաշնաժողովոյն ժամանակ ծածկապէս, հիմայ ալ անտարբեր, միայն հանդիսատես կեցած չէ: Բայց ինչպէս դուք ալ կը գնահատէք գաղտնապահութիւնը, նոյնը եւս առաւել մեզ եկեղեցականացս կարեւոր է: Որով խնդիրքս եւ խոնարհ խորհուրդս է որ Միաբանութիւնս ազատ թողուի իրեն պատշաճ ոճով գործելու, որպէս զի կարենայ ըլլալ օգտակար:

Այս ալ ըսեմ որ Հռովմ յարմար կեդրոն մը չէ այդօրինակ ակումբներու գումարմանց, չկայ հոս Պարիսու եւ Լոնդոնի Ժողովուրդը: Կայ միայն մեծ բան մը Պաշտօնարանը եւ միաբան Պարլամէնտը: Եւ այս յետնոյս մէջ Հայկական խնդրի մը ամենէն համակիր եւ փափագող կրնայ ըլլալ (ինչպէս շատ անգամ խօսեցաւ ի նպաստ Յունաց եւ Ալբանիոյ նաեւ Գարատաղի) երեսփոխան On. Roberto Galli. (Deputato al Parlamento Italiano) սիրող Հայոց բարօրութեան եւ ճառարխօս. միանգամայն ընտանի Ճիւղիղդիի: Եւ որչափ որ մեր իղձերն ծանօթ են իրեն. բայց Ձեր ժողովէն (որ ազգին ներկայացուցիչ մ'է) ուղղակի դիմում մը մեծապէս հաճոյ կրնայ անցնիլ. բնական է առանց յիշելու իմ կամ մեր անունը, արդէն իրեն հին եւ շատ ընտանի:

Յարգալիր ողջոյններով, մաղթելով ամէն յաջողութիւն Ձեր ազգօգուտ բարձր ձեռնարկին

Եմ Անձն.

*Հ. Մինաս Նուրիխան
Մխ[իթարեան] Վեներակոյ*

ԳԱԹ, Զոպանեան Ա., 5180-81, ք.1,2, ձեռագիր, րճագիր

ՀԱՅՐ ՔԵՐՈՐԷ ԶՐԱՔԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՒՈՆԵԱՆԻՆ

*Ս. Զենոն
27 Օգոստոս 1913*

Ազնիւ Պր. Գարեգին Լեւոնեան

Երէկ քարտ ստացայ Պր. Վ. Փափագեանէ իր առ Պր. Մարտիրոս Յարութիւնեան ուղղած եւ իմ քով մնացած նամակի մասին, եւ կը խնդրէ որ ոչնչացնեմ իր թուղթը այլեւս իր նշանակութիւնը կորստաւ ըլլալուն:

Յետոյ կը յաւելու Ձեր նկատմամբ հետեւեալը գոր կ'ընդօրինակեմ. «խնդրում եմ բարի լինել հաղորդելու Պ. Գարեգին Լեւոնեանին, որ ինձ խոստացած կտորը, այլեւ հանդէսը լոյս տեսնելուն պէս՝ ուղարկել իմ նոր հասցէին, որ հետեւեալն է:

*V. Papasian
Directeur des écoles arméniens
Broussa
(Turquie d'Asie)*

Պիտի սպասեմ ամենից առաջ՝ ղրկելիք կտորին»:

Յուսամ թէ ցարդ Ձեր հանդիսի խնդիրը կարգադրած կ'ըլլաք, եւ կը մաղթեմ որ գոհ սրտով բաժնուիք Վեներակէն:

Ողջոյններովս

*Հ. Քերոբէ Ա. Զրաքեան
Մ. Մ.*

ԳԱԹ, Լեւոնեան 1721, ք.1, ձեռագիր, րճագիր

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԱՊԵՏ ՀԱՅՐ ՆԵՐՍԷՍ
ԱԿԻՆԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԳԻՒՏ ՔԱՀԱՆԱՅ ԱՂԱՆԵԱՆԻՆ

9 Ապրիլ 1914

Արժանապատիւ Տ. Գիւտ Ա. Ք. Աղանեանց

Յարգելի բարեկամ

Յեցած այն սիրալիր եւ բարեկամական ասպնջականութեան վրայ, զոր ցոյց տուիք ինձ ի Թիֆլիզ, կու գամ ներկայացնել Ձեզ դոյզն խնդիրքս, զոր վստահ եմ թէ չէք մերժեր:

Շնորհակալութեամբ ստացած էինք «Ղուկասեան Գրադարանի» Ա-Ձ հատորները, զորս նոյն Մատենադարանի յարգելի հրատարակչութիւնը հաճած էր նուիրաբերել Մխիթարեան Մատենադարանիս. պիտի խնդրէի Ձեր պ. միջնորդութեամբ, թէ կարելի է ամբողջացնել մեր հաւաքումն նոր լոյս տեսած Է-ԺԳ հատորներով, որուն համար կանխիկ շնորհակալութիւնքս:

Մեր հաւաքման մէջ կը պակսին նաեւ «Ղուկասեան թանգարանի» տեղեկագիրները ամբողջութեամբ: Եթէ հնարաւոր է, պիտի խնդրէի ասոնց ալ հաւաքական առաքումը: Արժէքը սիրով պիտի վճարեմ ընդունելէս ետքը:

Աւթիւս հաճեցէք ընդունիլ սրտագին բարեմաղթանքներս Ձատկի տօներու համար. նոյնպէս սրտագին ողջոյններս Պր. Վարդգէսին եւ բոլոր անոնց, որոնց հետ անձամբ ծանօթանալու առիթն ունեցած էի:

Յարգանօք

Հ. Ն[երսէս] Ակինեան

Մատենադարանապետ

Յ.Գ. Մեծ ուրախութեամբ նկատեցի ճանապարհորդութենէս ի դարձին Կիւրդի Արարածոց Մեկնութեան ձեռագիրն ի թիւս Մատենադարանիս գրչագրաց:

ՀԱՅԲ ԿԱՐԱՊԵՏ ՏԵՐ-ՍԱՀԱԿԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆԻՆ

27 Յունուար 1914
Վենետիկ, Ս. Ղազար

Սիրելի բարեկամ,

Ընդունած եմ Ձեր նամակն եւ քարտը: Ձեր առաջարկած տղու մասին խօսած եմ Միաբանութեանս պաշտօնական անձանց հետ, հարկ եղած ամէն յանձնարարութեամբ, բայց հետեւեալ պատասխանը ստացայ, թէ իր ուղարկուած տղաքներէն ո՛չ մէկը պիտի ընդունուի եւ այս բացարձակ ու բացառութենէ գուրկ կանոն մը պիտի ըլլայ, մանաւանդ որ ապաշաւող տղաքները՝ իրենց հայրենիք հասնելէն վերջ՝ բազմաթիւ են:

Կը ցաւիմ որ Ձեր բարեկամական զգացումով ներկայացուցած ազնիւ առաջարկը՝ կարող չեմ միջնորդութեամբս գոհացնել:

Ձեզ վաղը փութով կ'ուղարկեմ Կոստանդին Երզնկացի մը եւ շարականներու նուիրուած դեռ տպուող մատենիկի մը մէկ թերթը, որ զՁեզ առանձնապէս կը հետաքրքրէ, որովհետեւ հոն Հ. Լեւոն Աթճեան կը խօսի Աւագ շաբթու շարականներուն վրայ՝ զորս առանձնապէս ուսումնասիրած է:

Հ. Յարութիւն Աւգերեան հրաժարեցաւ իր Մանրանկարչութեան ուսումը Յորելինական թերթին մէջ տպելէ՝ առարկելով թէ իր ուսումնասիրութիւնը հափազանց ընդարձակուեցաւ. տեղեկութիւն չունիմ իր ստացած արդիւնքներուն վրայ, բայց կը ցաւիմ որ Յորելինական թերթը, զոր անշուշտ ստացած պիտի ըլլաք, մեծ հաճոյք մը պիտի չպատճառէ Ձեզ:

Յարգանքի հաւաստեօք եւ սիրալիր բարեկներով

Ձեր անձնուէր

Հ. Կ[արապետ] Տէր-Սահակեան

ԼԵՁՈՒԱԲԱՆ ՀԱՅՐ ՅՈՎՀԱՆ ԱԻԳԵՐԻ ՆԱՄԱԿԸ
ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆԻՆ

Վենետիկ – Ս. Ղազար
29 Մայիս 1914

ՄԱՅՐԱՎԱՆՔ
ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Ազնիւ եւ Մեծապատիւ Պ. Ա. Զօպանեան

ի Բարիկ

Ընդունեցայ հիմա ձեր պատուական գրութիւնը ինչպէս մի քանի օր առաջ ընդունեցան Գեր. Հ. Բ. Վ. Սարգիսեան եւ Հ. Ս. Վ. Երեմեան, որոնք հաղորդեցին ինձ նաեւ Ձեր փափաքը: Կը ցաւիմ սակայն յայտնելու որ ամենայն բարի յօժարութեամբս հանդերձ անկարող գտնուեցայ զՁեզ գոհացնելու, քանի որ արդէն յօդուածս շարուած ու պատրաստ էր եւ Բազմավէպն արդեն իսկ ուշացած ըլլալով կարելի ալ չէր ուրիշ յօդուածով մը փոխանակել:

Ուրիշ կէտ մ'ալ որ կը փափաքէի լուսաբանել այս է, որ ես ոչ եթէ Ձեր փափաքին հետեւանքով կատարեցի այս աշխատութիւնը: Արդէն իսկ տասը տարի առաջ այս աշխատութիւնս (Ընդհանուր ուսումնասիրութիւնի մը ազգային հնագրութեան եւ մանրանկարչութեան վրայ) պատրաստած էի իւր գլխաւոր գիծերու մէջ (յորս առաջիններն էին անտարակոյս՝ իբրեւ քննութեան աւարկաներ, այս Աղեքսանդրի վարքն, Պատկերոսոյց գիրքն, Մլքէի եւ Լամբրոնացուոյ Աւետարաններն, Ադրիանուպոլսոյն՝ եւ այլն):

Կը սպասէի միայն յարմար առթի մը զանոնք հրատարակութեան տալու, վերջին ձեռք մ'ալ անցնելով: Այս է որ հիմա կը սկսիմ կատարել:

Յարգանքօք ողջունիւ զՁեզ, մնամ

միշտ Ձեզ անձնուէր
Հ. Յ[ովհան] Աւգեր

Յ.Գ. Մի' կասկածիք որ այսու առաջնութեան խնդիր մ'ելայ. ես արդէն իսկ յիշատակած եմ որ Դուք երկասիրութիւն մը պատարաստած էք այս մասին:

ԳԱԹ, Զոպանեան Ա. 683 II քաթին, ք.1,2, ձեռագիր, բնագիր

ՀԱՅՐ ՄԻՆԱՍ ՆՈՒՐԻԽԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ԱԻԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆԻՆ

Ս. Զենոն
6 Օգոստոս 1921

CONGREGAZIONE
MECHITARISTA
ՄԱՅՐԱՎԱՆՔ
ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Մեծապատիւ Պ. Աւետիք Իսահակեանց
յԱզօլոյ

Մեծ է Մխիթարայ Որդւոյս ցաւը, մեր սիրելի եղբօր, Վ. Հ. Բարսեղ Սարգսեանի մահուանը համար, եւ այն այնպիսի հասակի մէջ, որ տակաւին ծեր եւ արթուն, կը վաստակէր իր սիրած Ուխտին եւ Ազգին փառացը համար, յետ քառասնամեայ անխոնջ աշխատութեամբ շտեմարանելու բազմազգի տոհմային հմտութիւնք:

Երախտագէտ եմ, իմ եւ 33-եղբարցս կողմանէ Զեր ազնիւ եւ զգայուն ցաւակցութեան, ինչպէս կարող էր արտայայտել միայն Զեզ նման անկեղծ բարեկամ մը Ուխտիս. եւ շնորհակալութիւնքս յայտնած ժամանակ կը մաղթեմ ամեն բարիք Զեզ. լիալոյս որ պիտի չպակասին ազգիս մէջ յաջորդներ Վ. Հ. Բարսեղ Սարգսեանի, պարծանք Շիրակայ եւ Մխիթարայ տան:

Մխիթարեան Միաբանութեան կողմանէ
Հ. Մինաս Նուրիխան

ԳԱԹ, Իսահակեան Ա. 1531 II քաթին, ք.1, ձեռագիր, բնագիր

ՀԱՅՐ ՔԵՐՈՐԷ ԶՐԱՔԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ՍՓԻՒՌՔԱՀԱՅ ԳՐՈՂ ՎԱՀԷ ՀԱՅԿԻՆ

1 Մարտ 1921
Վենետիկ – Ս. Ղազար

*Մեծապատիւ Տէր Տիար Վահէ-Հայկ
խմբագրապետ Յոռարարի – Պոսթոն*

Շնորհակալութեամբ ստացած եմ Ձեր համակրելի պատուականը եւ Յոռարարի իմ խնդրած թիւերս, եւ մարտի թիւին հետ կը դրկեմ Ձեզ Բազմավէպի յունուարի համարն ալ, որ թէպէտ դրկուած՝ այլ թուի թէ հասած չէ ձեռքերնիդ:

Ընդունեցէք դարձեալ իմ շնորհակալիքս Բազմավէպի մասին Ձեր յայտնած գնահատումին, եւ տուած խոստումին՝ ըստ կարի տարածելու Ձեր շրջանակին մէջ:

Ինչպէս կը տեսնուի Յոռարարը Ձեր անդուլ ջանքով կը սկսի մրցիլ Եգիպտոսի նոյն նպատակով հրատարակուած «Միութեան» հետ: Ազգիս այսպիսի տաղնապալից օրերուն մեծ է ըրած ծառայութիւննիդ:

Ողջունելով զՁեզ յարգանքս վ. Հ. Թաղէոսի հետ մնամ Ձերդ Անձնուէր

Հ. Քերոբէ Ա. Զրաքեան
խմբ. Բազմավէպի

ՀԱՅՐ ՔԵՐՈՐԷ ԶՐԱՔԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ
ՍՓԻԻՌՈՒՄՈՒՄ ՄՏԱԻՈՐԱԿԱՆ ԱՐԱՄ ԱԶՆԱԻՈՒՐԵԱՆԻՆ

Ա.

17 Սեպտեմբեր 1923
Վենետիկ, Ս. Ղազար

Ազնիւ Արամս,

Օգոստոս 14ի թուղթդ գոհութեամբ կարդացի, եւ կը ցաւիմ որ չաբաթէ մ'աւելի զանազան գործերով զբաղած՝ ստիպուած էի նամակագրութիւնս յետաձգել. քուկդ առաջին պատասխանածներէս մին է. հետեւաբար կրնաս դատել բարեացակամութիւնս:

Ուրախ եմ որ հանգիստ ճամբորդելէ վերջ, անվտանգ եւ դիւրաւ կրցած ես ըզձացած նաւահանգիստդ հասնիլ, մինչ եղբայրս եւ իր հետ ճամբորդողները, որոնք յուլիսի սկիզբը պիտի ժամանէին, Քանատայի մէջ ամիս մը թափառելէ ետքը կրկին Անգլիա վերադարձուած են եւ երկրորդ անգամ Ամերիկայ ուղղուած սեպտեմբերի սկիզբը Նիւ-Եորք մտնելու համար. դեռ մինչեւ այս ժամու տեղեկութիւնն չունիմ, այս երկրորդ ուղեւորութեան ելքին վրայ եւ անհանգիստ եմ անոնց վիճակին վրայ:

Տրամադիր եմ կրցածս ընելու քոյրդ ալ քովդ հասցընելու համար. հետեւաբար կարեւոր պատրաստութիւնները եւ հրահանգները կրնաս հաղորդել իրեն եւ ինծի հրամցնել կարգադրութիւններդ:

Մաղթելով քեզ ամէն յաջողութիւններ եւ ի սրտէ բարիդ ըզձալով, եմ

Քոյդ անձնուէր
Հ. Քերորէ Ա. Զրաքեան
Կ[րօնաւոր] Մ[իսիթարեան]

Բ.

14 Նոյեմբեր 1923
Վենետիկ, Ս. Ղազար

Ազնիւ Արամ,

Ընդունեցայ հոկտ. 3ի թուղթդ, մինչ երկու երեք շաբթուան համար ի Հռովմ կը գտնուէի գործով. եւ վերադարձիս երբ մտադիր էի քեզ պատասխանել, ահա հասաւ նոյն ամսոյ 23ին գրածդ, ներփակ affidavitով, հազար իտ. լիրէթի չէքով եւ անուշիկ լուսանկարովդ. առաջինները իբր աւանդ կը մնան քովս մինչեւ քոյրդ հասնի, իսկ երկրորդը կը պահեմ իբրեւ յուշ ազնիւ սրտիդ:

Անհոգ եղիր սիրելիս որ երբ քոյրիկդ հասնի ի Վենետիկ կարելի ամէն խնամքը կը կատարեմ որպէս զի հանգիստ ապրի որչափ որ քաղաքս մնալու ստիպուի. եւ երբ ամէն ինչ պատրաստ ըլլայ, կը ճամբեմ զինքը Շէրպուրկ, Փարիզի վրայէն, ծանօթ անձի մը հոն յանձնարարելով:

Շնորհակալ եմ ինչ որ եղբօրս մասին աջակցութիւն կը խոստանաս. նա որ Յուլիս 1ին պիտի մտնէր, սեպտեմբերի 6ին վերջապէս կարողացած է Նոր աշխարհը ընդունուիլ, յետ 78 օր ծովու վրայ եւ Քանատայի ու Անգղիոյ մէջ թափառելու, երեք անգամ ընելով նոյն ճամբան: Դեռ անգլիերէն լեզուն չգիտնալուն, շատ համեստ վաստակ մ'է ըրածը, օրական 2 դալէր. այնու հանդերձ առաջին լուծայն՝ քսան դալէր, վերջերս իր կնոջ զրկեց իմ ձեռքովս, ցոյց տալով իր խնայասիրութիւնը, եւ հեռաւոր կարօտին օգնութեան հասնելու փափաքով: Իր ալ անձուկն է որ օր առաջ կ'ինը քովը բերել տայ, եւ կը համարիմ որ մօտերս Վենետիկ հասնի. տեսնենք թէ Աստուածային նախախնամութիւնը ի'նչ ճամբայ կը բանայ խեղճ կ'ինը իր ամուսնոյն քով զրկել կարենալու համար:

Հօրեղբորորդւոյդ գոր լուսանկարովդ ճանչնալու պատեհութիւնը ունեցայ, իմ ջերմին ողջոյններս:

Քոյր Հ. Քերոբէ Ա. Զրաքեան
Կ[րօնաւոր] Մ[խիթարեան]

Գ.

Վենետիկ, 12 Յունուար 1924

ՄԱՅՐԱՎԱՆՔ
ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
CONGRÉGATION
MÉKHITARISTE

Ազնիւ Արամս,

Վերջապէս հասաւ գիրդ, եւ ես քու սովորական ժպիտդ մտաբերելով երեւակայեցի պահ մը թէ ինծի հետ կը խօսիս: Նուարդն ալ երբ շատ սպասումներէ վերջ, առաջին անգամ հօրեղբօրորդւոյդ թուղթն ընդունեցաւ, ցնծութեան զգացումէն վերջ՝ արցունքի շրջան մը սկսաւ, թէ Արամը հիւանդ պիտի ըլլայ որ չի պատասխաներ: Այս էր կասկածը իմ փաստերէս աւելի դու փարատեցիր այժմ, իրեն ալ գրած նամակովդ:

Քրոջդ երջանկութեան մասին աւելորդ է որ ես գրեմ. ինքնին թող պատմէ ցարդ անցուցած օրերը: Այնու հանդերձ որ եղանակը տխուր է եւ ցուրտ, սակայն պտոյտներ ընելու եւ իր ընկերուհիներուն հետ ուրախ ժամեր անցընելու ստէպ առիթն ունի: Տան մէջ ցարդ ձեռագործով եւ տեւական զբաղումներով անցուց: Քիչ օր է որ անգլիերէն լեզուն սորվեցնելու ծրագիրը սկսանի իրականացնել Վարդանեանց մօտ գտնուող օրիորդին յանձնելով այդ հոգը:

Իր ճաշակին համեմատ կու գամ այսուհետեւ նաեւ հայերէն ընթերցման գրքեր, որպէս զի բառամթերքը հարստացնէ նոր ուղղագրութեան աւելի եւս վարժի: Յանձնած էի իրեն որ Ֆրանսերէն խօսի եւ կարդայ իր քոյրիկներուն հետ, բայց ամօթխածութեամբ քիչ անգամ միայն գործադրեց պատուէրս:

Առ եղբայրդ ուղղած թղթիս մէջ ինչ որ շնորհակալութիւն յայտներ էի ազնիւ զգացմանդ մասին՝ ինծի ալ կաղանդէայ մը հանելու, նոյն շնորհակալութիւնս կը կրկնեմ ջերմ սրտով գլխաւորապէս քեզ, որ խնայողութիւններդ ուզած ես ինքզինքդ գրկել, եւ ես բարեգործական նպատակի մը յատկացուցի այդ գումարը, տալու համար անոր նուիրական օծում մը:

Նուարդի ծախսերուն համար ղրկուած հազար լիրէթը կը յուսամ բաւեցնել մինչեւ յունիսի կէսը, այն է իր Ամերիկայ մեկնելու ժամանակը, եթէ նոր պատահար մը վրայ չի հասնի:

Ներկակ լուսանկարս թողլով քեզ ու եղբօրդ ի յուշ՝ փոխարէն ձեր երկուքին անուշ պատկերէն, մնամ ջերմ ողջոյններով

Ձերդ անձնուէր
Հ. Քերոբէ Ա. Չրաքեան
Կ[րօնաւոր] Մ[խիթարեան]

ԳԱԹ, Ա. Ազնաւուրեան 44, ք., ձեռագիր, բնագիր

Դ.

Վենետիկ, 14 Փետրուար 1927

ՄԱՅՐԱՎԱՆՔ

ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

CONGRÉGATION

MÉKHITARISTE

Անուշիկ Արամս,

Համառօտդ տխրութեամբ համակած էր, ինչ որ առաջին անգամ կ'անդրադառնամ Նոր-Աշխարհ փոխադրուելէդ վերջ: Ձեմ գիտեր թէ անգործութիւնն է պատճառ, թէ քոյրիկը տեսնելու կարօտը: Անհոգ եղիր, ժամանակը այս ամէն անտեղութիւնները կ'ուղղէ, եւ դու՝ երջանկութեան ծիլը որ արդէն մէջդ կը կրես, ունեցած բարեմասնութիւններովդ եւ զարգանալու եռանդովդ, պիտի հասնիս օրինաւոր ձկտումներովդ, եւ վարդապետ Հայրիկդ հեռուէն պիտի ցնծայ երբ լսէ թէ իրականացեր են իր գուշակութիւնները:

Ստոյգ է որ ձմեռ եղանակիս եւ գործերուս յաճախութեան պատճառով քոյրիկը ստէպ տեսնելու առիթը չեմ ունենար. բայց գիտեմ թէ Սուլթանիկի հետ գլուխ գլխու տուած ձեռագործով կը զբաղի եւ ընտանեկան աշխատութիւններով օրը կ'անցընէ:

Ժպտէ՛ր բաղդը իր երեսին ալ, եւ յարմար մէկը իրեն ընկեր գտնէիք հոն, որպէս զի ժամ առաջ քովիկդ ունենայիր Նուարդդ:

Ընդունել սիրոյ ողջոյններս,

Քոյդ
Հ. Քերորէ Ա. Զրաքեան
Կ[րօնաւոր] Մ[խիթարեան]

ԳԱԹ, Ա. Ազնաւորեան 44, ք., ձեռագիր, բնագիր

ՀԱՅՐ ՍԻՄՈՆ ԵՐԵՄԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ԳՐՈՂ ՏԻՐԱՏՈՒՐ ՏԻԿԻՃԵԱՆԻՆ

Asolo Villa Ararat Treviso
31 Դեկտեմբեր 1925

Պատուական Տիար Տ. Ա. Տիկիճեան

Ստացած եմ նամակիս պատասխանը, փոխադարձաբար կարելի էր օգտակար ըլլալ. սակայն անկարելի կը տեսնուի. փոյթ չէ:

Շնորհակալութիւն 5 կտոր գրքերուն, որոնց մասին կը գրեմ գրախօսականներ եւ առաջինը արդէն ներփակ կը գտնէք «Վոչնակի» համար, խնդրեմ դուք զայն յանձնէիք պատ[ուարժան] խմբագրութեան երբ այդ հրատարակուի, յաջորդաբար կը յղեմ միւսներն ալ. միեւնոյն ատեն ցանկալի է ունենալ Ձեր միւս գրական հատորներն, եթէ կը փափաքիք անոնց գրախօսականը տեսնել:

Ես կ'առաջարկեմ Ձեր պատ[ուարժան] հրատարակչականին համար տպել արդի 1850-1926- թուականին մէջ եղած գրական եւ մատենագրական շարժումի ուրուագիծ նկարագրութիւնը իրբեւ դասագիրք, որուն նմոյշը կը տեսնէք իմ «Գեղեցիկը» պատկերազարդ հատորիս մէջ: Նման գործ մը որ չկայ մեր մէջ, շատ կարեւոր դասագիրք մը, միշտ խնդրուած է ամէն կողմէ, եթէ կը ցանկաք հրատարակելու, խնդրեմ յայտնէիք Ձեր նամակովն: Հարկ չէ պատկերազարդ ըլլալ, զի խնայողական դիւրամատչելի գործ մը հրատարակելու է, շատ աժան:

Ներեցէք, եթէ շատ ընտանի ոճով կ'առաջարկեմ այս ամէնը: Եւ նոր տարւոյ առթիւ ընդունեցէք իմ ջերմ մաղթանքները խորին յարգանօք:

Հ[այր] Ս[իմոն] Երեմեան

ԳԱԹ, Փուշման Յովսէփ 82, ք.1, ձեռագիր, բնագիր

ՀԱՅՐ ՍԻՄՈՆ ԵՐԵՄԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ԳՐՈՂ ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆԻՆ

Asolo 15 Մարտ 1926

Ազնիւ Տիկին Զ. Եայեան

Մեր ցեղին Պատիւ կը համարիմ այս ներփակ գրութիւնը. *Խարախանեանի մասին կը գրէ Մուսուլի վարչապետին հիմնած «Il Popolo d'Italia» օրագիրը, որ է պաշտօնական օրկանը Ֆաշիստ կառավարութեան: Անշուշտ նպաստաւոր չէ, ըլլալով մոլեգին հակառակ գոմունիզմի, սակայն ամբողջ յօդուածը Խարախանեանի դիւանա-գիտական կարողութիւնը դրուատելով, փառքին լուսապսակը հայ ցեղիս ճակտին զարդն կ'ըլլայ: Գուցէ Խ. Հ. մեր երկրին վարիչներուն անծանօթ ըլլայ այս, եւ ատոր համար Զեր հասցէին զայն կը յղեմ, ուր որ անկէ իմացուցէք:*

Ես Զեր երկիրն վաղուց է որ չեմ տեսած, ոչ մէկ գիրք ինծի յղած էք իմ «Ազգային դէ[մ]քեր» յաջորդ հատորներուս համար, եւ ոչ իսկ Զեր «Ատանայի» կոտորածներու մասին գրած հատորն, զոր վարձատրելու ժիւրիներուն գլուխն եղած եմ ժամանակին, եւ 10 օրինակ գնած եմ եւ տարածած իմ բարեկամներուս: Լսած եմ որ «Երեւանի» մէջ կը գրէք, բայց այդ թերթն ալ ինծի չի գար: Բաշինջախեանի նկարչի մասին «Նոր Փիւնիկ»ի մէջ խօսած ատենս, գնահատական տողեր ունէի Զեր նկարչագեղ ոճի մասին, անշուշտ զայն կարդացիք:

Կը կրկնեմ, Խարախանեանի մասին այս յօդուածը, կ'արժէ թարգմանել եւ հրատարակել:

Ներեցեք որ ազատութիւն առի այսքան մտերմօրէն գրելու յարգանքի բարեկներով

Ձերդ

Հ. Ս[իմոն] Երեմեան

Հասցէս P. S. Eremian Villa Ararat Asolo (Treviso) Italia

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՄԻԱՆՁՆ
ՀԱՅՐ ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾՆԻ
ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵԻՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ

Ա.

ՎԵՆԵՏԻԿ
յժԹ ՀՈՒԻ ՌՁՀԶ ԵԼ Ի 28
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ յԱՄԻՆ 1927

ՄԱՅՐԱՎԱՆՔ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
CONGRÉGATION MÉKHITARISTE

Ամենապատիւ Անդամոց Գերագոյն Հոգեւոր Խորհրդեան
Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի Ողջոյն

Պատիւ կը համարիմ, Արգոյ Տեարք առ Ձեզ դիմելու փոքր խնդրով մը, յուսալով ըղձիցս լրումն միայն ի Ձէնջ գտնել: Շատոնց կը փնտռէի յոյժ հետաքրքրական եւ օգտաւէտ գիրքը մը Ձեր քով լոյս տեսած, եւ դժբախտաբար, չգիտեմ ո՛րպէս իր ժամանակին գրատունս պատիւ չէ ունեցած անով վարդարուելու եւ լուսովը փայլելու: Յիշեալ պատուական գանձն է, այժմու Հայ ճայնագրութեամբ «Ձայնագրեալ Շարական, ի ձեռն Նիկողայոսի Թաշճեան, ի Հայրապետութեան Տ. Տ. Գէորգայ Դ Կաթողիկոսի ամենայն Հայոց, տպ. Էջմիածին, յամին 1877»: Արդ, չուզելով Մխիթարահիմն Ուխտիս մատենադարանն զուրկ տեսնել ազգային այսպիսի գեղեցիկ երկասիրութիւնէ, նկատելով միանգամայն թէ մեր եկեղեցական երաժշտութեան մեծապէս կրնայ նպաստել դիւրութիւն եւ լոյս սփռելով ուսումնասիրաց, մանաւանդ մեզ որ այսպիսի գործերով կը պարապինք սովորաբար, համարձակեցայ խնդրել զայս բարձրապատիւ Գերագոյն Խորհրդոյդ անդամներէն, յազգասիրութիւնդ Ձեր ապաստան. վստահ լինելով որ եթէ երկու օրինակ միայն կան Ձեր քով: «Մին առցի, եւ միւսն թողցի», մէկ Ձեզ պահուի, եւ միւսով՝ հաճեցէք լուսանորոգ հիմնարկուիս գրադարանը պատուել: Առ այս բնականաբար մենք պատրաստ եմք

ըստ Ձեր հրամանին, կամ համարժեք գրքերով փախանակել, եւ կամ Տէրութեանդ կողմանէ նշանակեալ գինը տալ:

Որով եւ յամենայն դէպս շնորհակալ սրտիւ զմեզ երախտապարտ կը կացուցանէք Ձեր ազնուութեան միանգամայն եւ Ձեր հայրենասէր զգացմանց: Միայն պիտի թելադրէի որ յանձնարարեալ եւ ապահովագրեալ ծրարիւ գայն դրկէիք ստորագրելոյս որպէս զի անվտանգ հասնի:

Խնդրոյս լրման յուսալից ակնկալութեամբ, սուրբ եւ շնորհազեղ օրհնութեանցդ եւ աստուածահաճոյ աղօթից հայցմամբ, եւ ամենայն բարեաց եւ յաջողութեանց որ յօգուտ եւ ի շինութիւն Ազգիս եւ հայրենեաց, եւ սուրբ կրօնից անկեղծիկ մաղթանօք, մնամ Ամենապատիւ եւ Սրբազան Տեարցդ իմոց եպիսկոպոսաց եւ վարդապետաց, նա մանաւանդ Սրբազնագոյն եւ Վեհափառ Կաթողիկոսին եւ Հայրապետին ամենայն Հայոց:

Ամենախոնարհ եւ նուաստ ծ[առայ]
Հ. Գրիգոր Սարգսեան
Միանձն Մխիթարեան

Յ.Գ. – Պիտի խնդրէի ըստ կարելւոյն փութով հաճէիք պատասխանել նամակիս: Ն.

ՀԱԱ. ֆ.409, ց.5182, ք.1,2, ձեռագիր, րճագիր

Բ.

Վենետիկ, 14 Մայիսի 1928

ՄԱՅՐԱՎԱՆՔ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

CONGRÉGATION MÉKHITARISTE

Սրբազանիցդ եւ Պատուական Անդամոց
Գերագոյն Հոգեւոր Խորհրդեան
Մայր Աթոռոյդ Սրբոյ էջմիածնի
Ողջոյն բազում ի Տէր

Սրտիս ամենամեծ հրճուանքով կարդացի Ձեր ազնիւ թուղթը, եւ Ուխտիս ըրած այդ մեծ եւ կարեւոր նուէրին համար՝

երախտագիտական զգացմամբ վառեալ հոգւով՝ շա՛տ շատ ուրախացայ:

Նշանակալից է այս ձօնը երկուստեք եւս. մեր կողմանէ, քանի որ այսու կը ստիպուինք հեռաւոր հայրենակից ժառանգակցայդ յիշատակն աւելի խոր եւ աւելի սերտօրէն դրոշմել մեր սրտից մէջ որպէս զի մշտամրմունջ հանապազախարոյկ աղօթիցս ողջակիզման պահուն՝ Ձեր իղձերն ու նեղութիւններն եւս մատուցանենք առ Աստուած որ տեսնէ, եւ ինքն յամենայնի ողորմի եւ բժշկէ:

Ո՛չ ինչ նշանակալից է այդ եւ Ձեր կողմանէ, նկատելով ի Ձեզ անկեղծ սրտի մը պատրաստական սէրը Մխիթարայ խոնարհ որդւոցս հանդէպ, որդիք՝ որք ըստ մերում կարի, երբեք չեմք կասիր մեր երիցս երանաշնորհ Հօրը գծած վեհ ծրագիրը եւ նուիրական կտակը յառաջ տանելու, լաւութեան եւ գիտութեան ոսկեփետուր անխոնջ թեւերով, ջանալով միշտ հայրենի միտքը, հայրենի դպրութիւնը, հայրենի եկեղեցին եւ հայրենի հարազատ աւանդութիւնները՝ բանիւ եւ գրչաւ եւ գործով, պաշտպանել, նորոգել, վերականգնել, մշակել ու ծաղկեցնել: Զայնագրեալ Շարականն ալ՝ ազգային երգեցողութեան ուսումնասիրութեան նպատակաւ խնդրած էի զոր Ձեր հայրենասէր հոգիք՝ վստահ էի թէ պիտի չմերժէին: Անոր համար առ այժմ հաճեցէք հաղորդել Վեհափառին երախտապարտ սրտիս խորին զգացմանց հաւատարիմ արձագանգն հակիրճ բանիւս թէ «Շնորհակալ եմ»:

Իսկ առաքման եղանակի մասին, թէեւ այժմ իսկ կարեւոր էր մեզ գիրքը եւ յոյժ կարեւոր, սակայն Ձեր ընտրած եւ թելադրած կերպին՝ ես ալ լիապէս համամիտ եմ եւ համաձայն, որովհետեւ ուրիշ միջոցներ, գիրքը կորսուելու եւ կամ գրաւուելու վտանգի կ'ենթարկեն:

Արդ հաճեցէք զայն, ինչպէս կանխաւ հրամայած էիք, յղել մեզ ի ձեռն պատուական միաբանակցիդ Սրբազան Տեառնն Գարեգնի եպիսկոպոսի ի Պարիս, եւ անտի՝ Նորին բարձրաստիճան, խոհականութիւնն, հաճի զայն դրկել յանձնարարեալ ծրարիւ ի Վենետիկ ի մեր վանս նուաստիս հասցէին, եւ ապահով կը հասնի:

Բիւր շնորհակալութիւններ նաեւ ինձ եւ բովանդակ սուրբ Ուխտիս մատուցած եղբայրական մաղթանաց: Որով հայցելով յերկնից Ձեզ յամենայն լո՛յս եւ արիութիւն որովք կարողանաք միշտ յաջող առագաստիւ եւ անմեղկօրէն վաստակել յօգուտ եւ ի շինութիւն բազմատանջ եւ բիւրաղէտ Ասքանագեան Թորգոմաճետ

ազինս, ի փառս Աստուծոյ, ի փրկութիւն հոգւոց եւ ի պարծանս մեծի տանս Հայկայ:

Որով Վեհափառ Հայրապետիդ շնորհագեղ Ս. Աջոյն համբուրիւ եւ Աստուածապարգեւ արեգակնափայլ օրհնութեանցն հայցմամբ, միանգամայն համագումար Սրբազան Արքեպիսկոպոսացդ եւ Պատուական եպիսկոպոսաց եւ վարդապետաց համայն սուրբ եւ Աստուածահաճոյ եւ խնկելի աղօթիցն խնդրուածովք, գրեմ գիս հարցդ վեհից եւ քաջ առաջնորդացդ հօտին Հայկազանց:

Հ. Գրիգոր Սարգսեան
Միանձն Մխիթարեան

ՀԱԱ. ֆ.409, ց.1, գ.5182, ք.3,4, ձեռագիր, քնագիր

Գ.

Վենետիկ, 16 Մարտ 1929

CONGRÉGATION MÉKHITARISTE

ՄԱՅՐԱՎԱՆՔ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Ամենապատիւ եւ Սրբափայլ Անդամոցդ Գերագոյն
Հոգեւոր Խորհրդոյ Ս. Էջմիածնի

Վաղարշապատ

Յետ մատչելու ի համբոյր շնորհագեղ աջացդ եւ պատուական որպիսութիւնն հարցանելոյ, կու գամ յիշեցնել Ձեզ ներկայիս, որ ի վաղուց յետէ [sic] Գերապատիւ Տէրութենէդ խնդրած էի Տեառն Գէորգայ Դ Կաթողիկոսի օրով յէջմիածին՝ Հայկական խաղերով լոյս տեսած շարականը, եւ անցեալ տարւոյ թղթով մը գայն ընդունելու խոստման արժանացած էի ազնուափայլ Վեհութեանդ կողմանէ, ի զարդ Մխիթարեան մատենադարանիս, եւ ի վայելումն ուսումնասէր մանկանց Ս. Ուխտիս: Սոյն գանձը պիտի հասնէր մեզի ի ձեռն բազմավաստակ Գարեգին Սրբազան եպիսկոպոսին,

որուն գալուստը՝ չգիտեմ որպէս՝ խափանուած լինելով, գիրքն ալ չեկաւ. անշուշտ ճանապարհի վտանգներն են որ առաքումը կ'արգելուն: Սակայն երաժշտական հարցին մէջ մեծ կարեւորութիւն ունի այն, մանաւանդ Հայ եկեղեցական երաժշտութեան վրայ խօսելով. նոյն տեսակ աշխատութեան կատարեալ գործ մը ի գլուխ հանելու համար, անհրաժեշտ հարկը կը զգացուի նոյն Շարականին: Եւ ահա այդ հարկն է որ զիս կը մղէ այսօր վերստին յիշեցնելու Ձեր Ամենապատիւ Տէրութեան, որ հաճէիք փութացնել առաքումը: Որովհետեւ մեր միանձանց մին Հայ երաժշտութեան վրայ աշխատութիւն մը, թանկագին երկ մ'ունի, սակայն յիշեալ Շարականն իր գործին լրման մեծ կարեւորութիւն ունի: Ուստի պիտի խնդրէի, որ ըստ կարելոյն փութով առաքէիք զայն նուաստիս հասցէին, յանձնաքարեալ եւ ապահովագրեալ ծրարիւ, եւ կը յուսամ այսպէս անպայման կը հասնի: Միայն պիտի փափագէի որ ճանապարհի ծախսը Ձեր վրայ չծանրանալու համար, հաճէիք զայն ստորագրելոյս նշանակել, եւ ես շնորհապարտ՝ կը հատուցանեմ: Շա՛տ, շատ կը ցաւինք սակայն, որ արտաքին պարագայից բերմամբ, մենք ալ, նման նուէրով մը պիտի չկարենանք փոքր փոխարինութիւն մ'ընել Ձեր այդքան ազնիւ ու հայրենասէր վարման մեծին Մխիթարայ խոնարհ որդւոցս հանդէպ, անոր տեղ ընդունեցէք, Սրբազումար Տեարք, մեր սրտից անկեղծ ու սիրովառ շնորհակալութիւնները:

Առ այժմ ուրիշ գրելիք չունիմ, բայց միայն բոցեռանդ հոգւով մաղթելով Ձեզ երկնից ամենայն բարեաց առատապարգեւ ցօղը. կը հայցեմ միանգամայն յաջողութիւն, առողջութիւն եւ անդորրութիւն մշակացդ Ս. կրօնից ի պայծառութիւն եկեղեցւոյ եւ ի պարծանս Ազգիս: Համբուրիւ Աջոյն Վեհափառ Տեառնն, մնամ Տեարցդ

Ն. Ծ. Գ.

Հ. Գրիգոր Սարգսեան
Միանձն Մխիթարեան

ՀԱՅՐ ՔԵՐՈՐԷ ԶՐԱՔԵԱՆԻ
ԵՐԿՈՒ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԱՐՇԱԿ ԶՊԱՆԵԱՆԻՆ

Ա.

21 Rue Blanche
Փարիզ, 14 Սեպտեմբեր 1928

Մեծապատիւ Տէր
Արշակ Զօպանեան

Աստ

Մեծապատիւ Տէր,

Տ. Գ. Նորատունկեան փափաքելով որ իր տանը մէջ հաւաքոյթ մը տեղի ունենայ յառաջիկայ երկուշաբթի, 17 սեպտ. ժամը 16.30ին պիտի խնդրէի որ դուք եւս ներկայ գտնուէիք այդ մեր խորհրդակցութեան, ինչպէս որ հրաւիրուած են Քէտիճեան Վարդապետ, Տոքդ. Թորգոմեան, Տիար Աղամ Ինճիէեան եւ փաստ. Սինապեան:

Վստահ որ այս հաճոյքը Հ. Յովհան վ. Աւգերի եւ ինծի պիտի պատճառէք, մնամ յարգանք եւ ողջոյններով մեծապատիւ Տեառնդ

Խ. Ժ.

Հ. Քերորէ Ա. Զրաքեան
Կ[րօնաւոր] Մ[խիթարեան]

Բ.

21 Rue Blanche
Փարիզ, 19 Սեպտեմբեր 1928

*Մեծապատիւ Տէր
Արշակ Զօպանեան*

Մեծապատիւ Տէր,

Այսօր առիթն ունենալով Տ. Գ. Նորատուռնեանի հետ տես-
նուելու, փափաքեցաւ որ ամսուս 24ին երկուշաբթի օր ժամը
4.30ին անգամ մը եւս հաւաքուինք, իր տունը, որ զԶեզ ողջու-
նելու հաճոյքը պիտի ունենամ:

*Յարգանաց հաւաստեօք եմ Մեծապատիւ Տեառնդ
Անձնուէր*

*Հ. Քերոբէ Ա. Զրաքեան
Կ[րօնաւոր] Մ[խիթարեան]*

ԳԱԹ, Ա. Զօպանեան 5859-60 Իր, Բ-2, ձեռագիր, բնագիր

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍԲ. ԷՋՄԻԱԾՆԻ
ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵԻՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԻ
ԳՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՐ ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ

9 Հոկտեմբեր 1929

*Բարձրապատիւ Հ. Գրիգոր Սարգսեան
Միաբան Ս. Ղազարու Վանից*

*Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը օգտուելով յարմար առիթից
նորապսակ Տ. Տաճատ եպիսկոպոս Պասմաճեանի ձեռքով Կ. Պօլսոյ*

պատրիարք Մեսրոպ Արքեպիսկոպոս Նարոյեանին ուղարկեց Զայնագրեալ շարականը Զեզ հասցնելու համար:

Խորհուրդս յայտնելով իր եւ Մայր Աթոռի միաբանութեան շնորհակալութիւնը արտայայտած բարեմաղթութեանց համար խնդրում է Զեզ թարգման հանդիսանալ եւ Մայր Աթոռի միաբանութեան եղբայրական մաղթանքները յայտնել Ս. Ղազարու պատկառելի միաբանութեան անդամներին:

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը յուսով է, որ գրքի ստացման մասին ժամանակին կը տեղեկացնէք:

Անդամ Գերագոյն Հոգեւոր Խորհրդի
Խորէն (ստորագրութիւն)

ՀԱԱ. ֆ.409, ց.1, գ.5182, ք.7, ձեռագիր, բնագիր

ՀԱՅՐ ՆԵՐՍԷՍ ԱԿԻՆԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

ի Վիեննա, ի 28ում ֓ետրուարի 1929

Վեհափառ Տէր.

Յեւթներորդում մասոյս հասի բարեաւ ի Մայրավանս իմ, ի խնդրութիւն եղբարցս հարազատաց:

Յեղակարծումն եհաս ինձ ելանել յէջմիածնէ (ի 28ում Ապրիլի). նմին իրի իսկ չեղեւ ինձ հնար ի մեկնելս իմ գալ յողջոյն հրաժեշտի Վեհափառ Տեառնդ իմ եւ Հօր, եւ բազորդ բաժանորդ լինել Հայրական եւ աստուածատուր օրհնութեանդ: Աղաչեմ ի չքմեղս համարել զակամայ մեկնելս իմ եւ գոնեայ ի հեռաւոր բաշխել ինձ գօրհնութիւնդ հայրական:

Զեռամեայ ժամանակ հիւրընկալ ասպնջական եղեւ նուաստութեանս իմոյ վեհափառութիւնդ սիրելի, եւ եղբայրական սիրով ժողովեաց զիս Միաբանութիւնդ մեծարոյ ի մէջ իւր եւ չետ ինձ զգալ զտարաշխարհիկ ի զպանդխտական աւուրս իմ, յորս դեզերեցայ ի բազմաժողով Զեռագիրս բարեպաշտօն նախնեաց մերոց,

առ ի ժողովել կուտել ի մի վայր զբազմավաստակ արդիւնս կորովի մտաց նոցա ի բարգաւաճանս տոհմային գրականութեան:

Շնորհակալու մտօք Հայիմ յետս ընդ երջանիկ կեանս իմ ի մէջ սիրազօղ Միաբանութեանդ եւ յիշեմ զսիրոյ եւ զմեծարանաց նշանակս, յորս վայելեցի ես զբովանդակ ժամանակ պանդխտութեանս իմոյ յէջմիածին:

Հաճեսջիք, Վեհափառ Տէր եւ Հայր, ընդունել զհաւաստիս երախտագէտ զգածմանց իմոց վասն ամենայն նշանակաց ասպնջականութեան եւ հայրական գթոյն եւ եղբայրական խնամոցն:

Տա՛յր Տէր եւ ինձ դէպս երախտահատոյց լինել փոխանակ ընդ աղեացդ եւ հայենատուր ասպնջականութեանդ: Եւ եթէ չըհասանիցէ ինձ հատուցանել զտրիտուր երախտեացդ, յողոքս անկեալ մաղթիմ յԱմենատեառնէ, լինել երկնաձիր շնորհօք ընդ իմ երախտահատոյց Վեհափառ Տեառնդ եւ Մայր Աթոռոյդ:

Մատուցեալ խոնարհաբար ի համբոյր սուրբ Աջոյ Վեհափառ Տեառնդ, աղերսեմ միւսանդամ զհայրական օրհնութիւնդ ի վերայ իմ եւ յայտ առնեմ եթէ իմ հաւաստեօք շնորհակալու մտաց եւ որդիական մեծարանաց

Ամենապատիւ եւ Վեհափառ Տեառնդ

Ն[ուաստ] Ո[րդի]

Հ. Ներսէս Վ. Ակիւնեան

Անդամ Մխիթարեան Միաբանութեան

Ամենապատիւ եւ Վեհափառ Տեառն

Տեառն Տեառն Գէորգ Ե

Կաթողիկոսի Ամենայն Հայոց

ի Ս. Աթոռն Էջմիածնի

ՀԱՅՐ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԵԼՔԻՍԵԴԵԿԵԱՆԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽՈՐԷՆ ՄՈՒՐԱԴԲԵԿԵԱՆԻՆ

ՄԽԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ
Ի ՎԻԵՆՆԱ

KONGREGATION
DER MECHITARISTEN IN WIEN
թ. 21/30

Վիեննա, 5 Փետրուար 1930

Առ Սրբազան
Խորէն Արքեպ. Մուրադբեկեան

Էջմիածին

Ընդունեցայ Ձեր Յուն. 1 թուակիր պատուական նամակը հանդերձ շնորհալորութեամբ Վեհափառ Կաթողիկոսի եւ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի սրբազան Անդամներու կողմէ:

Անկեղծ ու խորին շնորհակալութիւնս կը յայտնեմ անձամբ եւ Մխիթարեան Միաբանութեան կողմէ բոլոր այն մաղթողական ու գնահատիչ արտայայտութեանց, զորոնք Դուք կ'ուղղէք Միաբանութեանս իբրեւ թարգման Վեհ. Կաթողիկոսի եւ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի: Ընդունեցէք Արհիապ. Սրբազան մեր Միաբանութեան եւ իմ ջերմ մաղթանքները եւ բարեհաճեցէք հաղորդել զանոնք նաեւ Վեհ. Կաթողիկոսին եւ Հոգեւոր Խորհուրդի բոլոր Անդամոց: Խնդրենք ամէնքիս Աստուծոյն որ առաջիկայ տարին ըլլայ մեր տառապեալ Ազգին համար բարբախտ ու խոստմնայից տարի մը, որուն յաջորդեն նման տարիներ ի լրումն բարօրութեան հայ Ազգին:

Յայտնելով շնորհակալիքս նաեւ Ձեր առաքել բարեհաճած 4 օրինակ օրացոյցներու համար, ցաւով պէտք եմ սակայն ծանուցանել Ձեր Սրբազնութեան որ անոնք մեր ձեռքը հասած չեն. արդեօք առաքումն ապահովագրուած չէ՞ր:

Ընդունեցէք, Գերապատիւ Սրբազան, յարգանացս խորին հաւաստին, որով եմ ամենայն յարգանք:

Գերապատիւ Սրբազնութեանդ
 Խ[ոնարհ] ծ[առայ]
 Հ. Վարդան վր. Մելքիսեդեկեան
 Աթոռակալ-Առաջնորդ Մխիթարեան Հարց-

ՀԱԱ. ֆ.409, ց.1, գ.5066, ք.6 , տպագիր, րմագիր

ՀԱՅՐ ՍԻՄՈՆ ԵՐԵՄԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ
 ՀՐԱԶ ԵՐՈՒԱՆԴԻՆ

Փատովա
 16 Յունուար 1930

Պաշտելի Բարեկամս Հրաչ Սիրելի

Սինայի բարձունքէն հասած կը համարիմ Ձեր ամէն մէկ ակնարկութիւնները: «Պայքարի» մենաշնորհը կը մնայ այդ ա-
 նունս, եւ այլեւս ո՛չ ուրիշներուն բացարձակապէս. փոխարէն կը
 խնդրեմ եւ խնդրելով կը պահանջեմ ծածուկ մնալ, ինչպէս մինչեւ
 ցարդ: Իրաւցնէ կարօտ կը քաշէի Ձեր երկտողին. սպասելու է Նոր
 Տարիներու որ արժանի ըլլամ անոնց: «Խաֆիեն»ի հեղինակին կը
 վերանորոգեմ շնորհաւորութիւններս, հոս ալ որ զայն բացաւ
 զմայլելով շարունակեց եւ աւարտեց ընթերցումը: «Պայքար»ի
 խմբագրութեան միւս հրատարակութիւնները ինչո՞ւ ինծի չեն
 դրկուիր: Յարգելի Տիգրանեան ալ զիս մոռցաւ դադրեցաւ, դադ-
 րեցուց իր «Կրթ. հիմն.» հեղինակութիւնները ինձ դրկելու: Հրա-
 տարակիչները զոհողութիւններ կ'ընեն, բայց պրոպականտ ընել
 չեն գիտեր, իրենց եփածը իրենք կը թափն. «Եփեցինք, թափե-
 ցինք» անոնց կը յարմարի հայկական այդ խօսքը:

Խնդրեմ շնորհակալութիւնս յայտնէք «Պայքար»ի խմբագ-
 րութեան Դեկտեմբերի երեք գրութեանցս ի վարձատրութիւն ճ-
 տուարներուն համար:

Եղբայրական ողջագուրանօք

Ձերդ
 Հ[այր] Ս[իմոն] Երեմեան

Յ.Գ. Թուականէս վերջը, թէ ուրիշ թերթերուն մէջ լոյս
 տեսնեն ծանօթ ծածկանունովս ուրիշ գրութիւններս, ատոնք չատ
 վաղուց դրկածներս պիտի ըլլան: Եւ գուցէ չըլլան ալ: Նոյն

ԳԱԹ, Հրաչ Նրուանդ 133, ք.1,2, ձեռագիր, րմագիր

«ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳԻՐ
ՀԱՅՐ ՆԵՐՍԷՍ ԱԿԻՆԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ՀԱՅԿ ՊԵՐՊԵՐԵԱՆԻՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ ԹԵՐԹԻ

Rédaction de la Revue
“HANDES AMSORYA”
VIENNE (AUTRICHE)
VII, Mechitaristengasse 4

Վիեննա, 11 Ապրիլ 1931

Յարգելի բարեկամ.

Ներողամտութիւն որ ժամանակին մոռցայ յանձնել թղթա-տարի Սկեւռայի Աւետարանը. թղթիս հետ կ'ընդունիք ի միասին:

Շնորհակալ եմ Եղիշի մասին Ձեր արտայայտութիւններուն: Ոչինչ ունիմ ընդդիմութիւն, եթէ այս նկատմամբ գրէք Ձեր տպա-ւորութիւնները: Կարդացիք անշուշտ «Յառաջի» մէջ իմ երկու յօդուածներս նոյն նիւթի շուրջը (սպրդած են հոն մանր վրիպակ-ներ տպագրութեան):

Մեծ Հ. Տաշեան ունի միշտ կորով գրելու. բայց միականի է այժմ. այն ալ ենթակայ վտանգի, այս պատճառաւ ալ հակառակ բուռն փափագի, ստիպուած է զսպել գրիչը: Տարակոյս չկայ, որ պէտք է տօնել անոր Յորբեանը. նա ինքն կամք չյայտնեց 40-եայի համար, բայց յօժար է եթէ փափագին Ազգն տօնել յիսնա-մեան 1938/9-ին: Մաղթենք, որ տայ Աստուած երկարութիւն ա-մաց եւ առողջութիւն հասնելու բարեաւ այս տարւոյն: Ունի սե-ղանին վրայ մեծ աշխատութիւն մը — Տայք — Բարձր Հայք — Սեբաստիա, գրեթէ վերջացած, կարօտ միայն մանր յաւելուածնե-րու: Փափագս է որ օր յառաջ ի գլուխ հանէ այդ աշխատութիւնը եւ տայ տպագրութեան: Ըստ պատմական եւ աշխարհագրական հանգոյցներ լուծուած են հոն: Եթէ Ձեր ժամանակը կը ներէ, նուիրեցէք քանի մը տող այս հոյակապ մտքին: Որչափ խօսուի անոր մասին, քիչ է:

Lehmann-Hauptի գիրքն յիշուած է Հ. Ամ.ի մատենագրու-թեան տեղեկութեանց մէջ, բայց չէ ստացուած մեր Մատենադա-րանին համար: Իսկ Mariesի մասին գրեցինք այնքան, որքան Ազգ-

թերթերէն լսեցինք. կարծեմ չէր յիշուած հոն ցի մասին իր գե-
կուցումէ (Տեղեկատուութիւնը ուրիշ աշխատակցէ մին էր):

Nanի գրուածքն տեսած էի ես Berlin եւ կարեւորները քա-
ղած. ունիմ ձեռքիս տակ յունարէն բնագիրը. ուստի անհրաժեշտ
չէ գաղղ. թարգմանութիւնը, կ'ուզէի ունենալ միայն գրադարանին
համար: Հարկաւորութեան դէպքին կը յուսամ գտնել տեղւոյս
գրադարաններուն մէջ:

Գրեցէք ինձ, ինչ տպաւորութիւն թողուց Եղիշէի մասին
գրածս Հայ գրագէտներու վրայ: Առաջիկայ թուով պիտի հրատա-
րակեմ վերլուծումն Եղիշէի համեմատութեամբ Զ դարու դիպաց
(նաեւ Ե դարու պարագաներէն նկատի առնելով):

Միշտ սիրով

Հ. Ն[երսէս] Ակինեան

ՀԱԱ. ֆ.193, ց.2, գ.90, ք.4, ձեռագիր, քնագիր

ՄԻԽԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱԹՈՌԱԿԱԼ
ՀԱՅՐ ԳԱՐԻԵԼ ՆԱՀԱՊԵՏԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ.
ԷՋՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆ ՄԱՏԹԵՆՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Վենետիկ Ս. Ղազար
23 Մայիս 1932

Արհապատիւ Եւ Սրբազան Տեառն
Մատթէոս Արքեպիսկոպոսի Եւ
Անդամոյ Գերագոյն Խորհրդոյ
ի Ս. Էջմիածին
Թիւ 51

Արհապատիւ Սրբազան Տէր,

Մայր Աթոռի Ս. Էջմիածնի կողմից առ մերս Մխիթարեան
Միաբանութիւն ուղարկուած 1932 օրացոյցների չորս օրինակ ստա-
ցանք մեծ հաճութեամբ, մանաւանդ շնորհապարտ ենք Արհ. Սրբա-
զան Տեառնդ եւ Գեր. Խորհրդոյ Սրբազան Անդամներին, առ Միա-
բանութիւնս ըրած սրտագին եւ քաջալերական մաղթանքներին:

Ուստի թոյլ տուէք, փոխադարձ Ձեր բարձր մաղթանքներին մատուցանել առ Արհ. Սրբազան Տեառնդ եւ Գերագոյն Խորհրդոյ Անդամներին մեր ալ եղբայրական սիրոյ հոգեբուղիս բարեմաղթութիւնները, որով կը հայցենք Աստուծոյ Ձեզ բոլորիդ քաջողութիւն եւ երջանիկ կեանք երկար, կար գորութեան եւ հոգեւոր իմաստութիւն, Գերագոյն Խորհրդով առաջնորդելու Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ զաւակներին, որոնք Ձեր խնամոց յանձնած է Բարեգութ Նախախնամութիւնն, մխիթարելու զանոնք եւ ամբապնդելու Մայր Աթոռի շուրջը ի միութիւն ազգի եւ ժողովրդեան:

Կը խնդրենք բարի լինել ընդունելու նաեւ մեր դոյզն նուէրը վանքիս օրացոյցներից, եթէ հասնին, զի ուրիշ անգամներ յետ ուղարկուեցան:

Նմանապէս «Բազմավէպ»ի խմբագրութիւնն սիրայօժար կերպով նուիրում է Ս. Էջմիածնի գրադարանին մի օրինակ շարունակաբար, եթէ իմացնէք ընդունելու հնարաւորութիւնը, այժմ առ ի փորձ մի թիւ ուղարկում է:

Հաճեցէք Արհ. Սրբազան Տէր, ընդունիլ մեր խոնարհ մեծարանաց անկեղծ հաւաստիքները, նոյնպէս բոլոր հոգեկից եղբայրներիս, եւ խոնարհելով համբուրելու Ս. աջերնիդ, մնամ

Ամենախոնարհ եւ հնազանդ ծառայ ի Քրիստոս
Հ. Գաբրիէլ Նահապետեան

Ընդ. Աթոռ. Մխիթարեան Միաբանութեան
Ի Վենետիկ

ՀԱԱ. ֆ. 409, ց.1, գ.5185, ք.1, ձեռագիր, քնագիր

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍԲ. ԷՋՄԻԱԾՆԻ
ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ՄԻԻԹԱՐԵԱՆ
ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

25 Յունիս 1932

Վենետիկի Մխիթարեան Պատկառելի Միաբանութեան

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը ի պատասխան միաբանութեանդ տարւոյս մայիս 23 թուակիր թ. 51 գրութեան յայտնում

է, որ ուղարկուած օրացոյցները եւ Բազմավէպի մի համարը չեն ստացուել Մ. Աթոռում:

Գեր. Հոգ. Խորհուրդը իւր շնորհակալութիւնը յայտնելով մաղթում է պատկառելի միաբանութեանդ ոյժ ու կարողութիւնն ի շահ եւ ի բարգաւաճումն մեր ազգային գրականութեան:

Անդամներ Գեր. Հոգ. Խոր.

Գարեգին Արքեպիսկոպոս

Վրթանէս Եպիսկ.

ՀԱԱ. Փ. 409, ց.1, գ.5185, ք. 2, ձեռագիր, քնագիր

ՀԱՅՐ ԳԱՐԻԷԼ ՆԱՀԱՊԵՏԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ.
ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ

ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ
ՄԽԹԱՐԵԱՆ
ՎԵՆԵՏԻԿ
ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ
Թ. 107

Վենետիկ Ս. Ղազար յժ Ապրիլի 1933

Գերագոյն Խորհուրդ Եկեղեցական Հայոց
ի Ս. Էջմիածին

ի Հայաստան

Զպատուական նամակն գշնորհեալն Նորին Օծութեան ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին եւ Սրբազան անդամոց Գերագոյն Եկեղ. Խորհրդոյն, ի 10 ամսոյ փետրուարի, ընկալաք յ17 մարտի անցելոյ, եւ յետ աւուրց ինչ հասին նաեւ օրինակքն օրացուցից օրինակքն սակայն փոխանակ հնգից երկուք միայն: Վասն որոյ բազում շնորհակալութիւնս մատուցանեմք, մանաւանդ զգաժեալ իսկ եմք, վասն ազնուախոհ մտացն բարութիւն Վեհափառ Հայրապետին եւ Սրբազան անդամոց Գեր. Խորհրդոյն, որ ի միջի

բազում զբաղմանց, ոչ մոռանալով զՏունն Մխիթարայ Աբբայի յերկրիս յայսմիկ պանդխտութեան, եւ աղօթեն եւ օրհնեն եւ մաղթեն նմա կար զօրութեան եւ յարատեւութիւն գործոց իւրեանց զբաւան եւ զիտական վաստակոց, զորոց ի սկզբանէ ցայսր բոլուն հարեալ է յօգուտ եւ ի լուսաւորութիւն Հայ ժողովրդեան եւ սիրելի մանկաւոյն:

Արդ Գերյարգելի Ընդհանրական Աբբահայրն մեր եւ Վեր. Հարք. Ուխտիս, եւ ես տրուպս, փոխադարձ սիրով եւ համակրութեամբ առ Բարձրեալն մատուցանեմք զմաղթանս մեր եռանդուն ոգւով, վասն հաստատութեան եւ վասն պայծառութեան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, որ յաւուրց անտի Ս. Լուսաւորչին ի ձեռն արժանաւոր յաջորդաց նորին կատարէ մինչեւ ցօրս այս փառօք՝ զԱռաքելութիւն իւր հանդէպ Հայաստան երկրի եւ հարազատ ժողովրդեան: Տացէ Տէր, Վեհափառ Կաթողիկոսին, խորհրդական եւ բարի անուամբն ծանուցելոյ, զերկարութիւն կենաց եւ զքաջողջութիւն, եւ յաւելցէ զիմաստութիւն իւր գտանելոյ ի մէջ ալեաց շաւիղ զգուշաւոր, գնոյն քաջողջութիւն եւ զարիւթիւն ցանկամք Սրբազան Անդամոց Գեր. Եկեղ. Խորհրդոյն, զի յիւրեանց կուսէ իսկ պինդ կալեալ ի դեկէ նաւին Եկեղեցւոյ, սատարեսցեն հասուցանել սաղապաճեմ ընթացիւք ի խաղաղ նաւահանգիստն, յերջանկութիւն մանկանցն Սիոնի եւ ի պարծանս Արամեան ազին:

Ընդ սմին առաքեցաք հաճութեամբ Գերյարգոյ Աբբահօր՝ օրինակս ինչ օրացուցից Վանացս, եւ առանձին օրինակ մի ոսկեգօծ կազմիւ վասն Վեհափառ Հայրապետին, ըղձիւք իմն իբր ի շնորհաւորութիւն առաջիկայ ամին: Իցի՛ւ ոչ պատահէին խոչք եւ խոլթք անցելոց ամաց եւ ոչ յետս դարձուցանէին:

Թոյլ տուք մեզ որդիական մեծարանօք մատչել ի համբոյր աստուածարեալ աջոյ նորին Օծութեան Վեհափառ Կաթողիկոսին եւ Սրբազան անդամոց Գերագոյն Խորհրդոյն եւ յանձն արարեալ զմեզ ի մաքրափայլ աղօթս ամենեցուն, մնամ

Բոլորանուէր Խոնարհ Որդի

Հ. Գաբրիէլ վ. Նահապետեան

Ընդհանրական Աթոռակալ Մխիթարեան Միաբանութեան

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԽՈՐԷՆ ՄՈՒՐԱԴԲԵԿԵԱՆԻ
ԳՐՈՒԹԻՒՆԸ
ՀԱՅՐ ՆԵՐՍԷՍ ԱԿԻՆԵԱՆԻՆ

1 Յուլիս 1933

Թ. 1141

9 2/33

Բարձրապատիւ Հ. Ներսէս Ակինեան
Մեղուաջան Միաբան Մխիթարեան Ուխտին

ի Վիեննա

Ստացել ենք Ձեր երկու ստուար եւ նորութիւններով հետաքրքրական աշխատութիւնները,

ա) - Եղիշ վարդապետ եւ իւր պատմութիւնն Հայոց պատերազմի եւ

բ) - Դասական հայերէնը եւ Վիեննայի Մխիթարեան դպրոցը:

Օրհնում ենք Ձեր աշխատանքը եւ մաղթում, որ նոյնպիսի եռանդով եւ տոկունութեամբ շատ երկար տարիներ աշխատել կարողանաք ու առաւել արդիւնաւոր հանդիսանաք Ձեր հմտալից եւ օգտակար երկերով:

Հայրապետական օրհնութեամբ եւ
ողջունիւ

ՀԱԱ. ֆ.409, ց.1, գ.5066, ք.7 , տպագիր, րնագիր

ՀԱՅՐ ՍԻՄՈՆ ԵՐԵՄԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ
ՄԻՀՐԴԱՏ ԹԻՐԱՔԵԱՆԻՆ

ա/թ

Ա.

Կոչնակի Վեր. Խմբագրապետ
Մեծայարգ Բարեկամ

Կը խոստանամ վիպակներ հասցնել Կոչնակին, առիթն է ըսելու, մանաւանդ խնդրելու Ձեր յարգելի վերապատուելիութենէն, որ իմացնէք պատ. Թիրաքեանի որ ես իր հայրը տղայ հասակէս Տրապիզոն ճանաչեր եմ եւ զայն սիրած եմ մանկունակ անկեղծութեամբ. Ազգային վարժարանի իմ ընկերներու հետ ան մեզի համար պաշտելի ուսուցչապետ մը եղած էր: Եւ այդ պաշտումս ալ աւելի մեծցաւ երբ ես ալ հասակ ու թիւ առի հայ լրագրութեան եւ գրականութեան մէջ: Կարդացի նաեւ նոյն Պ. Միհրդատի ինծի ուղղեալ բաց նամակը, ներողամիտ գտնուեցայ, զի իր հայրը յոյժ սիրած եմ. կու գայ ժամանակը որ կը համոզուի նաեւ ինք այս ըսածիս: Այժմէն խնդրեմ բարեւէք զինքը իմ կողմէս, եւ յայտնէք իմ խնդակցութիւնս իր Ֆիրտուսի վրայ գրած յօդուածներու շարքին զմայլելի յաջողութեան համար: Սէր ու յարգանք Ձեզի, Տ. Աւագեանի եւ Մոմճեանի

Հ[այր] Ս[իմոն] Երեմ[եան]

Բ.

Venezia Ai Carmini
Collegio Armeno
9 Մարտ 1936

*Մեծապատիւ Տիար Մ. Յ. Թիրեաքեան
Թանկագին Բարեկամ*

Անհուն հրճուանքով կարդացի Ձեր անկեղծ գրութիւնը, ու դուք զիս հեռուն տարի ետ դարձուցիք Տրապիզոնի «Ազգային վարժարան»էն ներս մտցուցիք, ինձ ցոյց տուիք մեր պաշտելի Թիրեաքեան ուսուցիչը, դէպ ի Արեւելք դարձած «Տէր Կեցո՛ղ հայ» սկսայ երգել իր առաջարկութեամբ, կարծես երգիչներուն խմբին մէջ էին Սարգիս Երկայնեան եւ Մախոխեան նկարիչները ու Հայկ Թիր[ե]աքեան ... Ինչ օրեր, անմոռանալի օրեր ... Որքան բախտաւոր եղայ որ դուք «Կոչնակ»ի մէջ այդ Ձեր բաց նամակով դառնանոյշ նամակով զիս արթնցուցիք իմ յիսնամեայ քունէն: Որքա՛ն պիտի հրճուէի թէ իրօք քչիկ մ՛ալ ապրէի եւ կարդայի Ձեր թարգմանած «Շահնամէն» ու «Հաֆըզը»: Ապահով եմ որ ո՛չ մէկը Ձեզի չափ կրնայ ձեռնհաս ըլլալ թարգմանութեան յաջողութեան մէջ: Արժանաւոր հօր, արժանաւոր յաջորդն էք դուք սիրելի Թիր[ե]աքեանս, եւ այս ինձ ուրախութեամբ կը հպարտացնէ:

Ձեր գնահատումին շատ շնորհակալ եմ, գիտեմ որ անկեղծ էք, որով կ'արժարժէք Ձեր այդ շունչին մաքուր տպաւորութեան տակ՝ շիջանելու մօտ իմ լապտերը կ'ոգեւորի ու չ'ուզեր մարիլ: Ո՛վ սիրելիս, դեռ ինչե՛ր կան որ չեն կատարուած, դժբա՛խտ մեր ազգը, փոքր, սակայն իրաւցնէ մեծագործ ազգ. եւ միւս ամէն ազգերու օրինակ ենք. մինչ մեզմէ օրինակ առնողներ չկան այլ մեր արիւնը խմողներ ... Ես կը հաւատամ որ մենք կ'ապրինք ոչ Հայաստանէն դուրս, այլ ներսը, զի հոն մեր արմատը նոր թաղողը Աստուածն ունի ինքն է, ոչ Համատ կամ Քէմալ:

Համբոյր ճակտիդ եւ հօրդ շիրմին ...

Հ[այր] Ս[իմոն] Երեմ[եան]

Գ.

17/12 Դեկտեմբեր 1936
Վենետիկ

Շատ Սիրելի Տիար Մ. Թիրեաքեան
Բարեկամս

Կաղանդի նուէր ընդունեցէք իմ այս ստուգաբանութեան մէկ քանի շատ համեստ էջերն, որոնք շարադրուած են Ձեր բարեյիշատակ Հօր՝ մտքի մեծարժէք ակունքներով: Ես միջոց չունիմ գրածներս ստուգել, ստուգաբանական դրութիւններով, զի չունիմ այն գիրքերը որոնք կարելոր են. ես կարդալով Ձեր ստուգաբանական գրութիւնները՝ համոզուած եմ, որ Դուք միայն կարող էք եթէ արժէք կը գտնէք իմ այս գրութեանս մէջ, Ձեր քննութեան ենթարկել զայն ազատօրէն կրնաք դատել ու դատապարտել քննութիւններս, զի կը կանխեմ ըսելու որ այն աղբիւրները՝ ինչպէս «Սանսկրիտ Անգղ Քերականութիւնը» եւ Ձեր Հօր «Արիաճայ բառարանը» բարեկամէ մը պատահաբար ձեռք անցուցի մէկ քանի օրուան համար, եւ զանոնք իրեն դարձուցի, որով քննութիւններս բնականաբար ակոյսփոյ եղան:

Կը հաստատեմ իմ գրութիւնս զոր Ձեզի հասցուցի անցեալ տարի «Կոչնակ»ի շնորհիւ:

Կը նորոգեմ կաթոգին սքանչացումս Ձեր անկեղծ բարեկամութեան, միշտ սիրով ու սրտով:

Հ[այր] Ս[իմոն] Երեմ[եան]

ԳԱԹ, Մ. Թիրեաքեան 303, ք. 3, ձեռագիր, քնագիր

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԱԲԲԱՅ
ՍՐԱՊԻՈՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՈՒԼՈՒՀՈՃԵԱՆԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ՝
ՄՈՒՐԱՏ ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ
ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԸ ՆՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ
ՄԽԻԹԱՐԵԱՆ
ՎԵՆԵՏԻԿ
ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ
Թ. 335-8

Վեներաբիլ Ս. Ղազար 22 Յուլիս 1936

Առ Վեհափառ Տէր Տէր Խորէն Ա. Կաթողիկոս
Ամենայն Հայոց

ի Ս. էջմիածին

Վեհափառ Տէր.

Այս տարի Մուրատ-Ռափայէլեան մեր կրթական հաստատութիւնները կը բոլորեն իրենց գոյութեան Առաջին Հարիւրամեակը:

Թէ որքան մեծ եւ նուիրական եղած է անոնց դերը եւ կը շարունակէ ըլլալ մեր Ազգային կրթական եւ մշակութային մարզին մէջ եւ թէ ինչպէս անոնք եղան մեծին Մխիթարայ ծրագրած Ազգային Վերածնութեան փողերն ու առաքեալները քաջածանօթ է ամբողջ Հայ ազգին:

Երախտագիտութեան եւ պարծանքի խոր ըմբռնումով արտասահմանի Հայութիւնը եւ մանաւանդ մեր նախկին Սաներու պատկառելի շարքերը ջերմօրէն փափագեցան որ առանց յիշատակութեան չանցնի այս պատմական թուականը:

Եթէ պատիւ մըն է այդ Միաբանութեանս եւ Մուրատ ու Ռափայէլ Բարերարներուն, սակայն արդիւնքն եւ փառքը ամբողջ Հայութեան համար են: Եւ ատոր համար իսկ համարձակեցանք քաջալերել եղած դիմումները եւ կազմակերպեցինք Դարադարձի չքեղ եւ հանդիսաւոր տօնախմբութիւն մը, որ տեղի պիտի ունենայ առաջիկայ օգոստոս ամսուն 16ին եւ յաջորդ օրերուն:

Եկեղեցական արարողութեամբ եւ հանդիսաւոր Ս. Պատարագով եւ գոհարանական աղօթքով պիտի սկսին հանդէսներն ի Ս. Ղազար: Ապա Գրական-Գեղարուեստական մասը Մուրատ-Ռափայէլեան Վարժարանին մէջ ի Վենետիկ, նախագահութեամբ Արքայական Սաւոյիոյ Տան բարձրապատիւ Ֆերտինանտ իշխանին եւ մասնակցութեամբ Հռոմի եւ քաղաքիս եկեղեցական բարձր անձնաւորութեանց, ինչպէս նաեւ Պետական, քաղաքական եւ գինուորական եւ Ակադեմական ներկայացուցիչներուն եւ մեր նախկին Սաներուն եւ Արտասահմանի Հայութեան կեդրոնական մարմիններու ներկայացուցիչներուն:

Վեհափառ Տէր, վստահ ենք թէ ոչ միայն հոգւով միացած մեզի հետ, այլ եւ Ձեր խրախոյսն եւ ի հարկին կը հաճիք նշանակել ներկայացուցիչ Ձեր Վեհափառութեան, ինչ որ մեզի ամենամեծ քաջալեր պիտի ըլլայ եւ ուրախութիւն մեր մօտ եւ հեռուէն մեզի մասնակից Հայութեան:

Լիայոյս մեր ջերմ փափաքին սիրալիր ընդունելութեան Ձեր Վեհափառութեան կողմէն, այժմէն կը յայտնենք մեր ամենախորին շնորհակալութիւններն եւ յարգանքները, մաղթելով Ձերդ Վեհափառութեան եւ Ձեր բոլոր գործակիցներուն արեւջատութիւն եւ ամենայն բարիք յԱստուծոյ:

Ձերդ Վեհափառութեան

**Ամենախոնարհ Ծառայ
Սրապիոն Վ. Ուլուհոճեան
Հնդ. Աբբայ Մխիթարեան Միաբանութեան**

ՀԱԱ. ֆ. 409, ց.1, գ. 5191, ք.1-2, րճագիր, մեքենագիր

ՀԱՅԿ ՊԵՐՊԵՐԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ
«ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳԻՐ
ՀԱՅՐ ՆԵՐՍԷՍ ԱԿԻՆԵԱՆԻՆ

7 Սեպտեմբեր 1936

Գերյարգելի Հ. Ներսէս Ակինեան

Յարգելի բարեկամ,

Արձակուրդէ վերադարձիս, շնորհակալութեամբ ստացայ Ձեր գրութիւնը Մովսէս Խորենացիի մասին, զոր հրատարակած էիք

Վինչեր Զայթչրիթի մէջ եւ ուրիշ օրինակ մը ուզած էի Փրոֆ. Մանանդեանի ղրկելու, եւ թերեւս օրինակ մըն ալ ինծի համար: Մանանդեանի օրինակը տակաւին չղրկեցի, բայց թերեւս Աւետիք Խահակեանին միջոցաւ ուղարկեմ, եթէ Վենետիկէն ճամբայ չելլէ մինչեւ սեպտեմբեր 15: Ներկայ պայմաններուն մէջ, ուղղակի իրեն ղրկելու կը վարանիմ: Ամէն պարագայի մէջ, ապահով միջոցով մը իրեն կը հասցնեմ:

Առիթէն կ'օգտուիմ ձեզի երկու խնդիրներու մասին գրելու համար.

1. ՀԱ-ի 1932ի 7-9 թիւին մէջ հրատարած էք Սիմէոն Դպիր Լեհացիի ուղեգրութիւնը, որ շատ կարեւոր է: Շատ հաւանական է որ անոր մէկ մասը (Կ. Պոլսոյ նկարագրութիւնը) ֆրանսերէն թարգմանեմ, իր պարունակած կարգ մը նոր տեղեկութեանց համար: Առ այժմ կը խնդրեմ միայն ինծի ըսել թէ արդեօք ուղղադրական սխալ մը չկա՞յ էջ 473 ՃԷՄԶԱԽԱՆԱՅ (Հին Պատրիարքարան) գրութեան մէջ: ՃԷՄԶԱԽԱՆԱՅ բառը ոչ ոքի ծանօթ է, եւ օտար բարեկամ մը, որ մասնաւորապէս կը հետաքրքրուի այդ հատուածով շատ կը խնդրէ որ ճշդէք այս կէտը, կամ եթէ բառին ծանօթ էք, անոր իմաստը հաճիք տալ:

Երբ թարգմանութեան ձեռնարկեմ, ձեզի ուրիշ տաղտուկներ անտարակոյս պիտի պատճառեմ:

2. Ս. Գրիգոր Լուսաւորչի Խճանկարին մասին ՀԱ. ի մէջ ձեր գրած կարճ յօդուածին մէջ Տէ Ռեպուս Արմենիէ-էն հատուած մը թարգմանած էք, որ Մինեի հրատարակած բնագրին համաձայն չէ: Զեր թարգմանութիւնը իմ վարկածիս շատ ձեռնտու էր, բայց չկրցայ զայն գործածել, երբ Մինեի մէջ տարբեր բնագիր մը գտայ: Արդեօք դուք ուրիշ աղբիւրէ՞ մը թարգմանած էք: Կը խորհիմ որ արդեօք Փարիզի Ազգային Մատենադարանին մէջ պահուած յունարէն ձեռագիրը տարբե՞ր է Մինեի հրատարակածէն: Խնդիրը կը կայանայ «գղունսն Ս. Սոփիայի կից» հատուածին մէջ «կից» բառին վրայ, որ չկայ Մինեի մէջ:

Ասկէ վերջ. կը խնդրեմ որ հաճիք գրել թէ կարելի՞ է գնել հետեւեալները, զորոնք Հայաստանէն կուգեն. -

Հ. Ն. Ակինեան.- Քանի՞ տեսական թուական ծանօթ էր Հայոց: Փարպեցու յառաջաբանի քննութիւնը:

Զայրխեան (Այտընեան) Քերականութիւն:

Երբ ասոնց գիները տաք, Բարեգործականի կողմէ պաշտօնապէս կը գրենք:

Ս. Տէր Յակոբեան գրած է ինծի որ Եզնիկի Ձեռագրին լուսանկարը Հ. Մառիէսէն առնելով ձեզի դրկեմ, եթէ Հ. Մառիէս գործը աւարտած է: Զինքը տեսնելու առիթ չունեցայ վերջերս, բաւական տկար է եւ հաւանական է որ Բարիզէն ալ կը բացակայի: Բայց չեմ կարծեր որ լուսանկարը մեծցուցած ըլլայ:

Ամէն պարագայի մէջ, մօտ ատենէն զինքը կը տեսնեմ եւ տեսակցութեանս արդիւնքը ձեզի կը հաղորդեմ:

Ես ոեւէ լուր չունիմ Սարչիկովսքիի գործին թարգմանութեան հրատարակութեան մասին, անցեալ տարուէն է ի վեր: Ասոր հակառակ քանի մը ամիս առաջ թերթերուն մէջ լուր մը կարդացի որուն համաձայն թարգմանութեան հրատարակութիւնը որոշուած է: Եթէ ուղղակի բանակցութիւն կատարուած է ձեր եւ Մելգոնեան Յանձնաժողովին միջեւ, հաճեցէք զիս տեղեակ պահել:

Կանխաւ յայտնելով շնորհակալիքս ձեր տալիք տեղեկութեանց համար,

Մնամ Ձերդ խորին յարգանքով

ՀԱԱ. ֆ.193, ց.2, գ.90, ք.6, տպագիր, քնագիր

«ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅԻ» ԽՄԲԱԳՐԱՊԵՏ
ՀԱՅՐ ՆԵՐՍԷՍ ԱԿԻՆԵԱՆԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԽՈՐԷՆ ՄՈՒՐԱԴԲԵԿԵԱՆԻՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ ԹԵՐԹԻ

Rédaction de la Revue
“HANDES AMSORYA”
VIENNE (AUTRICHE)
VII, Mechitaristengasse 4

Վիեննա, 5 Սեպտեմբեր 1937

Վեհափառ Տէր,

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ հայագիտական ուսումնաթերթը իւր յիսներորդ տարեդարձին առթիւ պիտի տօնէ իւր 50-ամեայ յոբե-

լեանը: Բարեպատեհ տարեդարձս համարձակութիւն կու տայ ինձ դիմելու Վեհափառութեանդ եւ խնդրելու նորին օրհնութիւնը:

Վեհափառութեանդ օրհնութիւնն եւ գնահատական խօսքերը քաջալերանք պիտի ըլլան ուսումնաթերթիս աշխատակիցներուն եւ ընթերցող-բաժանորդներուն, յառաջ մղելու գեղեցիկ ձեռնարկութիւնը աննկուն յօգուտ տոհմային մշակոյթի եւ ի պարծանս Ազգին:

Մատչելով ի համբոյր Ս. Աջոյն Վեհափառութեանդ, եմ

Վեհափառ Տեառնդ

Ն[ուաստ] Ծ[առայ]

Հ. Ն[երսէս] Ակինեան

Խմբագրապետ Հանդէս Ամսօրեայի

ՀԱԱ. ֆ.409, ց.1, գ.5066, ք.8 , տպագիր, բնագիր

ՀԱՅՐ ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱՊՈԶԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԳԷՈՐԳ Զ ԶԷՕՐԷՔՃԵԱՆԻՆ

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՄԻԱՐԱՆՈՒԹԻԻՆ
Ի ՎԻԵՆՆԱ

MECHITARISTEN CONGREGATION
WIEN
VII/62, MECHITARISTENGASSE 4

Վիեննա, 25 Յուլիս 1946

Առ Վեհափառ Տէր
Տ. Տ. Գէորգ Զ. Զէօրէքճեան
Կաթողիկոս Ամենայն Հայոց

Էջմիածին

Վեհափառ Տէր,

Աշխարհաւեր պատերազմէն ետքը հայրենի հողէն հասած առաջին ուրախական լուրը, ՎԵՀԻԴ արժանաւոր ընտրութիւնը կ'աւետէր Սփիւռքի ցիրուցան Հայութեան: Խորհրդային Հայաստանի բարեացակամ իշխանութեան հաւանութեամբ ու օժանդակ-

կուլթեամբ ամէն կողմէ էջմիածնի դարաւոր Տաճարին մէջ խմբու-
լած պատգամաւորներուն դժուարին չէր այս անգամ յարմարագոյն
ԴէՏ մը գտնել պատմական Աթոռիդ: Վասն զի, Դուք Վեհափառ
Տէր, Ձեր աթոռակալութեան շրջանին յայտաբերած էիք առ այդ
բարձր պաշտօն պահանջուած ամէն էական եւ անհրաժեշտ բարե-
մասնութիւնները:

Թէեւ պարագաներու բերումով, թղթակցութեան հնարաւո-
րութիւնները միայն վերջերս ստեղծուեցան, քիչ մը ուշ, սակայն
ոչ նուազ սրտաբուխ են Միաբանութեան շնորհաւորութիւնները
եւ մաղթանքները որոնց թարգմանն ըլլալու պատիւ ունիմ: Հայ-
րենիքի ցանկալի վերաշինութեան բուռն թափին, ուժեղ ազդակ
մը պիտի ըլլայ սրտերու ազնուացումը կրօնական-բարոյական
սկզբունքներով: Այս հոգն է ահա, որ էջմիածնի, այս խորհրդանիշ
Աթոռին հետ, կը յանձնուի Վեհիդ միաձայնութեամբ հայ մեծա-
գոյն զանգուածի պատգամաւորներէն: Կը մաղթենք, որ երկնային
օրհնութեամբ ու օգնութեամբ Վեհիդ ջանքերը այդ ուղղու-
թեամբ ակադճուն հասկեր պտղաբերեն:

Կրկնելով մեր ջերմ շնորհաւորութիւններն ու մաղթանքնե-
րը, եմ

Վեհափառն Տեառնդ
Աղօթակից Հ. Մեսրոպ վ. Հապոգեան
Արքեպիսկոպոս Կամախու եւ Ը. Աբբայ
Մխիթարեան Միաբանութեան Վիեննայ

ՀԱԱ. Ֆ.409, ց.1, գ.5066, ք.11, տպագիր, րմագիր

ԳՐՈՒԹԻՒՆ ՈՒՂՂՈՒԱԾ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԳԵՈՐԳ Զ. ԶԵՐԷՔՃԵԱՆԻՆ

ա/թ

Վեհափառ Տ. Տ. Գէորգ Զ Կաթողիկոս Ամենայն Հայոց

Ս. էջմիածին

Վեհափառ Տէր

Գիտէք որ անսահման ժամանակին սահման դնող մարդկային
սահմանափակ բնութիւնը, բնութեամբ բաժանական լինելուն, ա-

ռանց բաժանման բան չ'կրնար ըմբռնել. տիեզերական անթուշ
շարժումն ընդ հաշվով ըմբռնելու փորձումը ըրած, բաժնած է
զայն անհամար մանր մասերու, որոյ ուրիշ մէկ մասին, կը մտնենք
այս օրեր որուն Նոր Տարի կը կոչենք:

Վեհափառ Տէր, կը մաղթեմ բոլոր սրտովս որ ներկայ նոր
տարին իրականացնէ Ձեր իղձեր ի շինութիւն Ս. Եկեղեցւոյ եւ ազ-
գին, ի պարծանս հայ հոգեւորականութեան: Եւ ի փառս իւր նա-
խախնամութեան: Փոխանորդ կարգելով ի համբոյր Ձեր Ս. Աջոյն
Խաչակիր Ներսէս Քահանայ Առաքելեան

Յ.Գ. Ներփակ կը գտնէք 6 էջ երկու քարոզներ կրօնաթերթի
մէջ հաճէիք տպել տալ, եւ մեր խնդրանքն զարժանին տնօրինել
հաճիլ:

Ն.Ք.Ա.

Յ.Գ. Վիեննական համաստեղութեան կենտրոնական աստղն,
Գեր. Մեսրոպ Եպիսկոպոս Հապոզեան, Խարբերոցի հանդերձեալ է
այցելել Եգիպտոս եւ Իրան. Յանկա[յ] թերեւս այցելել եւ էջ-
միածնի մատենադարանի ձեռագրերի. եթէ առիթ չնորհուի:

Կարօտ Ձեր մաքրափայլ աղօթից օժանդակութեան

Ն.Ք.Ա.

ՀԱԱ. ֆ.409, ց.1, գ.5066, ք.5, ձեռագիր, քննարկ

ՀԱՅՐ ՄԵՍՐՈՊ ԶԱՆԱՇԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՍՓԻՒՌՔԱՀԱՅ ԳՐՈՂ,
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ ԹՈՐՈՍ ԱԶԱՏԵԱՆԻՆ

Վեներաբիլ 15 Մայիս 1947

ՄԱՅՐԱՎԱՆՔ
ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
CONGREGAZIONE
MECHITARISTA
S. Lazzaro - VENEZIA

Ազնիւ Պարոն Թ. Ազատեան

Պուրիս

Կը յուսամ թէ ստացած ըլլաք առաջին նամակս, ուր կը
խնդրէի Ձեզմէ յօդուած մը ԳԵՂՈՒՆԻԻ համար. ներկայ գրու-
թեամբս կու գամ բնորոշելու այդ յօդուածին նկարագիրը: Յանձ-

նախոժմբը կը փափաքի որ այդ յողուածի նիւթը ըլլայ Կոմիտաս Վրդ.-ը որու մասին Ձեր հմտութիւնը եւ պաշարը արդէն մեզի ծանօթ է եւ դուք կրնաք տալ նորութիւններ որ ըսուած ու գրուած չըլլան, հանելով Պոլսոյ դիւաններէն. անշուշտ կենսագրութիւնը կամ գործերու թողարկումը պարզապէս այնքան չահեկան չէ, որքան անոր կեանքէն, ինչ ինչ դրուագներ որոնք անծանօթ են:

Նմանապէս կը փափաքուէր Կոմիտաս Վրդ.-էն հրատարակել անտիպ կտոր մը նօթաներով, որոնց քիչէն պատրաստել յանձն կ'առնենք:

Հաճեցէք զրկել Ձեր լուսանկարը, գրութեան հետ միասին որ մեր ձեռքը հասած ըլլալու է ամէնէն ուշ Յունիս 15-էն առաջ:

Սիրով եւ յարգանօք

Ի դիմաց յանձնախումբին
Հ[այր] Մեսրոպ Ճանաչեան

ԳԱԹ Ազատեան Թ.152- Քր, ք.1, տպագիր, բնագիր

«ԲԱԶՄԱՎԷՊ»Ի ԽՄԲԱԳՐԱՊԵՏ ՀԱՅՐ ՄԵՍՐՈՊ ՃԱՆԱՇԵԱՆԻ
ՆԱՄԱԿԸ ՍՓԻՒՌՔԱՀԱՅ ԳՐՈՂ ՅԱԿՈԲ ԱՍԱՏՈՒՐԵԱՆԻՆ

RÉDACTION DE LA REVUE
PAZMAVEB
ST. LAZARE – VENISE

Ս.Ղազար, 26 Հոկտեմբեր 1947

Ազնիւ Պարոն Ասատուրեան

Ստացած ենք ժամանակին Ձեր տեսակ մը գրախօսական-ինքնապաշտպանողական գրուածքը մեր Հ. Վահան Յովհանէսեանի գրած մէկ գրախօսականին առիթով Բազմավէպի մէջ:

Նկատի առնելով զանազան պատճառներ մեզի անկարելի է զայն հրատարակել. ետ կ'առաքենք Ձեր հասցէին որպէս զի ուրիշ ո՛ր եւ է թերթի մը մէջ կարենաք լոյս ընծայել:

Խորին յարգանօք

Խմբագրապետ
Հ. Մեսրոպ Ճանաչեան

ԳԱԹ, Ասատուրեան Յակոբ, 663, ք.1, տպագիր, բնագիր

ՀԱՅՐ ՔԵՐՈՐԷ ԶՐԱՔԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՈՒԱՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԻ
ԳԻՏԱՇԽԱՏՈՂ ՅԱԿՈԲ ԱՆԱՍԵԱՆԻՆ

Ա.

22 Օգոստոս 1947

Յարգելի Պր. Յակոբ Անասեան
Երեւան

Ազնիւ եւ Սիրելի Յակոբ,

Դեռ երէկ ինծի յանձնուեցաւ 17 Ապրիլի թուղթդ, Եգիպտոսէ վերադարձիս, եւ գոհութեամբ կարդացի քու մասիդ տուած տեղեկութիւնդ եւ յատկապէս մեր հայրենիքի մշակութային բարձրացումին աջակցելուդ՝ Պատմութեան ինստիտուտի քեզ յանձնած մենագրութեամբ:

Սիրով կը կատարեմ խնդրոյդ երկրորդ՝ Ludolfi գրքին նշանակած հատուածդ արտագրելով, որովհետեւ մեր Մատենադարանին մէջ կը գտնուէր, եւ առ այժմ կը փութամ ներփակ քեզ զրկել: Իսկ առաջինը՝ Vita del Padre maestro F. Domenico եւն մեր քով չունինք, հարկ եղաւ դիմել Biblioteca Marciana, սակայն արձակուրդի օրեր ըլլալուն փակ է Մատենադարանը մինչեւ սեպտեմբերի 1ը:

Եթէ յիշեալ մատենադարանում կամ այլուր գտնեմ խնդրած գիրքդ, կ'ընդօրինակեմ փափաքած պատառիկներդ յօժարակամ:

Տասնըմէկ տարի Եգիպտոսի Աղեքսանդրիա քաղաքը մնալէս վերջ եւ հոն վարժարան մը հիմնելու միսիթարութեամբ. մեր ազգի գաւակներուն ազգային լեզուն ու պատմութիւնը սորվեցնելու նպատակով, կը գտնուիմ այժմ Ս. Ղազարու քաղցր առանձնութեան մէջ: Նամակդ յիշեցուց ինծի անցեալի անմոռանալի օրերը, եւ երբեմնի ընկերներդ իմանալով թէ ուսումնական կեանքի նուիրուած ես, ինծի հետ ուրախ եղան:

Կը յիշեմ դարձեալ թէ անգամ մ'ալ Բարիգում տեսնուեցանք, երբ հոն կը գտնուէի Մուրատեան վարժարանի վերաբացման առիթով:

Մաղթելով քեզ ամեն յաջողութիւն, ողջոյններով եմ

Քոյդ անձնուէր

Հ. Քերոբէ Ա. Զրաքեան

ԳԱԹ, Ամասեան Յակոբ 127, ք.3, ձեռագիր, քննարկ

Բ.

5 Յունուար 1948

Վենետիկ

Յարգելի Տիար Յակոբ Անասեան

Երեւան

Ազնիւ Յակոբ,

Կը փութամ Դեկ. 10-ի նամակիդ պատասխանին, ներփակ զրկելով Ludolfusի գրքէն քեզ հետաքրքրող հատուածին լատին ընդօրինակութիւնը հայերէն երկրորդ թարգմանութեամբ մը, որ շատ աւելի պարզ եւ որոշ է: Եւ որովհետեւ գրքին մէջ ուրիշ ոչ մէկ ակնարկութիւն կայ հայերու մասին, քեզ կը մնայ վերոյիշեալ կտորին մեկնութիւնը, քանի որ դու շատ աւելի ծանօթ ես հայ եպիսկոպոսին ինքնութեան:

Իմ կարծիքով, Հապէշներու Թագաւորին մտերիմ եղող եպիսկոպոսի դաւանանքը ծանօթ է: Հապէշ Արեղաները կասկածով կը նայէին թէ մի՞ գուցէ Մետրոպոլիտ ըլլալու պատուին ձկտէր կամ Հռոմէական դաւանանքէ ըլլար. քանի որ Թագաւորն ալ Հայաստանէն կ'ուզէր բերել տալ. գուցէ համոզուած ըլլալուն, կամ քաղաքավարութեան համար այսպէս արտայայտուելով նոյն եպիսկոպոսին:

Թագաւորին համար ըսուած է թէ Հռոմէական դաւանանքին էր յարած, այլ Հապէշ Արեղաներու վախը ու կասկածն էր նկատմամբ եպիսկոպոսին դաւանանքին, որ գուցէ ստոյգ ըլլալուն աճապարած է եպիսկոպոսը Թագաւորութենէն հեռանալ:

Ինչպէս պիտի տեսնես Ludolfusի այս կտորը Բ գիրք. 19-րդ գլուխ N°, LXV, կը բռնէ 265-266 էջերը, եւ այս հատուածը կը վերջանայ թէ գլուխը եւ թէ երկրորդ գիրքը, հետեւաբար յաջորդ էջերուն մէջ չկայ ուրիշ ակնարկութիւն եւ կը խօսի Հապէշներու սովորութեան եւ յատկապէս թլփատուելուն վրայ:

Կը ցաւիմ հաղորդելու թէ *Bulgarini*ի գիրքը քաղաքիս Ս. Մարկոսի Գրադարանին մէջ եւս գտնելու բաղդը չունենայ, որպէս զի կատարեալ ըլլար օժանդակութիւնս հրատարակելիք մենագրութեանդ:

Երբ պէտք ունենամ մեր Հայրենիքի գրչագիրներէն հատուածի մը օրինակութեան, կամ ո՛ր եւ է ճշտումի մը, գիտեմ որո՛ւ գիմել, քանի որ այնքան ազնուութեամբ սիրայօժար պատրաստակամութիւնդ կը յայտնես:

Ողջոյններով
Հ. Քերորէ Ա. Ջրաքեան

Յ.Գ. Այսօր գրեցի Հռոմ փնտռելու համար *Bulgarini* գիրքը նոյն քաղքի Մատենադարանին մէջ, եւ եթէ գտնելու ըլլամ կը փութամ քեզ հաղորդել:

ԳԱԹ, Ամասեան Յակոբ 127, ք.4, ձեռագիր, բնագիր

Գ.

Ս. Ղազար 31 Մայիս 1965

Ազնիւ եւ Սիրելի Բարեկամ Յակոբ Անասեան

Կը փութամ քեզ աւետել թէ Դանիէլ ասորի վարդապետի Մաղմոսաց Մեկնութեան հայերէն ձեռագիրը գտնուած է Զմմառու վանքին մէջ եւ միքրօֆիլմը այսօր Ս. Ղազարու վանքը հասած է համեմատելու համար մեր ընդօրինակութեան հետ:

Պարտք համարեցայ անմիջապէս հաղորդել քեզ, որպէս զի հանգչի սիրտդ, ինչպէս մերը, վախճալով որ կորսուած ըլլայ միակ ձեռագիրը որ գոյութիւն ունի. համաձայն մեր ներկայ ծանօթութեան:

Երեւանի անկատար ձեռագիրը, առ ի զգոյ՛է լաւագունին, օգտակար կրնար ըլլալ իմ ուսումնասիրութեան, եւ այդ պատճառով ալ քեզ գիմեցի եւ նեղութիւն եւ աշխատանք պատճառեցի, եթէ ցարդ այս իմ խնդրանքով կրցար զբաղիլ եւ արդիւնք մը կրնաս գուշակել, շնորհակալութեամբ եւ սիրով կ'ընդունիմ: Իսկ եթէ զբաղումներով հետեւանքով կարելի չեղաւ հետեւանք տալ

եւ բաղդատել այդ մէկ քանի կէտերը որոնց լուսաբանութեան կը կարօտէի, հոգ չէ, կարելի է զանց ընել, քանի որ ալ եւս ի վիճակի եմ ունեցած տարակոյսներս փարատել Զմմառու ձեռագրով:

Անգամ մը եւս յայտնելով շնորհակալութիւնս ցոյց տուած պատրաստականութեանդ ջերմ ողջոյններ կ'ողողեմ քեզի ծանօթ վանականներու հետ, մաղթելով յաջողութիւններ ձեռնարկներուդ:

Հ. Քերորէ Զրաքեան

ԳԱԹ, Անասեան Յակոբ 127, ք.10, ձեռագիր, բնագիր

Դ.

Ս. Ղազար 22 Յուլիս 1967

Յարգելի Բրօֆ. Յակոբ Ս. Անասեան

Սիրելի բարեկամ,

Այսօր մեր Հ. Եփրեմ Վ. Տէր Ղազարեան, ծանօթ իւր գրութիւններովը, կու գայ Մայր Հայրենիք, Արարատի մաքուր օդը ծծելու, երկու ամիս շրջելու նուիրական վայրերը, եւ գրական յարաբերութիւնը աւելի եւս զօրացնելու Միաբանութեան եւ մեզի սիրելի դարձած գրագէտներու հետ:

Իր ուղեւորութենէն կ'օգտուիմ պատասխանելու յուլիս 6ի նամակիդ հարցումներուն: Կը ցաւիմ սակայն Պետրոս Առաքեալի նման կրկնելու թէ «զամենայն գիշերս աշխատ եղեաք եւ ոչինչ կալաք», որովհետեւ քննեցի մեր դիւանի մէջ նախ Հ. Եղիա վ. Թումանեանի անտիպ գրութիւնները, բայց չկրցայ գտնել Զարբհանալեանի Հայկ. Թարգմանութեանց մէջ ակնարկած (էջ 244) լատին թարգմանութիւնը Ս. Գրքի որ եւ է մէկ մասին:

Բազմաթիւ ու բազմապիսի են մեր յարաբերութիւնները օտարազգի Համալսարանական ուսուցիչներու հետ եւ կը ջանանք գոհացնել ամէնքը:

Որքան փափաքելի էր ինծի քու հարցումներուդ լիուլի պատասխանել, գոհութեամբ տեղեկանալով թէ մատենագիտութեանդ Բ. հատորով կը զբաղիս, շարունակելով մեծ գնահատանքի արժանացած Առաջին հատորը:

Գալով երկրորդ խնդրանքիդ, Նոր Զուղայի մէջ 1650ին կատարուած Աստուածաշնչի թերակատար հրատարակութեան, մեր մատենադար[ան]ի մէջ եւս պակսի ան:

Կը պակասի նոյնպէս 1903ին էջմիածին տպուած Աստուածաշնչի փորձնական պրակը. այնուհանդերձ որ Բագմավէպի մէջ մանրամասն քննադատուած ըլլայ Հ. Կ. Տէր Սահակեանէ 1903ին:

Գալով Հ. Ս[րապիոն] Ուլուհոճեանի Աւետարանի աշխարհաբար թարգմանութեան, 1952 մեծագիր «Աւետարան Յիսուսի Քրիստոսի Աշխարհաբար թարգմանութիւն. Վենետիկ Ս. Ղազար, 1952 էջ 646/ չար 15x9.6 սմ. Թարգմանիչը «Յրկու խօսք» (Յար եւ նման փոքրագիրին 1952)

Իսկ 1960ի հրատարակութենէն օրինակ մը քեզ կը դրկեմ իբր նուէր Հ. Եփրեմ Վ.ի ձեռքով:

Առաքել Սիւնեցիի թ. 1119 նշանակուածը ճիշտն է, սխալ կամ պակասաւոր թ. 111ը.-

Ձերմ ողջոյններով

Հ. Քերոբէ Զրաքեան

ԳԱԹ, Ամասեան Յակոբ 127, ք.11, ճեռագիր, բնագիր

Ե.

Վենետիկ 9 Յունուար 1968

Յարգելի Տիար Յակոբ Անասեան

Սիրելի եւ անմոռանալի բարեկամ,

Մեզի մեծ հաճոյք պատճառեց Հ. Եփրեմ վ.ի եղած ընդունելութիւնը անցեալ աշնան ըրած այցելութեան մեր հայրենիքին. նոյնքան գոհութեամբ մեր եւ քու փափաքդ եւ ծրագիրդ մանկութեան օրերուդ տեսած ու սիրած Ս. Ղազարը այցելելու:

Պիտի խնդրէի, որ Դանիէլ Ասորի վարդապետին Սաղմոսներու մեկնութեան տեղույդ մատենադարանին մէջ գտնուած թէեւ պակասաւոր օրինակին միքրոֆիլմը հետդ բերէիր. Զմմառի վանքին մէջ եղած միակ օրինակին լուսանկարը արդէն ունիմ, կարե-

Լոր հրատարակութեան համար: Փոխադարձ քեզ մեր գրչագրերէն կրնանք փափաքածդ լուսանկարել: Սպասելով հաճելի գալստեանդ սրտագին ողջոյններով, եմ քոյդ անձնուէր.

Հ. Քերոբէ Զրաքեան

ԳԱԹ, Ամասեան Յակոբ 127, ք.12, ձեռագիր, բնագիր

ԱՐՄԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ՀԱՅՐ ՄԿՐՏԻՉ ՊՈՏՈՒՐԵԱՆԻՆ

Mission Arménienne Catholique
Larnaca-Chypre
Adresse:
L'Abbé Arsène Khorassandjian
Curé Arménien-Catholique de Chypre
P. O. B. 152
Rue Kallogreon 6
Larnaca-Chypre

Larnaca le
20 Յուլիս 1950

Գերյարգելի

Հայր Մ. վրդ. Պօտուրեան

Ձեր նամակն ստացայ ու ներփակ զրկեցի մէկ սթէրլինի ստացագիրը պարոն Օննիկ Մահտեսեանին. մէկալ նամակները պրն. Արմադանեանին եւ այլն զրկեցի Գեր. Մեսրոպ վրդ. Թէր-գիեանին մայրը մեռած է. ուստի 2 սթէրլին ու 5 չիլինին ստացագիրը պիտի ճամբէ-Ուստի ի ներկայիս առնելիք տալիք չունինք. կը սպասեմ (2) colis հայ հանրագիտակին որուն հաշիւը վերջը Ձեզի կը ճամբեմ-լատին ժողովրդապետը Խտալիա գնաց օդափոխութեան-իրեն երիտասարդ Ֆրանչիսկեանին օգնեմ կ'որ - պատուական պարոն Սթալինի փուլերը չը մոռնաք ինծի ու պարոն Գրիգոր Պալատունիին - բաւական տաք կ'ընէ - եղբայր -

ինչպէս կը դիմանաք այլ giganteique [sic] աշխատանքին – Bravo – Bravissimo

Արսէն վարդապետ Խօրասանճրեան

ՀԱԱ. Փ. 425, ց. 1, գ. 314, ք.1, ձեռագիր, քնագիր

ՀԱՅՐ ՔԵՐՈՒԷ Ա. ԶՐԱՔԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ՅԱԿՈՒ ԱՍԱՏՈՒՐԵԱՆԻՆ

Վեներտիկ, 3 Յունիս 1950

ՄԱՅՐԱՎԱՆՔ
ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
CONGREGAZIONE
MECHITARISTA
S. Lazzaro - VENEZIA

*Մեծապատիւ Տիար Յակոբ Ասատուրեան
Նիւ Եորք*

Շնորհակալութեամբ ստացանք Ձեր նուիրած հինգ սկաւառակները մեր ժողովրդական երգերուն, այնքան սրտազրաւ եւ յուզիչ:

Հայ-երգին արձագանգը լսուեցաւ Մխիթարի տանը մէջ, ուժգին, ազդեցիկ, հնչուն ձայնով մը, ու մենք անոնց ազդեցութեան ներքեւ է, որ կը բարձրացնենք մեր երախտագիտական ձայնը, ուզելով որ հասնի Ձեզ:

Իսկ սկաւառակներուն կցած Ձեր ընծայական երկու խօսքը, թրթռուն նման երգին, ազնիւ սրտի մը խորէն բխած, եկաւ լրացնելու կարօտակէզ մեղեդիները մեր Հայրենիքէն:

Հաճեցէք Տիար Յակոբ Ասատուրեան ընդունիլ մեր յարգանքներն ու ողջոյնները:

Հ. Քերորէ Ա. Զրաքեան

ԳԱԹ, Ասատուրեան Յակոբ, 663, ք.2, տպագիր, քնագիր

Շարունակելի